



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

516.9.
Armenians
1859

יהוה

INSTITVTIO THEOLOGICA

ANDOVER FVNDATA MDCCCVII.

ΑΚΡΟΓΩΝΙΣ



ΧΡΥΣΤΟΥ

Principles of Moral Science

By H. Mayland

President of Brown Univ.

ՍԿՂԲՈՒՆԻՐ

ԲԵՐՈՅԵԿԸՆ ԳԻՏՈՒԹԵԼՆԵ



ՅՈՐԻՆԵԱԼ Է

Պ. ՍԻՆՆԵՆՑ

ՆԱԻՍԻՆՔ ԳՐԱՆ ԿՐԹԱԼՍԱԾԱՅԻՆ ՅԱՐՄԵՐԿԱՑ

ԲԱՐԳՄԱՆԵԱՑ ՅԱՆՊՂԻՔԱՆԷ

Վ. ԱԻԻՑԻՆ ԿՐԹԱԳԵՑԻՈՆ



ԶՐԳՐՈՒՄ ՑԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՐԹՆ ՍՐԿԱԳՐՈՒՄ



Handwritten signature

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԺՍ

Ի Տ Գ Ն Բ Ն Ի Յ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

1859

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՀՐԵՐ ԵՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԱՇՏՕՒԼԻ



ԵՐԵՎԱՆ 1928

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԵՑ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԱՇՏՕՒԼԻ

Իճապոս-նի-նը գահարներեն ազէի է. և քա-
լոր ցանկալի բաները զէն կընար անոր հա-
ւասարէլ: Արաի . Բ . 11:
Հագէն արգիպոս-նի-նը աղէի զէ : ԺԹ . 2 :

Կ Լ Խ Լ Դ Ո Ւ Ռ Կ Ն

Բարոյական գիտութեան վախճանն է մարդս բարի և առաքինի ընել :

Լ, յս գիտութիւնը՝ մեր բարքն ու վարքը կառավարող օրէնքները այնպէս պարզելու և բացատրելու է , որ կարող ըլլանք հասկընալ՝ թէ ինչ և որոնք են մեր պարտականութիւնները , և թէ զանոնք կատարելու մասին ինչ պատասխանատուութիւններ ունինք առ Լ, ստուած , և առ մարդ :

Լ, յս գիտութեան նպատակն է սրտերնուս մէջ սէր մը զարթուցանել ճշմարտութեան և սրբութեան վրայ . նաև սորվեցունել՝ անձերնիս կառավարելու , զԼ, ստուած պաշտելու և ՚ի սրտէ սիրելու , և մարդոց բարիք ընելու հարկաւորութիւնը . որպէս զի այն ճամբով կարողանանք ձեռք ձգել այն գերաստիճան երջանկութիւնը՝ որուն ընդունակ ենք :

Ո՛ր և իցէ գիրք մը բարոյականի վրայ , եթէ յարմարութիւն չունի զմարդիկ այս յիշեալ վախճանին հասցունելու , բնաւին արժանի չէ բարոյական անունը վրան առնելու , և անպիտան է փզգի մարդկան :

Բարոյականի գրոց և ճառերուն բազմաց մէջ երեցող մէկ մեծ սխալմունքն ու պակասութիւնը այն է՝ որ չեն ցուցընել թէ Սուրբ Իրիքը՝ Լ, ստուածոյ բարոյական կառավարութեան ամենահարկաւոր և խիստ օգտակար միջոցներուն մէկն է՝ կատարելապէս յարմարած մեր բարոյական բնութեան , և բարոյական այն ամէն ճշմարտութեանց

և սկզբանց, որ առանց յերկնից յայտնութեան, այսինքն՝ առանց Սուրբ Կրօնց կ'իմացուին. և թէ՛ խիստ կարևոր է առաքինութեան առաջնորդող շարժառիթներուն մեծ զօրութիւն տալու:

Ճշմարիտ է՝ որ առաքինութեան շատ պարտաքերը և շատ սկզբունքները կրնան գիտցուիլ առանց յերկնից յայտնութեան, բայց նմանապէս այս ալ ճշմարիտ է որ՝ մեր ակորժակները, կիրքերը, և անվայել բաղձանքները ևս առաւել զօրաւոր են սոսկապէս բնական առաքինութեան ո՛ր և իցէ շարժառիթներէն. և հրակապէս կը տիրեն մեր վրայ: Ա՛սանորոյ մարդկային բնութիւնը՝ բարւոյն ըստ մասին գիտութեամբը, և չարին գործածութեամբը, խառնուրդ մը եղած է միշտ:

Ըստ նկատմամբ՝ բնական առաքինութիւնը յար և նման է բնական կրօնից: Ինչպէս՝ բնական լոյսը բաւական է՝ Ըստուծոյ էութեան և ստորագելեաց շատերը ծանուցանելու, բայց տակաւին մարդս երբոր բնութեան լուսոյ թողուած է, միշտ կռապաշտութեան մէջ ինկած է, և բնական կրօնից սորվեցուցածն ալ իր մտքէն գրեթէ բոլորովին դուրս մերժած է:

Սոկրատէս՝ հեթանոսաց բարոյական փիլիսոփաներուն գլխաւորն ու վեհագոյնը, մարդուս բարոյականին անյոյս վիճակը այնպէս զօրաւոր զգաց որ կը պնդէր թէ ոչ ոք կարող է զանիկայ վերանորոգել կամ դարմանել՝ եթէ յերկնից Ըստուածային ուսուցիչ մը չգայ՝ որ երկբայելին որոշէ, և տկար շարժառիթները զօրացունէ:

Իայց հիմա բարոյականի հեղինակ մը որ Սոկրատէսի փնտռած ուսուցիչն ունի, եթէ զանիկայ մերժէ, հեթանոսէ մըն ալ նուաստ է պնայիսին,

և հեթանոսական իմաստութենէ անգամ յեա-
նեալ :

Իարդական գիտութեան շատ գրութեանց ու-
րիշ մէկ սխալմունքն Եւ գրութիւնն ալ այն է որ՝
չին ցուցրներ թէ մարդս անկեալ էակ մըն է . և
նչ միայն Լստուածային յայտնութեան , այլ և
Լստուածային օգնականութեան ալ կարօտ է այն
մարդը բարդական վիճակը ստանալու համար՝ որ
է մեր էութեան գերագոյն վիճակը :

Լստ գիտութեան վրայ գրուած բազմահատոր
գրեանց մէջ հազիւ հազ կամ ոչ երբեք ցուց-
ուած չէ՝ թէ առօրեայ պիտոյքներնուս և ընդու-
նած պարգէններնուս համար ալ , և մանաւանդ՝
անվիճան բարեաց և օրհնութեանց համար
սփէպ և թախանձական աղօթք կարևոր և օգտա-
կար է . որն որ մեր անկեալ վիճակին հարկաւոր
է և անհրաժեշտ :

Յիրաւի ցաւալի է յիշել որ ոչ միայն բարդա-
կանի բազում գրութիւնները այսպէս աղաւաղեալ
են , այլ և շատ ազգեր՝ անոնք ալ լուսաւորեալ , դեռ
արժանաւոր մտադրութիւն չեն ըրած այս ճնաշխար-
հիկ և ամենաօգտակար գիտութեան : Իրենց և
իրենց զաւակացը մտաւորական և նիւթական վի-
ճակին յառաջադիմութեանը և բարեխաւութեանը
համար աշխատանք չեն ինայեր , բայց սրտին
կրթութիւնը այնքան կարևոր չեն սեպեր : Լս-
սիկայ յաւեա ողբալի ճշմարտութիւն մըն է այն
ազգաց վրայ՝ որ նախանձաւորութեամբ մը ար-
թընցած են դարուս լուսաւորեալ ազգաց դաս-
տիարակութեան լուսովը լուսաւորուելու :

Մենք բերկրութեամբ սրտի կը տեսնենք որ
այ Գողովուրդը այս օրուան օրս սկզբնաւորած է

քայլեր առնուք յառաջագիտութեան, և գովելի ջանասիրութեամբ մը կ'աշխատի քան զինքն ռուսաւորեալ և նախահնչելի ազգաց կարգն անցնելու:

Եւ քաղցր յուսով կ'սպասենք ուղիղ ընթացիք յաջողութեանը, և հաստատուն կատարելութեանը հասնելուն:

Եւզգ մը անխտոր ուղղութեամբ անսխալապէս դաստիարակելու համար անհրաժեշտ պայմաններ կան: Որքան յաճախակի վիճակէ՝ ՚ի վիճակ կերպարանափոխ ըլլայ՝ բնաւին չկրնար հասնիլ այն գերագոյն դաստիարակութեան անաղօտ լուսոյն պայծառութեամբը փայլելու. և ճշմարիտ բարօրութիւն վայելելու՝ մինչև որ բնական և յայտնեալ կրօնից անսխալ սկզբանցը վրայ հիմնեալ բարոյական գիտութիւնը առաջին տեղը չբռնէ դաստիարակութեան մէջ:

Եւզգ մը կամ ժողովուրդ մը՝ գիտութեանց ծայրագոյն բոլոր օգուտները քաղելու ալ ըլլայ, տակաւին թերի է իր դաստիարակութիւնը, եթէ այն ուսմանց բարոյական ազդեցութեան տպաւորութիւնը յինքն ընդունելու յարմարացած չէ, նա մանաւանդ՝ եթէ բարոյական գիտութեան նպաստիւքը սրտի վսեմական վիճակ մը ստացած չէ:

Վանզի ուրիշ ինչ գիտութիւն կայ՝ յետ կրօնից, որ այնքան անմիջական է իր պաշտօնը մարդուս լաւագոյն մասին ամենընտիր կարողութեանց մեքենային անխտոր շարժումն տալ, և զանոնք չափու և համեմատութեան շրջանին մէջ՝ ՚ի հնազանդութեան պահել Եւստուածադիր օրինաց՝ ՚ի շաւիղս առաքինութեան և երջանկութեան: Դարձեալ ուրիշ ինչ գիտութիւն կայ՝ յետ կրօնից, որ այնքան կից կապակցութիւն ունենայ

մարդուս հանդերձեալ գերագոյն վիճակին :

Ոմանք գիտութիւնը կամ ուսմանը կրնան զմեզ դուրսի գաւթին մէջ պարտցունել, և ոմանք՝ տաճարին ներսի կողմը կը մտցունեն . իսկ այս գիտութիւնը զմեզ մինչև ՍՐԲՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՒԹԵԱՆՑԸ կը մօտեցունէ :

Տեղերնիս ջներեր երկարել թէ ինչ են բարոյական գիտութեան առաւելութիւնները ուրիշ գիտութեանց վրայ : Միայն այս կ'ըսեմ թէ պէտք է դաստիարակութեան մէջ արժանաւոր տեղը նուիրենք աս գիտութեանը :

Ուստի՝ ծնողք և ուսուցիչք, մանաւանդ՝ այն պզգասէր անոնաւոր երախտաւորք՝ որ աշխոյժ եւ ունեղով և վառ տենչմամբ անձնանուէր եղած են, բնաւին իրաւացի և ապահով երաշխաւորութիւն մը չեն կրնար օւնենալ Ղզգին ապագայ բարեկեցիկ և բարեբաստիկ վիճակին, եթէ գո՛՛ր ըլլան իրենց խնամոցը յանձնուած զաւակացը . պատանեաց և երիտասարդաց . ազգկանց և մանկամարդաց նորարոյս միացերը խառնելով ուսմամբ թուաբանութեան, աշխարհագրութեան . . . , Վազղեարէն և Ղնգղեարէն թեզուաց և այլն և այլն . ու բոլորովին կամ ըստ մեծի մասին զանց առնեն և ծածկեն անոնցմէ իրենց լաւագոյն մասին գիտութիւնը : Վանդի անանկով կը զրկեն զանոնք նոյն իսկ իրենց հետամուտ եղած երջանկութեանէն, և ամենևին կարող պիտի չըլլան հասնելու իրենց կենացը, և իրենց քրտինքին և աշխատանացը վախճանին, որ է, և պէտք է ըլլայ վաշխուան խնդութեան, խաղաղութեան և արդարութեան վիճակի յաշխարհիս, :

Ընդ՝ մենք ալ մեր կողմանէ այս բարենպաս-

տակ ձեռնարկութեանը մէջ ըստ պատեհութեան նպատամատոյց ըլլալու համար, այս ընտիր՝ թեպէտեւ համառօտ գրքոյիս երկրորդ տպագրութեամբ 'ի լոյս կ'ընծայենք՝ յուսանով որ անկայ գոնէ միջոց մը և առիթ մը քրքրայ անոնց սրտերնուն մէջ այս կարևոր գիտութեան վրայ սէր մը արթնցունելու, և բարոյական քրտութեան և առաքինութեան համար բաղձանք մը վերընձիւղելու և զարգացունելու :

Եւ բարոյականի գրոց քաղմութեան մէջէն աս գիրքն ընտրելուս սրտածառն այս էր որ՝ այս գիրքը ազատ է յիշեալ հրկու մեծամեծ պակասութիւններէն և սխալմուկներէն, որոնցմով շատ գիրքեր անպիտան եղան և բազմաց միտքն ալ բարոյական կատարելութեան աղբիւրէն խոտորեցին :

Իսակ այս գիրքը ՀԵԹՆՆՈՍԱԿԱՆ անաքինութեան դրովթիւն մը կամ ընթացք մը բունած չէ, այլ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ և թէ Լ'նգլիոյ և թէ Միացեալ Մասանգաց բազմամիւ գպրոցներու մէջ իրաւամբ մեծ անուն առած է :

Կարձեալ՝ այս գիրքը իր սխալման համառօտութեամբ, և նիւթին կարգադրութեամբը բարոյական գիտութեան տանրերը դիւրահասկանալի կ'ընէ ամէն կարգի մտքերու : Եւ գպրոցներու ալ յարմար դասագիրք մը ընելու համար ամէն գլխոյն և յօդուածոյն վերջը հարցմունք ալ դրուած է : Կասօսագութեան ոճը հաճոյական ընելու համար և մտքին վրայ խորագոյն տպաւորութիւն մը ընելու համար, աշխկերտը յօդուած մը կարգալու է տնպէս ուշի ուշով : որ կարող ըլլայ սորվածը 'ի բերան պատմել օւսուցիչին : Եւ ապա հետեւեալ դասին արջի կարգացած յօդուածին վերաբերեալ

Տարցմունքները սորվելու է միայն, և անոնց պատ-
շաճ պատասխաններ գտնելու է. որով առաջին
դասն ալ մէյմը աչքէ անցընելու պարտական
կ'ըլլայ :

Շարցմանց ոմանց ճշգրիտ և ուղղակի պատաս-
խան չգտնուիր համարին մէջ . ասիկայ անոր հա-
մար է որ աշակերտը իր քովէն օրինակներ գտնէ
և այս կամ այն սկզբունքները բացատրէ . որ ա-
ղէկ փորձաբար մը կ'ըլլայ իմանալու թէ աշակեր-
տը նիւթը աղէկ միտք առնի է, թէ ոչ :

Աղէկ է որ ուսուցիչն ալ իր քովէն Տարցմունք-
ներ ընէ . և աշակերտաց աղօտ և շփոթ երևցա-
ծը պարզէ և բացատրէ, որով դասաառուութիւնը
զուարճալի և միանգամայն օգտակար կ'ըլլայ ու-
սանողաց :

(Նիրաւի այս դասագիրքս միայն տարերք է .
և միայն սկզբնաւորութիւն մը պետք է սեպել
մատաղ մտքերու համար : Իսկ կը յուսանք որ՝
չատ չանցած այս գրքիկին ընդունելութիւնն ու
օգտակարութիւնը տեսնելով, քաջալերութիւն
պիտի առնունք աւելի ընդարձակ մը 'ի լոյս ըն-
ծուելու մեր ընթերցողաց :



The text on this page is extremely faint and illegible due to the quality of the scan. It appears to be a dense block of text, possibly a list or a detailed description, but the individual words and sentences cannot be discerned.

ՍԿՈՒՄԻՆԻ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՄԸՄՆ Ե

ԳԼՈՒԽ Ե

Բարոյական Օրէնք
Գարծք և Դիպատոյութիւնք :

ՅՕԳՈՒԸԹ Ը

Բարոյական Օրէնք :

Բարոյական գիտութիւնը՝ բարոյական օրինաց զրոյ խօսող գիտութիւնն է :

Ի՞նչ է բարոյական օրէնք : Մարդիկ երբ որ կը տեսնեն թէ երկու դիպուածներ անանկ կապուած են իրարու, որ մէկը պատահածին պէս միւսն ալ միշտ կը հետեւի անոր, ան կանախցութիւնը կը կոչեն օրէնք : Կաև առաջին դիպուածը կը կոչեն պատճառ, և երկրորդը՝ հետք : Այս օրինակ, բնալոյծները՝ երբոր տեսան որ ջուրը պսիւնչ աստիճան գրասնալուն պէս կը կարծրանայ կամ սառի, հաստատեցին թէ օրէնք է որ ջուրը պսիւնչ աստիճան գրուածեա

հասնելուն պէս կը սառի : 'Վաւ երբոր տեսան որ ջուրը պսիւնչ աստիճան տաքնալուն պէս՝ կ'եռայ և 'ի շոգի կը դառնայ, ան աստե՛նն ալ հաստատեցին ուրիշ օրէնք մը թէ ջուրը պսիւնչ աստիճան տաքութեան հասածին պէս կ'եռայ : Ըսանկով աս ընդհանուր ճշմարտութիւնը կը հանեն թէ՛ երբոր պսիւնչ պարագաներուն մէջ դիպուածներուն մէկը կը պատահի, միւսն ալ հարկաւ կը հետևի անոր . և կ'ըսեն թէ ցուրտը ջրոյ սառելուն, և տաքը՝ եռալուն պատճառն է :

Իսկ այս յայտնի է թէ երկու դիպուածներ միշտ ասանկ կապակցած չեն կրնար ըլլալ՝ եթէ զանոնք այսպէս կապակցող զօրութիւն մը, և ան զօրութիւնը միշտ և ամէն տեղ 'ի գործ դնող Լնակ մը չըլլայ :

Ուստի բնութեան օրինաց գոյութիւնը ան Վերագոյն Լնակին՝ համայն տիեզերաց Ըրարչին և Պաշտպանողին էութիւնը կը ցուցնէ . և ամէն փոփոխութիւնները որ կ'ըլլան Ըստուծոյ գոյութեան ապացոյց են :

'Վաւ յայտնի է որ Ըրարիչը մեզ կատարելաւ համար ասանկ իրար կապած է գիպուածները . ինչպէս, ջրոյ եռացմանը հետ այս ինչ աստիճան ջերմութիւն կապելով՝ մեղի տրոյնցընել կ'ուզէ թէ, եթէ ջուրը եռացընել ուզինք, պէտք է այս ինչ աստիճան ջերմութեան հանենք զանիկայ : Եւ որովհետև ինքը առ հասարակ անփոփոխ է իր գրած օրինաց վրայ, վասն որոյ անոր սահմանած

կերպէն դուրս բնաւ գործք մը չենք կրնար կատարել՝ թէև շատ ալ ջանանք :

Ըրգ՝ տա օրէնքը գործչիննք Քորոյայանի : Ըմէն մարդ գիտէ թէ այս ինչ տեսակ գործքերը բարի են և այն ինչ տեսակը չար : Ո՞վ չզգար թէ ստախգուծիւնը, մարդասպանութիւնը, դողութիւնը, անգթութիւնը չար գործքեր են . և ո՞վ չգիտեր թէ ճշմարտախօս, արդար, գորովալից, երախտագէտ և բարերար քլալը բարի գործքեր են : Տղայ մը անգամ՝ քիչ մը խորհելով կ'իմանայ թէ աս երկու տեսակ գործքերէն միշտ հետևանքներ կը ծագին . զոր օրինակ, եթէ մէկը չար գործքեր գործէ՝ սուտ խօսի, գողութիւն ընէ կամ ուրիշները ներդէ, իբ ներսի դին մասնաւոր տհաճութիւն մը կամ անպերջանկութիւն մը կ'զգայ, ու կ'ըստի յանցանաց զգացումն . կը վախնայ թէ ըրածը կը յայտնուի, և կ'ուզէ որ ըրած չըլլար, ինչու որ գիտէ թէ՛ եթէ յանցանքը յայտնուի, ամենուն անարգելի պիտի ըլլայ :

Իսկ ընդ հակառակն, եթէ բարի գործէ, ճշմարիտ խօսի, երախտագէտ ըլլայ, չարին փոխարէն բարի հատուցանէ, մասնաւոր հաճութիւն մը կամ երջանկութիւն մը կ'զգայ իր սրտին մէջ, ըրածին կը հաւնի, և գիտէ թէ ամէն մարդ պիտի յարգէ զինքը :

Ըրգ՝ որովհետև տա դիպուածները և շատ ուրիշներն ալ միշտ այսպէս յօդեալ կը գանուին, վասն որոյ այս կապակցութիւնը օրէնք կը կոչենք .

և որովհետեւ այս կապակցութեան հիմը՝ գործքի մը բարոյական բնութիւնը կը կոչուի, անոր համար այս օրէնքը կ'անուանենք օրէնք բարոյական : Ասեւ կը գտնենք որ սա զիպուածները անփոփոխ են . բարի գործոց՝ հաճութիւն կը հետեւի միշտ, և չար գործոց՝ տրտմութիւն : Ուստի որոշ կ'իմանանք թէ՛ անոնց այսպէս անբաժանելի կապը՝ Աստուած, մեր Արարիչն ու Այսրագոյն Աստուորը կապեց . և շատ յայտնի է որ մեզի տրվեցընելու միտքով ասանկ ըրաւ . որկէ կրնանք սորվիլ թէ Աստուած ինչպէս կ'ուզէ որ գործենք : Ինչպէս՝ եթէ Աստուած բարեգործութեան հետ հաճութիւն, և չարագործութեան հետ՝ ասպերջանկութիւն կապած է անփոփոխապէս, ալ մեր բարի ըլլալ ուղելը այնչափ յայտնի է, ինչպէս որ երկնառաք պատգամով իմացուցած ըլլար : Այժմ տէրութեան մը մէջ ամէն մարդասպան տնհաժեշտապէս մահուամբ պատժուի, ասիկայ առանց տէրութենէն արդելման գիր մը հրատարակուելու այնքան յայտնի խրատ և զրուշութիւն մըն է մեր վարուցը, որպէս թէ՛ տէրութեան ամէն կողմը մարդասպանութեան արգելման օրէնք հրատարակուած ըլլար :

Վորձքերուն հետեւութիւնները այսպէս քրննելով՝ շատ բաներու մէջ մեր Արարչին օրէնքը կամ կամքը ինչ ըլլալը կրնանք սորվիլ : Ասկէց 'ի գատ Սուրբ Վրոց մէջ իր կամացը յայտնուած թիւնը ունինք, որ կը սորվեցընէ թէ ինչպէս

պարտական ենք գործել. նաև կ'իմացընէ թէ հը-
նազանդութեան և անհնազանդութեան ինչ հե-
տևանքներ զուգեց Մատուած: Ահա այս օրինաց
կարգադրութիւնը և բացատրութիւնը բարոյական
գիտութիւն կ'ըսուի:

Հարցումն է:

1. Օրինակ մը աուր բնական օրէնքի վրայ,
պսիւնքն, դիպուածի մը՝ որուն միշտ ուրիշ դիպ-
ուած մը կը հետևի:

2. Բարոյական օրէնքէն օրինակ մը աուր:

3. Մատուծոյ էութիւնը ի՞նչպէս կը յայտ-
նես:

4. Օրէնք մը յիշե՛, որով Մատուած մեզ
կառավարել կ'ուզէ:

5. Կենացդ մէջ պատահած դիպուած մը կը
յիշե՞ս, որուն մէջ բարի գործքերէն յառաջ ե-
կած երջանկութիւնը, և չար գործքերէն յա-
ռաջ եկած անհանգստութիւնը զգացիր:

6. Ինչո՞ւ Մատուած անանկ կարգադրեց որ
տեսակ մը գործքերով խայթ խղճի, և ուրիշ տե-
սակ մը գործքերով՝ հաճութիւն հետևի միշտ:

7. Աթէ կրած խայթերնուս և վայելած հա-
ճութիւններնուս ուշ դնենք, մեր պարտականու-
թիւնը ևս առաւել չե՞նք ճանչնար, և երջան-
կագոյն չե՞նք ըլլար:

8. Ուրեմն ինչո՞ւ անոնց միտք չենք դներ ու

անոնց համեմատ չենք գործեր :

Չ. Հասկըցա՞ր ինչ ըսել է բարոյական գիտութիւն . բացատրէ՛ :



Յ Օ Գ Ո Ւ Ա Յ Բ

Բարոյական գործ + և դիպատորութիւն :

Ի՞նչ է բարոյական գործք :

Գործ կ'ըսուի ինչ որ մարդս դիպատօք կամ գիտաւէ՛ կը գործէ : Մարդիկ և կենդանիներն ալ շատ բաներ դիտմամբ կը գործեն : Կենդանիները շատ անգամ իրարու և մարդոց ալ մեաս կ'ընեն՝ ճիշդ մնասելու մտօք : Բայց կենդանեաց գործքերը մարդոց գործքերուն հետ թէ որ բաղդատենք՝ տարբերութիւնը խիստ մեծ է : Կենդանիները չեն գիտէր և չեն կրնար գիտաւ թէ իրենց գործքերը լա՛ւ են , բայց մարդիկ կարող են այս որոշումը ընելու : Ա՛րդ՝ որովհետև կենդանին բարին ու չարը չկրնար որոշել , վասն որոյ անոր գործքերը Բարոյական գործոց կարգը չենք դասեր : Իսկ մարդը աս որոշումը կրնայ ընել , վասն որոյ իր գործքերը Բարոյական գործ + կը սեպուին : Բայց մարդիկ երբեմն դիպուածոյ գործքեր ալ կը գործածեն . ինչպէս , մարդ մը չտեսնալով՝ քար մը կամ գունա մը կը նետէ մէկուն ու կը մնասէ :

Ասանկ գործքի մը մէջ յանցանաց զգացումն չենք ունենար . թէպէտև եղած բանին վրայ կը ցաւինք : Մեր խղճմտանքը մեզ չյանդիմաներ , երբոր փնասելու մտքով և կամ բողորովին անհագութեամբ չենք գործած :

Նաև կ'ըլլայ որ երբեմն բարի գործք մը վերջը փնաս կը պատճառէ . ինչպէս՝ ըսենք թէ հիւանդ բարեկամիս աղէկ կերակուր խրկեմ ու կերակուրը զինքը փնասէ , կը ցաւիմ անոր քաշած փնասին վրայ , բայց իմ գործքիս վրայ խհաճութիւն չեմ զգար , քանչէր որ Բարեկամս Բարեկամս էր : Աս և ասոր նման օրինակներէն կը սորվինք , թէ գործքերուն բարոյական յատկութիւնները՝ դիտաւորութենէ դատելու է :

Վիտաւորութիւնը զանազան կերպով չար կ'ըլլայ : Ա . Երբոր ուրիշը կը փնասենք բարկութեամբ անոր զարնելով կամ անոր վրայ գէշ խօսքեր հրատարակելով՝ մի միայն այն մտքով որ ուրիշները սխալ կամ գէշ համարումն ունենան անոր վրայ : Բ . Երբոր միայն անձերնիս հաճեցընել կը նայինք՝ առանց նկատելու ուրիշին պատճառած փնասներնու : Աս կ'ըլլայ՝ մէկը ծաղրելով զբօսանքի համար թէպէտև ատելութիւն չենք ցուցընել : Վրասունք չունինք ուրիշներուն երջանկութեանը դպչելու՝ ինքզինքնիս հաճեցընելու համար : Ասանկով ընդհանուր կանոն մը կրնայ հաստատուիլ թէ՛ մեր դիտաւորութիւնը չար է երբոր Աստուծոյ օրինաց մէկուն դէմ ան-

դամ գործելու դիտաւորութիւն ունինք. և աս
օրէնքը երկու պատուիրանաց մէջ կ'ամփոփուի.
"Ի՞նչու Տէր Աստուածդ բոլոր սրտէդ պիտի սի-
րես": "Ինտոր կ'ուղես որ մարդիկ քեզի ընեն,
դուն ալ անոնց անանկ ըրէ": Գ. Արով-
Տետե գործքի մը բարոյական յատկութիւնը գի-
տաւորութենէ կ'որոշուի, անոր համար եթէ չա-
րութիւն ընելու միտք ունենանք, թէև արգեամք
չգործենք ալ դիտաւորութիւննիս չար է: Եւ եր-
բոր իրօք միտքերնիս կը դնենք թէ բարի գոր-
ծենք, թէև դիտաւորութիւննիս կատարելու կա-
րող ալ չըլլանք, մեր դիտաւորութիւնը Աստու-
ծոյ ընդունելի է: Ինչպէս, Աստուած Վաւթիմ
հաճեցաւ վասն զի Վաւթիմ գիտաւորութիւն ու-
նէր տաճարը շինելու, թէպէտև Աստուած չթո-
ղուց որ շինէ: Ասանկ ալ աղքատներուն բարի
կամքը և բաղձանքները Աստուծոյ առջին հա-
րուստներուն ըրած ոլորմութեանը հաւասար ըն-
գունելի են: Գ. ԱրովՏետե ընգունելի գործք
մը ընելու համար բարի դիտաւորութիւն պէտք է,
վասնորոյ եթէ Աստուծմէ հրամայուած գործք մը
կատարենք առանց բարի գիտաւորութեան, Աս-
տուծոյ առջևը ընգունելի չէ ան գործքը: Բարի
է աղքատ որբեարիի մը արդարութիւն ընել-
բոցց անիրաւ գատառքը, որ ոչ Աստուծմէ կը
վախնար, ոչ ալ մարգոցմէ կ'ամչնար, ու միայն
քաջած թախանձանացը պատճառաւ որբեարիին
դատաստանը փեսաւ ընգունելի գործք մը չի

րաւ : ինչու որ իր միտքը մայն ներութիւնէ աւ
զատուիլ էր : Ընանկ ալ աղայ մը եթէ բարի և
օժար սրտով և սիրով շատարեր ծնողացը
կավքը , անհնազանդ աղայ է , թիւ ծնողացը ը-
սածը կատարէ ալ : Սա ալ քննելու արժան բան
է թէ , առաջուց ունեցած զգացումիս մեր գի-
տաւորութեանը վրայ շատ ներգործութիւն ունի :
Ըն որ նախանձ , վրէժխնդիր և չար զգացումներ
ունի , շատ հաւանական է որ նախանձութեան ,
վրէժխնդրութեան և ուրիշ չար գործքեր առա-
ւել ևս գործէ քան թէ ան մարդը՝ որ բնաւ
այսպիսի խորհուրդներ չունի իր մէջը : Ուստի
կը տեսնենք թէ ան զգացումները՝ որ զմեզ չար
գործքերու կ'առաջնորդեն , ինքնին չար են : Եթէ
այս բանն է՝ որ մեր օրհնեալ ժողովից կ'իմացընէ
մեզի , «Սրտէն կ'ելլեն չար խորհուրդները» ը-
սելով :

Լարցումք :

1. Կենդանիները և մարդիկ ալ դիտմամբ կը
գործեն :

2. Մարդոց և կենդանեաց մէջ մեծ տարբե-
րութիւնը ինչ է :

3. Մարդոց վրայ իշխանութիւն կրնանք ու-
նենալ՝ կենդանեաց վրայ ունեցած կերպէն տար-
բեր կերպով :

4. Օրինակով մը բացատրէ :

5. Մարգոց վրայ իշխանութիւն ունենալու լաւագոյն կերպը սրճ է :

6. Աթէ մարդիկ չեն կառավարուիր չարն ու բարին գիտնալով, ինչի՞ նման են :

7. Պատանկները երբեմն պսպէս կ'ընեն :

8. Ասանկ գործելը յարգելի՞ է թէ անարգելի է :

9. Աթէ մէկը մեզ վնասէ գիպուածով, ան գործքը չար սեպել պէ՞տք է : Աթէ ոչ, ինչո՞ւ :
() օրինակ :

10. Աթէ մէկը բարեբարութիւն ընելու մտքով մեզի վնաս մը պատճառէ, շնորհակամբ ըլլալու ենք, թէ տհաճութիւն ցուցընելու ենք : Ինչո՞ւ :
() օրինակ :

11. () օրինակ մը առէր անխորհրդարար եղանկ գործքի մը համար :

12. Այսպէս գործքեր ըրած ես :

13. Չար բանի մը օրինակ մը տուր, որ գործքը պրդեամբ չէ կատարուած :

14. Բարի գործքի մը օրինակ տուր, որ առանց բարի գիտաւորութեան եղած է :

15. Յուցուր թէ մարդիկ ինքզինքնին ինչպէս կը չարացընեն չար խորհուրդներ սնուցանելով :



ԳՒ ԱՒԻՒ Ռ

Խղճմարանի :

ՅՕԳՈՒԱԾ Ը

Եւ ի խղճմարանէ, և խղճմարանէ մեզ ի՞նչպէս ին
խորտի կամ ի՛շխուշացընէ :

Յայտնի է որ երբոր բան մը կ'ընենք, ուրիշ
բան մը պէտք է ու՛՛՛՛՛ ան բանն ընենք : Ինչպէս
քալելու համար ոտք պէտք է, տեսնելու համար՝
աչք պէտք է, լսելու համար՝ ականջ, և այլն :
Եսանկ են մեր նեղքին կամ մաաւոր գործողու-
թիւններն ալ, ինչպէս . խորհելու կամ զգալու
համար միտք պէտք է որով խորհինք կամ զգանք .
յիշելու համար յիշողութիւն մը՝ որով յիշենք :

Երդ՝ ամէն մարդ գիտէ թէ ինք կարողութիւն
ունի ուրիշ մարդոց գործքերուն մէջ բարին կամ
չարը որոշելու . և գիտէ ալ թէ իր գործքերուն
չար կամ բարի յատկութիւններ ունենալէն մաս-
նաւոր զգացումներու ենթակայ է : Ե՛հա աս կա-
րողութիւնը, որ մարդս ունի ու կենդանին չու-
նի՝ խղճմարան կը կոչենք, որով այս որոշումը կ'ը-
նենք, ու երջանկութեան և ապերջանկութեան
զգացումներ կը վայելենք և կը կրենք : Եւ աս
մեզ ունեցած չարի կամ բարւոյ զգացումներ կը

վերաբերի թէ առ Աստուած և թէ առ մարդ ունեցած գործքերնուս : Այժմէ պղայ մը սուա խօսի՝ թէպէտև մարդ չիմանայ , ու երդնու՝ թէպէտև մէկը չլսէ , կամ սուրբ օրը այսինքն կիրակին չպահէ՝ թէպէտև մէկը չտեսնէ , ինքը կ'զգայ թէ Աստուծոյ դէմ մեղանչեց . և կը վախնայ թէ Աստուած զինքը պատժէ իրաւամբ : Այժմէ իր դրացիին ստացուածքը գողնայ , կամ իր ընկերները խաբէ կամ զարնէ ու նախատէ , կ'զգայ թէ զանոնք փնասելուն համար յանցաւոր է . կ'ամչնայ անոնց երեսը նպելու , և գիտէ թէ իր վարքին համար պատժոյ արժանի է* :

Ուստի կ'ըսենք թէ խղճմտանքը մտքին ան կարողութիւնն է , որով թէ առ Աստուած և թէ առ ընկեր ըրած գործքերնուս չարն ու բարին կ'որոշենք : Այլ որովհետև թէ մեր և թէ ուրիշներուն մի և նոյն վճիռները կուտանք , անոր համար կ'ըսենք թէ խղճմտանքը մտքին ան կարողութիւնն է , որով բարոյական գործողութեան չարն ու բարին կ'որոշենք , և նոյն կարողութիւնն է որ մեզ կ'ստիպէ բարի գործելու և կ'զգուշացնէ չար գործելէն . նաև մէկ կերպովը հաճութիւն կ'ըզգանք , ու միևսովը՝ տրտմութիւն :

Խորհինք քիչ մը բարւոյ ու չարի վրայ ունեցած զգացումներնուս վրայ , որ տեսնանք թէ խղճմտանքը մեզ ինչ կերպով կը խրատէ : « Եւս »

*Այս զգացումներուն սմանք կ'ունենանք՝ երբոր անտրտմանքը չարաչար գործածենք :

գիցնէք թէ գործք մը պիտի ընենք և կը խորհրդաբ
թէ ընել պէտք է արդեօք թէ չէ. զոր օրինակ
ըսենք թէ չար տղայ մը հօրը կը բարկանայ և կը
խորհի թէ արդեօք զարնէ հօրը: Հաւանական
է որ ամէն բանէն առաջ խորհելով թէ իր հայրը
իրմէ զօրաւոր է և կը պատժէ զինքը, անանկ
գործք մը ընելը խելացութիւն չսեպեր. ինչու որ
չահածէն առաւել պիտի կորսնցընէ: Բայց ը-
սենք թէ իւր հայրը հիւանդ պառկած է և չկըր-
նար պատժել զինքը ըրած չարութեանը համար:
Սակայն եթէ տղան վայրկեան մը խորհի, պիտի ի-
մանայ ի՛նչ հօրը շարժելը շարժելու է, և թէ տար-
բերութիւն չկայ հայրը զինքը պատժելու կարող
եղեր է թէ չէ: Եւ աս տղան երբոր տեսնէ որ
ուրիշ տղայ մը կըրցածին չափ աղէկութիւն ընելու
փոխանակ՝ հօրը կը զարնէ, պիտի ըսէ թէ այն
տղան չար է և պատժոյ արժանի:

Իսկ եթէ հօրը զարնելու ջանք ըրած ժամա-
նակը ինքզինքը սաստիկ մնասէ, թէպէտև ամէն
մարդ պիտի ցաւի, սակայն բոլորն ալ պիտի ը-
սեն որ իրաւամբ եղաւ և արժանի էր:

Պարձեալ՝ ըսենք թէ տղայ մը կ'զգայ որ իր
հօրը զարնելը չարութիւն է. նոյն ժամանակին
ուրիշ բան մըն ալ կ'զգայ իր մէջը, որ աս չարու-
թիւնը չընելու կ'ստիպէ՝ զինքը. եթէ տղան բար-
կացած է՝ իր մէջը երկու տեսակ զգացումներ
կ'ունենայ. բարկութեան զգացումները զինքը պի-
տի ստիպեն որ ընէ, և խղճմանքը պիտի խրա-

տէ որ չընէ : Եթէ խղճմտանքին հնազանդի՝ բարի տղայ է . և եթէ բարկութեան կրիցը հնազանդի՝ չար տղայ է :

Ուրիշ օրինակ մը առնենք : Դիցուք թէ տղի մը քիչ մը ստակ տուին որ երթայ իրեն համար խաղալիք գնէ . երբոր խաղալիքները առնել կ'երթար՝ խեղճ կնոջ մը պատահեցաւ , որուն զաւակները անօթութենէ կորսուելու վրայ էին : Խաղին վրայ ունեցած սէրը կ'ստիպէր յինքը որ երթայ խաղալիքները առնէ . բայց իր խղճմտանքը կը խրատէր կամ կը ստիպէր որ խեղճ տղոցը ոգորմի : Անձնասէր տղայ մը խաղալիքներուն վրայ ունեցած սիրոյն պիտի հնազանդէր և թողուր ան տղաքը որ սովամահ կորնչէին . իսկ բարի տղայ մը իր խղճմտանքին պիտի հնազանդէր և ինքզինքը պիտի զրկէր խազէն , ու դրամը ան աղքատ տղոցը տար :

Գործք մը կատարելէն ետքը ունեցած զգացումնիս քննելով կ'իմանանք թէ խղճմտանքը մեզ ինչպէս կը խրատէ :

Առնենք վերոյիշեալ օրինակը : Եթէ տղայ մը բարերարութիւն ընէ՝ երջանկութիւն կ'զգայ , և բրածին կը հաւնի : Եւ եթէ ուրիշ տղայ մը ան գործքերը տեսնէ՝ կը սիրէ զանիկայ և կը ցանկայ որ իր գործքին համար աղէկ հատուցում մը ընդունէ ան տղան : Ետքը եթէ ան տղան փողոցէն անցնելու ժամանակ աղքատ տղոցը տուած սարկին երկուքին չափ դրամ գտնէ , բո-

ըոր մարդիկ ուրախ կ'ըլլան և կ'ըսեն թէ այս
հասուցմանը արժանի էր :

Ընդ հակառակն՝ եթէ տղայ մը ան աղքատ
ազոցը բարեբար ըլլալու փոխանակ՝ թողու որ կու-
րընչին , ու անոնց նախատական անուններ ալ
կանչէ կամ զարնէ , երբոր կ'անցնի կ'երթայ ու
կը խորհի , իր ըրածին վրայ շատ կ'ամչնայ , կը
արամի ու շատ անհանգիստ կ'ըլլայ . և կը վախ-
նայ որ դժբաղդութիւն մը պատահի իրեն : Այժմե
այսպէս գործք գործող մէկը տեսնենք՝ շատ տհա-
ճութիւն կը ցուցընենք , անոր հետը ընկերանալ
չենք ուզեր , ու կը սեպենք թէ պատժոյ արժանի
է : Չարագործ անձանց այնպէս վախկոտ և երկ-
չա ըլլալնուն և բարեգործ անձանց այնչափ հա-
մարձակ ըլլալնուն գլխաւոր պատճառը աս է որ՝
չարագործը իր պատժոյ արժանի ըլլալով գիտէ ,
վասն որոյ կը վախնայ որ մարդիկ վինքը կը պատ-
ժեն : Իսկ բարեգործը գիտէ որ բարի հասուց-
ման արժանի է , անոր համար մէկէն վախ չունի :
Այլ աս պատճառաւ է որ չարագործները ընդ-
հանրապէս կը յայտնուին : Ան որ չարութիւն
կ'ընէ՝ կը վախնայ , կ'ամչնայ , իր դէմքին վրայ և
գործքերուն մէջ կը ցուցընէ իր յանցանքը . և
որչափ ծածկել կը ջանայ , այնչափ կը յայտ-
նուի :

Հարցաձև :

1. Կ'ըսուի թէ բան մը ընելու համար արիշ բան մը ունենալու ներք որ անով ընենք : Օրինակ մը տուր :

2. Ի՞նչպէս գիտես թէ խղճմտանք մը ունիս :

3. Երբոր ծնողացի անհնազանդ կ'ըլլաս ի՞նչ զգացում կ'ունենաս :

4. Ըստուծոյ դէմ մեղանչես նէ ի՞նչ զգացում կ'ունենաս :

5. Ի՞նչ բան է այն որ աս զգացումները յառաջ կը բերէ :

6. Երբոր բարի գործես, ու Ըստուծոյ հնազանդութիւնէ զգացում կ'ունենաս :

7. Ի՞նչ է որ այս զգացումները յառաջ կը բերէ :

8. Ի՞նչ բան կենդանիները այսպէս զգացումներ ունին : Ինչո՞ւ :

9. Երբոր այսինչ մասնաւոր չար գործքը ընել կամ չընել կը խորհէիր նէ բնաւ բան մը (չզգացիր), որ մի ըներ կ'ըսէ քեզի : Ի՞նչ է որ քեզ արգիլեց :

10. Երբոր այսինչ բարի գործքը ընել կը խորհէիր, բնաւ բան մը չզգացիր որ քեզ կ'ստիպէր ընելու : Ի՞նչ է որ քեզ կ'ստիպէ այսպէս :

11. Ստախօս, աւաղակ և անգութ մարդոց տը-

Տաճութիւն չե՞ս ցուցըներ : Ի՞նչ բան է որ
այսպէս զգալ կու տայ քեզի :

42. Տղայ մը չարութիւն գործելէն ետքը տուն
գայ նէ, աղէկութիւն ըրած ժամանակին պէս եր-
ջանիկ կ'ըլլայ : Օրինակ :

43. Ինչո՞ւ համար չար մարդը շուտով կը յայտ-
նուի :

44. Արքայ չարութիւն կ'ընեն մարդիկ ի՞նչու
համար այնքան կը վախնան :

45. Բարեգործ անձինք ի՞նչու շատ անգամ
երջանիկ են մեռած ժամանակնին :

46. Ինչո՞ւ չարագործ անձինք թշուառ են մեռ-
նելու ժամանակնին :

Յ Օ Գ Ո Ի Ա Թ Բ

Խղճմբանէք ի՞նչ կերպով յառաջ կ'երթայ կամ կը շե-
քանայ . կամ ի՞նչպէս կը զնասի կամ կը որհարանայ :

Յայտնի է թէ մեր կարողութիւնները զօրա-
նալու կամ տկարանալու ընդունակ են . ոմանք՝
իրենց հասակը եղողներէն զօրաւորագոյն են .
մէկը իր բազուկովը զօրաւոր է , մէկալը իր ոտ-
քովը : Ասանկ է ներքին կարողութեանց ալ .
մէկը զօրաւոր յիշողութիւն ունի և ուրիշը՝ տը-
կար . մէկը գիւրութեամբ գրելու ընդունակ է՝
ուրիշը գժուարութեամբ կը գրէ . և այլն :

Աւելի գործածուած կարողութիւնները աւելի զօրաւոր կ'ըլլան : Ուժը առաւել գործածողը ուրիշէն աւելի ուժով կ'ըլլայ : Որուն գործքը որ բազկի գործածութիւն կը պահանջէ , անոր բազուկները զօրաւոր են . և ով որ շատ կը քաշէ կամ կը վազէ՝ զօրաւոր և ուժով սրունգներ ունի :

Այն որ իր յիշողութիւնը ունակաբար կը գործածէ , դիւրաւ կը յիշէ . այսինքն զօրաւոր յիշողութիւն մը կ'ստանայ : Իսկ ան որ չճանար սած կամ կարգացած բանը յիշելու , շուտով կը տկարանայ յիշողութիւնը : Ասանկով մարդիկ աս ընդհանուր հետեութիւնը կը հանեն թէ բոլոր կարողութիւնները գործածութիւնով կը զօրանան , և անգործածութեամբ կը տկարանան :

Այս կանոնը խղճմտանքին ալ կը վերաբերի զանազան կերպերով :

Ա . Որչափ ստէպ գործածենք մեր խղճմտանքը գործքերուն բարին ու չարը որոշելու ու դատելու , այնչափ դիւրաւ և ուղիղ դատել կը սորվինք :

Այն որ գործքը գործելէն առաջ խորհրդածութեամբ ինքզինքին կը հարցնէ արդեօք աս բանը բարի է թէ չար , քիչ անգամ կը սխալի : Տղաքներն ալ կարող են ընել ասիկայ :

Բ . Այս մեր խղճմտանքը կը զարգանայ կամ կը զօրանայ բարի գործքերու վրայ խորհելով , ու առ աքինի անձանց վրայ մտածելով : Այս ասիկայ

որքան յաճախակի ընենք, այնքան աւելի կարող կ'ըլլանք չար բաները մերժելու : Ասոր համար ե որ մեր օրհնեալ Փրկչին կատարեալ բարքին վրայ շատ խորհելու ենք՝ եթէ մեր խղճմտանքները զարգացընել և առաքինութեան մէջ ածիլ կ'ուզենք : Անանկ ալ երիտասարդները Սուրբ Գրոց մէջ Սամուէլին, Յովսէփին, Դանիէլին և ասոնց նման բարի անձանց վրայ կարգալու և անոնց վարուցը և բարուցը վրայ խորհելու են :

Ի այց զանազան պարագաներով բարոյական որոշում ընելու կարողութիւննիս կը տկարացընենք :

Ա. Եթէ մեր գործոց բարոյական յաւկու-թիւնները քննելը զանց առնենք : Եթէ տղայք կամ մարդիկ առանց քննելու և որոշելու պատահածին պէս գործեն չարն ու բարին, վերջապէս շատ քիչ հոգ կը տանին թէ որը կ'ընենկոր. և շատ բաներու մէջ հազիւ թէ չարն ու բարին որոշելու կարող կ'ըլլան :

Աղէկ գիտենք թէ ան տղաքը որոնք իրենց ծնողքէն կրթուած են չարն ու բարին որոշելու, լաւագոյն գիտեն իրենց պարտքերը կատարել քան թէ ան տղաքը՝ որոնց ծնողքները երբէք այնպէս կրթութիւն մը չտուին իրենց :

Բ. Ի արոյական գործքերը աղիղ դատելու զօրութիւնը կը տկարացընենք ստէպ չար բաներ թեսնելով կամ լսելով կամ թէ մտքերնուս մէջ

չար խորհուրդներու տեղի տալով: Տղայ մը եթէ առաջին անգամ մէկէն յիշոցք մը լսէ, չար բան մը կը սեպէ. բայց եթէ անոր հետ ընկերանայ, քիչ ժամանակէն անհոգ կ'ըլլայ. և ինքն ալ կ'սկսի նոյնը ընել: Այնպէս կ'ըլլայ ստախոսութեան, անգթութեան, գէշ խօսքեր գործածելուն և ուրիշ չարութեանց ալ:

Ասիկա մեզի կը ցուցընէ թէ շատ բազմահոգ և զգոյշ ըլլալու ենք չար ընկերութիւններէն, և բնաւ խառնուելու չենք անոնց՝ որ չարագործութիւնը սովորական գործ է եղեր իրենց մէջ:

Իսուկեցաւ թէ բոլոր աս բաները խղճմտանքով կրնանք քննել, ինչու որ խղճմտանքը անանկ հրաման մըն է՝ որ կ'նտիպէ բարի գործելու: Աս հրամանը կը զօրանայ կամ կը տկարանայ գործածութեան համեմատ. զոր երինակ, ան որ խղճմտանքին հրամայածը միշտ կը կատարէ, քիչ անգամ փորձութեան մէջ կ'իյնայ: Ան որ միշտ կը ջանայ արդար ըլլալ, ու բնաւ մէկը չխաբել ամենէն փոքր բանին մէջ անգամ՝ ոչ կատակով և ոչ ճշմարտապէս, իր մտքին մէջ զօրաւոր ընդդիմութիւն մը կ'ըլլայ անարդարութեան դէմ. բայց ան որ երբեմն սուտ կը խօսի կամ կը խաբէ, ստութեան կամ անարդարութեան դէմ ունեցած ընդդիմութիւնը երթալով կը տկարանայ, և շատ բան է՝ եթէ վերջապէս համարձակ գող կամ ստախօս մը չըլլայ:

Վիտնալու է թէ աս վերջի երկու կանոններն

ալ իրարու վրայ ներգործութիւն ունին . որչափ որ չար ու բարի գործքերնուս վրայ խորհելով ունակութիւն ունենանք , այնչափ զօրաւոր հասկածաութիւն կ'ունենանք բարի գործքերու : Այս որչափ որ զգուշութեամբ բարի կրնենք , այնչափ դիւրաւ կ'որոշենք բարին ու չարը : 'Դարձեալ' ըսի թէ խղճմտանքը հաճութեան ու տրտմութեան աղբիւր է . բայց գործածութեան հասեմատ : Որքան յաճախ բարի գործենք , այնչափ մեծ երջանկութիւն կը վայելենք : Տես բարի և մարդասէր անձինք միշտ ինտոր երջանիկ են : 'Գիտէ' , թէ ան մարդիկը՝ որ քիչ անգամ բարի կը գործեն , գրեթէ տհաճութեամբ կ'ընեն :

Ի այց ճշմարիտ բարեռէր եւ բարի անձինք միշտ երջանկութիւն կը վայելին ուրիշները երջանիկ ընենէն : Աւ եթէ բարի ընելէն այսչափ երջանկութիւն կ'ելլէ , սրբաւոր մեծազէս երախտագէտ ըլլալ . Բաստեմբէր որ մեզ անտեղ աշխարհի մը մեջ դրաւ , ուր հաս բարեգործութիւններ կան ընելու . և թէ աղքատ թէ հարուստ , թէ մեծ և թէ սղտիկ ուղածնուն չափ այս երջանկութիւնը կրնան վայելել :

Իսկ ընդ հակառակն , մալդիկ որքան իրենց խղճմտանքներուն աւելի անհնազանդ ըլլան , այնքան պակաս խայթ . կամ անհանգստութիւն կ'զգան չարութիւն ընելուն համար :

Արբոր տղաք առջի բերան կը սկսին սուտ խօսիլ կամ գէշ խօսքեր գործածել , կ'զգան թէ

յանցաւոր են եւ շատ անհանգիստ կրլան . բայց եթէ ան գէշ գործքերուն մէջ շարունակեն , ա- նանկ որ իրենց ունակութիւն ըլլայ , ալ անկէց ե- տե անհոգութեամբ կը գործեն , և մինչև ան- գամ կը հպարտանան իրենց շար գործքերուն վա- րայ : Ըստպէս է գողութիւնը կամ որ և իցե չարութիւն :

Պուցե տուաջին տնգամբ՝ չարագործ անձանց վրայ ընծայուած բարիք մը պիտի սեպենք ասի- կայ , որ առանց նեղութեան կամ տուանց խղճի խայթին չարութիւն կը գործեն : Ըսյց եթէ քիչ մը մտադրութեամբ խորհինք , ճիշտ հակառակը պիտի գտնենք . Այսն զի երբոր մէկը կը վախ- նայ չարութիւն ընելու և խիղճը զինքը կը ասն- ջէ , հազիւ թէ չարութիւն կը գործէ . կամ գոր- ծէ ալ նէ գաղտնի կ'ընէ : Ըսյց երբոր աս տան- ջանքէն կ'ազատի , համարձակ կ'ըլլայ եւ ըրած չա- րութիւնը յայտնապէս կ'ընէ , և շուտով արժան պատիժը կ'ընգունէ : Ըսկէց 'ի վատ Ըստուած գթութիւն կ'ընէ , որ մեզ մեր խղճմտանքներու վը այսպէս կը խրատէ չարութիւն ըրած ժամա- նակնիս :

Արբոր խղճմտանքը կը դադարի մեզ խրատե- լէն , ապացոյց մըն է թէ Ըստուած մեզի բար- կացեր է , և կը թողու որ դէպ 'ի կորուստը եր- թանք՝ առանց խղճին զգուշութեանը : Ըսկէց 'ի վատ խղճմտանքին այս թմրութիւնը միայն քիչ մը պիտի տէէ : Ըստ անգամ խղճմտանքը հի-

ւանդութեան ժամանակ մահուան անկողինին վրայ կ'արթննայ, նա մտնաւանդ՝ յաւիտեանականութեան մէջ խիստ մեծ զօրութիւն մը պիտի ստանայ, որուն նման երբէք չունեցաւ երկրիս վրայ : Ուստի եթէ չարութեամբ ապրինք և չարութեան մէջ մեռնինք, խիղճերնիս յաւիտեանս տանջանաց աղբիւր պիտի ըլլան մեզի :

Բսածներէս քանի մը բան յայտնի կ'երևին : Ե. Արչափ ստէպ բարի գործերք, այնչափ դիւրաւ կը գործենք և առաւել հաճութիւն կը վայելենք բարի ընելէն :

- Արբան փորձութեան դէմ դնենք, այնչափ դիւրաւ դէմ կը կենանք . չէ թէ միայն նոյն փորձութեան, հապա շատ ուրիշներու ալ : Եւ այսպէս առաքինութեան մէջ յառաջանալու ամէն քայլին ևս առաւել պատրաստ կ'ըլլանք առաքինի ըլլալու, և մեր բնաւորութիւնները ևս հաստատուն հիման վրայ կը հաստատուին : Բ. Ընդ հակառակն որչափ շատ չարութիւն ընենք նոյնչափ դժուար կ'ըլլայ փորձութեան դէմ կենալը . և առաւել ևս պատրաստ կը գտնուինք մեղաց մէջ իյնալու, և խղճմտանքին խայթը սակաւ կը ներգործէ ու քիչ քիչ կ'ոչնչանայ : Ուստի մեղաց մէջ իրքան յառաջ կերթանք՝ այնքան դժուար է առաքինութեան դառնալը, և մեր նորոգութեան յոյսն ալ կը պակսի : Գ. Ուստի կ'իմանանք թէ ամէն փորձութեան դէմ կենալու և ամէն կարեւոր պարագաներուն մէջ բացարձակ բարի գործե-

լու մեծ և երևելի օգուտը ինչ է : Մանաւանդ
կը սորվինք որ եթէ չար սովորութիւն մը ստացած
ենք նէ, հիմա է զանհկայ մէկդի ձգելու ամենէն
յարմար ժամանակը : Այրկեան մը չենք կրո-
նար ուշանալ բանը առանց ևս առաւել գէշի
տանելու՝ մէյ ժը դժուարութիւնը շաացընելով, մէյ
մըն ալ ան դժուարութեան յաղթելու զօրու-
թիւնը ակարացնելով : Այթ է այս այսպէս է մար-
դոց դէմ մեղանչելովնիս, որչափ առաւել Աստու-
ծոյ դէմ մեղանչելովնիս :

Աս ըսածնիս առաւել կատարեալ բացատրե-
լու համար, հետևեալ ազդու և վայելուչ օրինա-
կը դնել աղէկ սեպեցինք :

Չարթուցիչ ժամացոյց :

Տիկին մը առտուանց ուզած ժամանակը ար-
թըննալու դժուարութիւն կրելուն համար, զար-
թուցիչ ժամացոյց մը գնեց : Աս տեսակ ժամա-
ցոյցները անանկ շինուած են որ՝ ուզած ժամուդ
համար լարելով, ժամահարը բարձրաձայն կը
զարնէ՝ սահմանեալ ժամանակը հասնելուն : Տի-
կինը ժամացոյցը անկողնոյն գլխուն կողմը դրաւ,
և սահմանած ժամուն ժամացուցին շառաչիւնէն
արթնցաւ . շուտով հնազանդեցաւ ժամացուցին
ձայնին, ու շատ գոհ էր կանուխ ելլելուն համար .
քանի մը շաբաթ այսպէս շարունակեց : Աս ժա-
մացոյցը հաւատարմաբար իր պաշտօնը կը կատա-
րէր . և կինը քանի որ հնազանդութիւն կ'ընէր :

անոր ձայնը կը լսէր : Բայց ժամանակէ մը ետ-
քը աիկինը կանուխ ելլելէն ձանձրանալով՝ երբոր
ազդարարին աղաղակն ու բարձր ձայնը կը լսէր՝
մէկ կողմէն միւսը կը դառնար և դարձեալ կը
քնանար : Վանի մը օրէն ետքը ժամացոյցը բո-
լորովին՝ դադարեցաւ զանիկայ արթընցընելէն : Ի՞նչ-
պէտև սովորական կերպով կը զարնէր, բայց կի-
նը մտիկ չէր ընել . ինչու որ անոր ձայնին անհը-
նազանդ ըլլալու սովորեցաւ : Ա՛յ երջապէս գաաւ
որ աս ընթացքովը ժամացուցէն օգուտ մը չէր շա-
հեր, ան ատենը իմաստութեամբ որոշեց որ եթէ
ժամացուցին ձայնը լսէ՝ շուտով ցաթկէ ելլէ . և
միտքը դրաւ որ ալ անհնազանդ չըլլայ :

Ղիշդ այսպէս է խղճմտանքին ալ : Եթէ ան-
որ խօսքերուն մտիկ ընենք մինչև անգամ փոք-
րագոյն բաներու մէջ, միշտ իր ձայնը յայտնի ու
զօրաւոր կը լսենք : Բայց եթէ այն բաները ընենք,
որ կը տարակուսինք թէ բարի են, աստիճանաւ
կ'ընկղմինք քնոյ մէջ, որ վերջապէս խղճմտանքին
ձայնը մեզ արթընցընելու կարողութիւն չունենար :

Հարցման :

1. Ա՛յ ըսուի թէ՛ թէ մարմնոյ և թէ մտաց կա-
րողութիւնները գործածելով կը զարգանան կամ
յառաջ կ'երթան : ()րինակ :

2. Եւ կ'ըսուի թէ չգործածելով ալ կը տը-
կարանան : ()րինակ :

3. Երութեան և ծուլութեան մէջի տարբե-

րութիւնը ի՞նչ է : ()րինակ սուր մտաց համար ալ մարմնոյ համար ալ :

4. Ուրեմն Ըստուծոյ օրէնքը որ պայտէս է , մեզի ի՞նչ սորվեցընել կ'ուզէ :

5. Չար ու բարի գործքերնուս վրայ խորհինք նէ , ի՞նչ երկու օգուտ կը քաղենք :

6. Բարի և առաքինի անձանց հետ ընկերութիւն ընելէն ի՞նչ օգուտ կայ :

7. Ի՞նչ երկու փաստ կը կրենք առանց բարոյական մտածութիւն ընելու գործենք նէ :

8. Չարերու հետ ընկերութիւն ընելուն հետևութիւնը ի՞նչ է : ()րինակ :

9. Բսենք թէ մէկը իւր խղճմտանքին չհնազանդիր ի՞նչ է հետևութիւնը : ()րինակ :

10. Ինչո՞ւ բարի մարդիկ , պսիներն , անոնք որ աղէկ կը գործեն , բարոյական բաներուն վրայ ուրիշներէն լաւագոյն դատողութիւն ունին : Ուրեմն՝ որո՞նց խրատներուն առաւել հետևելու ենք :

11. Այժէ երջանիկ ըլլալ կ'ուզենք , ի՞նչպէս գործելու ենք :

12. Այժէ մէկը առանց խղճին խայթը զգալու կը գործէ , բարի՞ կամ չար նշան մըն է ասիկայ :

13. Ուղիղ գործելու ունակութենէն ի՞նչ օգուտ կ'ընդունինք : ()րինակ սուր :

14. Ի՞նչ փաստ կ'ելլէ չար գործելու ունակութենէն : ()րինակ սուր :

15. Չարութիւն գործելը երբ ձգելու է և ուղիղ գործելու սկսելու է : ()րինակ :

ՅՕԳՈՒԱԾ Գ

Բարոյական վարուց կանոններ :

Գործ մը ընելու վճռելէն առաջ կանոններ կան քննելու :

Ա. Լ՛մէն բանէն առաջ հարցնուր քեզի թէ աս գործքը բարի է : Լ՛յս հարցմանը պատասխանելու կարող ըլլալու համար, Լ՛ստուած քեզի խղճմտանք մը ու Սուրբ Գիրք մը տուաւ : Եթէ քու պարտքերդ ստուգելու համար այս միջոցները չես գործածեր, շատ չար ես, և Լ՛ստուած քեզ յանցաւոր պիտի սեպէ : Լ՛յս հարցումը ըրէ՛ միշտ գործքի սկսելէդ առաջ. ինչու որ սկսելէդ ետքը կամ ընելու վճռելէդ ետքը՝ հաւանական է որ ժամանակն անցած ըլլայ, և օգուտ չընէ :

Բ. Յիշէ՛ ան անձանց վրայ ըսածներս որ իրենց խղճմտանքին չհնազանդելով կը տակարացնեն զանիկայ : Գու՛ն ալ շատ անգամ ասանկ ըրած ես, և հարկաւ քու խղճմտանքդ ալ ըստ արժանւոյն ուղիղ առաջնորդ չէ : Ուստի շատ բաներու վրայ տարակոյս ունիս. և երբոր տարակոյս ունենաս թէ արդեօք այս ինչ գործքը՝ բարի է թէ ոչ, բնաւ պէտք չէ որ ընես. բայց միայն ան ատենը պէտք է ընես որ չընելն ալ մեղք կը սեպես : Գ. Հաստատ կանոն մը ըրէ՛ միշտ ան բանը ընել՝ որ խղճմտանքդ քեզ ընելու կ'ուղղէ, և ձգէ՛ ան գործքը՝ որ կ'արգիլէ ընելու : Հոգ չէ՛ թէ գործքով, թէ խօսքով և թէ խորհրդով, թէ հրապարակաւ

և թէ առանձին, միշտ ան բանը ըրէ, որ կը հաւատաս թէ բարի է: Չարութիւն գործելէն առաւել գէշութիւն մը չկրնար պատահիլ քեզի. և բնաւ այնքան մեծ օգուտներ չես կարենար ձեռք ձգել, որքան որ բարի գործելէն յառաջ կու գան: Ըմենեկին հոգ չէ ով քու կողմանէդ է կամ ով քեզի հակառակ, միշտ ամէն բանէն վեր բռնէ Ըստուծոյ հնազանդիլը:

Վործքը կատարելէն ետքը գործածելու կանոններ:

Ա. Ունեւորութիւն ըրէ ըրած գործքերուդ վրայ մտածելու և որոշելու թէ արդեօք բարի էին կամ չար. աս կ'ըսուի անձնաքննութիւն: Ըտիկայ ըրէ խորհրդաձեռք, և պէտք է որ մինակ ու առանձին տեղ ընես, և թէ որ ասոր համար մասնաւոր ժամանակ չունիս, բնաւ չես կրնար կատարել:

Ընաչառութեամբ ըրէ: Վայէ որ ուղիղ վճռես. ինքզինքդ ուրիշ անձանց տեղը բռնէ, և սեպէ թէ քու ըրածներդ անոնք ըրեր են, և ապա հարցնուր անձիդ թէ ի՞նչ վճիռ տալու է անոնց:

Ըստուծոյ օրէնքը և Հիսուս Վրիստոսի օրինակը քու աչացդ առջևը բեր, և տես թէ քու գործքերուդ հետ ի՞նչ համեմատութիւն ունին: Պատանիներուն շատ օգտակար է որ իրենց ծնողացը և իրենցմէ խելացի բարեկամներուն հետ աս բաներուն վրայ խօսին, ու անոնցմէ ան գործքերուն համար խրատ առնեն և խորհուրդ հարցու-

նեն, որոնց վրայ իրենք կարող չեն աղէկ վճիռ մը ընելու :

Վիցուք թէ ինքզինքդ քննեցիր և ըրած գործքերուդ վճիռ կտրեցիր :

Վախ՝ եթէ բարի ըրիր՝ Աստուծոյ շնորհակալ եղիր որ կարողացուց քեզ բարի գործելու, և թող քու վայելած խաղաղութիւնդ ևս առաւել հաստատէ քեզ առաքինութեան մէջ : Արկրորդ՝ եթէ գործքերդ խառն եղեր են, այսինքն՝ շարժառիթներէդ ոմանք բարի են եղեր և ոմանք չար, ջանք ըրէ ստուգել թէ ինչպէս եղեր է որ իրար խառններ ես. և մէկ դի ձդէ քեզ սխալմունքի մէջ ձգող պատճառները : Արրորդ՝ եթէ խորհելով գտնաս թէ գործքերդ չար են եղեր : Ա. Խորհէ անոնց վրայ՝ մինչև անոնց որքան չար ըլլալը աղէկ մը հասկընաս : Բ. Կամաւ խղճմտանքին խայթը ընդունէ, ուրիշ գործ մը ընելով քու խորհուրդդ մէկ դի մի ձգեր . հապա կամաւ խղճմտանքին տանջանքը քաշէ որ ապագայ ժամանակ չարութիւն գործելու հաճութիւնը մերժես : Գ. Խորհուրդդ մի մոռնար մինչև որ գործքիդ չարութիւնը իմանալով հաստատ որոշես բնաւ մէյ մըն ալ չընել : Դ. Աթէ ըրած վնասդ կրնաս փոխարինել՝ շուտով ըրէ : Աթէ սուտ խօսեցար՝ շուտով գնա խոստովանէ որու որ խօսեցար : Աթէ քուկդ չեղած բան մը առիր, շուտով տէրոջը դարձուր . և եթէ հատուցում ընելու անկարող ես գտնէ գնա տէրոջը խոստովանէ քու յան-

ցանքդ : Եւ Նլ որովհետեւ ամէն չար գործք Մատու-
ծոյ դէմ մեղք է , ճշմարիտ զղջումով անկէց թողու-
թիւն խնդրէ Տէր Ախուս Վրիստոսի իր Արդւոյն
արժանաւորութեամբ : Վննէ խորհուրդներդ և
բռնած ընթացքդ , և հոգ տար որ ապագայ ժամա-
նակ ալ չգործես նոյն չարութիւնը : Զ . Բողոր այս
բաները ըրէ խոնարհութեամբ խորհելով թէ ան
գթած և ամէնուրեք Այակէն է քու կախումդ ,
որ միշտ պատրաստ է իր պատուիրանքները պահե-
լու համար պէտք եղած օգնութիւնները մեզի տալ .
և թէ որ հեղութեամբ մեր բոլոր յոյսերը անոր
վրայ դնենք , ան բնաւ մեզ ձեռքէ չձգեր ու
չմոռնար :

Մտածներէս յայտնի կ'իմանանք թէ ամէն մարդ
թէ ծեր և թէ պատանի իրենց գործքերուն հա-
մար անհրաժեշտ պատասխանատու են Մատու-
ծոյ : Սարգուս մէջ կարողութիւն մը կայ՝ որ
միշտ կը խրատէ զինքը և կ'իմացընէ իւր առ Մա-
տած և առ մարդիկ ունեցած պարտքերը : Մնանկ
կարողութիւն մը՝ որ ամէն տեղ ներկայ է , և
միշտ անոր ազդարարութիւնները կ'իմանանք եր-
բոր մտիկ ընելու կամք ունինք . և երբոր ուզենք
որ լուէ , տակաւին շատ անգամ կը խօսի : Մեր
համար է որ եթէ չարութիւն գործենք մեր Մ-
րաբնն առջևը անպատասխանի կ'ըլլանք : Սա-
նաւանդ ևս առաւել արտօնելի է երբոր խոր-
հիւք թէ՛ աս խղճմտանքը տասնապատիկ զօրու-
թիւնով միշտ մեր հետը պիտի բնակի և յաւի-

տենականութեան մէջ կամ երջանկութեան և կամ թշուառութեան աղբիւր պիտի ըլլայ մեզի : Որովհետև պատանիներն ալ ծերերուն նման խրղճմըտանք ունին, անոնք ալ նոյնպէս անոր հնազանդելու պարտական են . և Տէրը նոյն կերպով զանոնք ալ պիտի պատժէ եթէ անհնազանդ ըլլան իրենց խղճին :

Հարցումն 4 :

1. Գործքի մը սկսելէն առաջ ի՞նչ հարցմունք ընելու է : () ըինակ մը տուր :

2. Գործքի մը ուղիղ ըլլալուն վրայ տարակոյս ունենանք նէ ի՞նչ ընելու է : () ըինակ :

3. Բսենք թէ կը հաւատանք որ այս ինչ գործքը մեր պարտքն է . ի՞նչ բան կրնայ արգիլել մեզ որ չընենք :

4. Բրած գործքերդ կը քննե՞ս :

5. Ղշմարտապէս կ'ուզե՞ս գիտնալ Աստուծոյ հաճելի ճամբով գործել :

6. Արբոր պատանիները իրենց պարտքերնին չեն գիտեր , ի՞նչպէս սորվելու են :

7. Բսենք թէ աղքատի ստակ տուիր , կէս մը մեղքընալուդ , կէս մըն ալ փառասիրութենէդ . հետևեալ անգամը ի՞նչ ընելու ես :

8. Բսենք թէ մէկը սուտ խօսեցաւ , թէ որ ուղիղը ընել կ'ուզէ ի՞նչ ընելու է :

9. Թէ որ չարութիւն ընենք ի՞նչ ջատագոյ վութիւն կրնանք ընել :

40. Մարդ մը մահէն ետքը իր խղճին ձեռքէն կրնայ խալըսիլ :

41. Մեր խիղճերը յաւիտեանս կամ երջանկութիւն կամ թշուառութիւն պիտի պատճառեն :

42. Թէ որ կ'ուզենք որ խիղճերնիս մահէն ետքը մեզի երջանկութիւն պատճառեն, ինչպէս ապրելու ենք :

Գ Լ ՈՒ Խ Գ

Մարդ լսողն է թէ Բարի գործն
Երբոր խղճորանք շինքը Լյանդիմաներ :

Հատերը կան որ այս ինչ չար գործերը գործելուն ճամար ամենեւին խղճի խայթ և յանդիմանութիւն չեն կրեր, մինչդեռ ուրիշները նոյն գործերը ընելու ըլլան նէ, ինքզինքնին յանցաբոր կը ճանչնան : Ինչպէս՝ ոմանք յիշոցք կ'ընեն ու բանի տեղ չեն դներ. իսկ ոմանք ալ՝ բերներնէն յիշոցք մը փախչին նէ, կ'ըզան որ չար բան մը ըրին :

Ըբդ՝ այս բանը թ'նչպէս պիտի մեկնուի, և Լստուծոյ աւլըը իրօք յանցանք պիտի սեպուի թէ չէ : Ը, ան սկզբանցը վրայ կը մեկնուի, որ արդէն պատճեցինք . ըսինք թէ խղճմտանքը կը յնասուի անոր ազդարարութիւններուն մտիկ չընե-

լով : Աթէ տղայ մը հայհոյութիւն ընէ և իր խղճմտանքին ըրած յանդիմանութիւնը մտիկ չընէ , հետևեալ անգամին առջինէն քիչ կը յանդիմանէ զինքը իր խիղճը , և վերջապէս բոլորովին կը դադարի զանիկայ յանդիմանելէն : Բայց աս բանը գործքին չարութիւնը չթեթևեցընէր : Բսենք թէ մէկը արեգակին վրայ կը նայի ու իր աչքերը կը փնասէ . դարձեալ կը նայի , և առաւել ևս կը փնասէ և վերջապէս իր աչքերը կը կուրացընէ , անանկ որ ալ շտեսներ : Բայց իր կուրութիւնը չցուցընէր թէ արեգակ չծագիր : Եսանկ ալ մենք Եստուծոյ առջևը շատ չար գործքեր կը գործենք , ու մեղքի պատճառաւ կուրացած ըլլալովսիս չենք տեսներ մեր գործքերուն չարութիւնը :

Չար զաւակ մը չիմանար թէ իր ծնողացը անհնազանդ ըլլալը չարութիւն է , բայց իր չգիտնալը իւր չարութիւնը չթեթևեցընէր : Կամանապէս մենք ալ շատ անգամ Եստուծոյ անհնազանդ ըլլալնուս և բոլոր իր թարութիւնները մոռնալնուս համար մենք զմեզ յանցաւոր չենք սեպեր . բայց ասանկով Եստուծոյ առջևը մեղաւորութիւննիս չթեթևենար : Այլ որովհետև խղճմտանքին այսպիսի թմրութիւնը մարդուս բուն իր յանցանքն է , անոր համար նոյն իսկ աս բանին համար մեղադրելի է . և խղճէն սաստիկ տանջանք կրած առաջին մեղքին համար ինչ իրաւամբ պիտի պատժուի նէ , ճիշդ նոյն իրաւամբ պիտի

պատժուի վերջի մեղքին համար, որ մեղսագործութեան ունակացեալ ըլլալով խղճի յանդիմանութեան անգգայ եղած էր :

Եւ պատեղ յարմար կու գայ Ունակութեան վրայ խօսելու :

Մարդ մը երբոր մէկ բանը յաճախ կ'ընէ, շատ դիւրութեամբ և առանց խորհելու կ'ընէ, և վերջապէս չընելիք չկրնար ընել : Կը տեսնես մարդիկ ինչ շուտով երաժշտական գործիքներ և այս ինչ բառերը գործածելու սովորութիւն կը ստանան :

Ետը նման է բարոյափան գործքն ալ : Բարի գործքեր ստեղ ընելով՝ զանոնք գործելու ունակութիւն մը կը ստանայ՝ անանկ որ ի հարկէ կ'ընէ զանոնք : Ինչ հակառակն՝ մէկը չար գործքեր գործելու ունակութիւն կը ստանայնոյն կերպով, անանկ որ առանց խորհելու կ'ընէ :

Հիմա խնդիրը այս է թէ՛ չար գործք մը ունակաբար գործուելուն պատճառաւ թեթեւագոյն կ'ըլլայ :

Ո՛չ . ինչու որ եթէ Եստուած արգիլեց զանիկայ, մեք ունակութիւն ստանալնիս անոր հրամանը չփոխեր : Եստուած ըսաւ մի գողանար և իւր հրամանը պիտի չփոխէ : Եթէ գողութիւն ընելնիս չուզիր, որքան էվելօք ահաճութիւն կը ցուցունէ գողութիւն ընելու սովորութիւն ունենալնուս համար : Եթէ մէկը քեզի վարնէ ու իր խիղճը խայթէ զինքը, կ'ըսես թէ պէտք է որ զղջայ, և ալ

չընէ : Իսկ եթէ քեզ ամէն տեսնելուն զարնելու ունակութիւն մը ստանայ , անանկ որ քնաւին խղճի խայթ չզգայ , յայտնի է որ խղճի յանդիմանութեան անզգայ ըլլալը՝ իր զարնելու չարսփորութիւնը չարդարացուններ : Պիտի խորհիս թէ անգամ մը զարնելն ալ չարութիւն է , ո՛ր կը մնայ ամէն տեսած տեսնը զարնելու ունակութիւն ստանալը : Եթէ այս այսպէս է՝ ո՞րքան չար է չար ունակութիւններ ունենալը , և առանց խորհելու կամ մտածելու չար գործքեր գործելը , որ շատերը այս վտանգին մէջ ինկած են :

Հարցումներ :

1. Եթէ գործքերդ Մատուծոյ օրինաց հետ բաղդատես , պիտի չգտնեն որ Մատուծոյ արգիլած չար գործքերը գործերես , ու չար սեպած չես :

(Օրինակ մը տուր :

2. Մտուած այս գործքերուդ համար՝ քեզ համար տալու պիտի կանչէ՞ թէ ո՛չ :

3. Մտպէս գործքերը , ուրիշ գործքերէն ներելի պիտի ըլլայ :

4. Դիցուք թէ տղայ մը սուտ կը խօսի և հոգ չընէր թէ ճշմարիտ կը խօսի թէ չէ , այս բանը իւր յանցանքը կը թեթեւցընէ : Ինչո՞ւ :

5. Դիցուք թէ տղայ մը անգամ մը յիշոցք ըրաւ , և իւր խիղճը յանդիմանեց զինքը և ուրիշ տղայ մը այնքան ստեփ և այնքան երկար ատեն ունակաբար յիշոցք կ'ընէր որ ըրածը ինք անգամ

կը մտնար : Ո՞րը առաւել յանցաւոր է : Եւ
ինչո՞ւ :

6. Մարդիկ ընդհանրապէս իրենց կարծածէն
աւելի չա՞ր են թէ բարի : Եւ ինչո՞ւ : Եւ յօդ-
ուածը բարի ունակութիւնն ստանալուն օգտին վը-
րայ ի՞նչ կը սորվեցընէ :

Գ Լ Ո Ի Խ Գ

Երջանկութիւն :

Արարիչը մեր շուրջի տարբեր առարկաներուն
համար զանազան բաղձանքներով ստեղծեց մեզ :

Եւս բաղձանաց կատարուիլը կը կոչենք եր-
ջանկութիւն կամ հաճութիւն : Ինչպէս . այս ինչ
կերակուրը, ըմպելիքը, երաժշտութիւնը, գոյնը
և տեսարանը կը սիրենք . ասոնք կ'ըսուին մտա-
ւորական հաճութիւններ : 'Կարձեալ՝ երջանիկ
ենք բարեկամներու և ազգականներու ընկերու-
թեամբը . ասոնք ալ կը կոչուին ընկերական հա-
ճութիւններ : 'Կաւ երջանկութիւն կը քաղինք
բարի գործելէն և առաքինի ըլլալէն . այս կ'ըսուի
բարոյական հաճութիւն կամ երջանկութիւն :

Աճդ՝ որովհետև Արարիչը բոլոր այս աղբիւր-
ներէն երջանկութիւն ստանալու ընդունակ ստեղ-
ծեց զմեզ և առ առարկաները մեր շուրջը դրաւ ,

յայտնի է թէ կ'ուզէ որ զա՛ռնք բոլորը վայելենք, պսիւնքն անոնցմով երջանիկ ըլլանք : Ինչպէս՝ կ'ուզէ որ տեսակ մը երջանկութիւն հանենք ան բաներէն, որ կը լւենք կը ճաշակենք, և ուրիշ տեսակ մը՝ ան բաներէն, ու կը կարգանք և անոնց վրայ կը խորհի՛նք, ուրիշ տեսակ մըն ալ բարի գործելէն և ամէն բանի մէջ Լ'ստուծոյ հնազանդելէն :

Իսոյց գիտնալ պէտք է որ թէպէտև բոլոր պս բաները երջանկութեան աղբիւր են . և մեր Լ'քարչին կամքն ալ ան է, սակայն անոնք ալ իրենց օրինաւոր սահմանն ունին : Ինչպէս՝ թէպէտև և կերակրոյ սիրոյ յագուրդը երջանկութեան աղբիւր մը ըլլալ սահմանուած է . սակայն եթէ չափէն աւելի ուտենք՝ մտաւորական և բարոյական հաճութեան համար ունեցած ընդունակութիւննիս կը խանգարի և ոչ միայն այսչափ, այլ զգուանք, հիւանդութիւն կամ մահ յառաջ կը բերէ : Ինչ հաճութիւններ որ փնտռենք սահմանէ դուրս, ան հաճութիւնները յառաջ բերող կարողութիւնները կը տկարանան . և եթէ յետին աստիճան ետևէ ըլլանք, հետևութիւնը խելագարութիւն է : Իարոյական հաճութիւններն յնգամայսպէս են : (1) որօրինակ՝ աս կենցաղիս մէջ ջերմեռանդութեան այնքան ետևէ կրնայ ըլլալ մարդ, որ առողջութիւնը փնտռուի և կենդանի բարեպաշտութեան փոխանակ՝ սրտաբեկութիւն և յուսահատութիւն յառաջ գայ :

և է

Ուստի թէպէս ու ճշմարիտ է որ մարդկային երջանկութիւնն է կատարումն բաղձանաց, սակայն աս երջանկութիւնը ձեռք կը ձգուի, թէ որ՝ Մտուածոյ կարգած սահմաններուն մէջ կատարուին բաղձանքները :

Մտ սահմաններէն դուրս ելածնուս պէս, հետեանքը երջանկութեան փոխանակ՝ թշուառութիւն է : Ուրեմն, գերագոյն երջանկութիւնը որուն ընդունակ ենք, վայելիլու միակ ճամբան է հնաշէնգիլ բարոյական՝ ընկերական՝ մտաւորական և ֆիզիգական օրինաց, զորս Մտուած սահմանեց . այսինքն, ամէն բանի մէջ մեր Մտարջին սուրբ՝ իմաստուն՝ արդար և գթած կամքին հնազանդութեան մէջ է երջանկութիւնը :

Արբոր մեր Մտարջին օրէնքէն դուրս որ և իցէ կերպով մը մեր բաղձանքները կատարել ուզենք, մէկէն ՚ի մէկ թշուառութեան մէջ կ'իյնանք : Արկրիս վրայ խիստ ապերջանիկ անձինքը անոնք են, որ Մտուածոյ օրէնքները չեն նկատեր, և միայն զբօսանաց համար կ'ապրին : Ուստի մեք որ երջանիկ ըլլալ կ'ուզենք հարկեալոր է որ քանի մը կանոններ քննենք :

Ա. Բարեխառն ըլլալու ենք . այսինքն մեզի օգուտ չեղած ուտելիքը ու խմելիքը գործածելու չենք և մեզի օգտակար եղածին չափ ուտելու ու խմելու ենք : Արբոր այնչափ ուտենք որ մինչև ցաւ զգանք և քնէած ըլլանք, գիտնալու ենք որ անբարեխառն ենք : Բ. Աշխատանք ըլլալու ենք .

Առանց աշխատութեան շուտով կը տկարանանք
ու հիւանդոտ կ'ըլլանք, նաև առանց աշխատու-
թեան ոչ կարգալէն ոչ ալ գիտութենէ հաճութիւն
կ'զգանք: Ծուլութիւնը ինչպէս մարմինը, անանկ
ալ միտքը կը տկարացընէ: Գ. Բնինբոյսեր ըլլալու
ենք: Ասել չեմ ուզեր որ բոլոր ժամանակնիս
ուսման մէջ անցունելու ենք. ինչու որ աս անկա-
րելի է: Աս ըսել կ'ուզեմ թէ ամէն մարդ որ-
քան որ գործը կը ներէ քիչ մը ժամանակ տայ
կարդալու կամ մտքին մշակութեանը: Ասանկով
քիչ ժամանակէն հաճութեան մեծ աղբիւր մը
պիտի ըլլայ իրեն և մեծապէս ալ օգտակար: Պա-
րապ ժամանակները աս կերպով անցընելէն էր որ
Պրանկլին իր մեծութեան հիմը դրաւ, և ինքը-
զինքը աղքատ տպագրիչի մը վիճակէն երևելի
փիլիսոփայի մը ու աշխարհավարի մը աստիճանի
բարձրացոյց: Գ. Բարի ըլլալու ենք. սյսինքն՝
ամէն բանի մէջ Աստուծոյ հնազանդելու ու անոր
ծառայելու ջանք ընելու ենք: Ասանկով բաց ի
օրական ընդունած պարգևներէն երախտագիտու-
թեան հաճութիւն մըն ալ կ'զգանք. նաև նեղու-
թեան մէջ հանգստութիւն, մեր և մենապատուա-
կան բարեկամին՝ երկնաւոր և օրը հետ ունեցած
բերկրալից հաղորդակցութեան բոլոր հաճութիւն-
ները, և մեռնելէն վերջը յաւիտեանս երջանիկ
ըլլալու յոյսը կը փայելենք: Ամէն մարդ կը
խոստովանի թէ, ճշմարտապէս կրօնառէր մարդ մը՝
թէ ծեր և թէ պատանի, ուրիշ մարդոցմէ եր-

ջանկագոյն է : Ե. Բարե-իւր ըլլալու ենք . այս-
ինքն ուրիշները երջանիկ ընել ջանալու ենք՝ որ
Լստուծոյ լաւագոյն ծառայութիւն մըն է : Մեր
երջանկութիւնը փնտռելէն առաւել հաճելի է
ուրիշները երջանիկ տեսնելը : Վիտութիւնը մեր
բաղձանայր կատարմանը համար սորվելէն լաւա-
գոյն է ուրիշներուն թաւտ ընելու համար սորվե-
լը : Եւ եթէ երիտասարդները և ծերերը հան-
դերձի և անօգուտ զեղխութեան համար վատնած
դրամին , ուրիշները երջանիկ ընելու համար
խարճէին , որքան առաւել երջանկութիւն և հա-
ճութիւն պիտի զգային :

Հարցման :

1. Մարդկային երջանկութեան զանազան տե-
սակներու վրայ օրինակներ տուր :
2. Ինչէ՞ն գիտես թէ Լստուած կ'ուզէ որ
ինձոր ուտես , ծիածանին վրայ նայիս , կամ ա-
ռաքինութիւն գործես :
3. Ինչէ՞ն գիտես թէ Լստուած պատու ու չէ
թէ տերև սահմանեց ուտելու :
4. Ինչէ՞ն գիտես թէ Լստուած մէկ անգամին
քանի մը խնձորէն աւելի ուտելը չուզեր :
5. Ինչէ՞ն գիտես թէ Լստուած ուսման հե-
տեկիդ կ'ուզէ , բայց չէ թէ բոլոր օրը :
6. Մեր վրայ եղած ազդեցութիւններով Բնչ-

որէս կ'իմանանք թէ Աստուծոյ օրէնքէն անցանք :

7. Աթէ մէկը օրը երջանկութեամբ անցընել կ'ուզէ, Բնչպէս անցունելու է :

8. Արբոր այնպէս կը գործես չես զգար թէ շատ երջանիկ ես :

9. Ո՞րն է առաւել ցանկալին զգայութեանց կամ մտաւորական հաճութիւնները :

10. Ո՞րն է առաւել բաղձալին, զգայութեանց կամ ընկերական հաճութիւնները :

11. Ո՞րն է ևս առաւել փափաքելին, զգայութեանց կամ բարոյական հաճութիւնները : (Ընտրոր ասոնք բացատրէ :

12. Անհրանիսները Բնչ տեսակ հաճութիւն կ'ըզան :

13. Ղիցուք թէ մէկը իր հաճութիւնները միայն ուտելէն և այլն կը հանէ՝ ինչի՞ կը նմանի անանկ մարդը :

ԳՆՈՒԽ Ե

Խղճարանի նկատարութիւնը :

Արդէն ըսուեցաւ թէ խղճմտանքը մեր ուրիշ կարողութիւններուն նման վայելուչ գործածու-

Թիւնով կը զօրանայ և չարաչար գործածելով կը սկարանայ : Խղճմտանքը չարաչար կը գործածենք , երբոր չարութիւն կ'ընենք : Այստի է թէ բոլոր մարդոց խղճմտանքը անկատար է :

Թէպէտե մեր խղճմտանքը այսպէս անկատար ըրինք , սակայն Աստուծոյ օրէնքը նոյնը կը մնայ . այսինքն , նոյն պարտականութիւնները կը հրամայէ մեզի , նոյն հատուցումները կը հատուցանէ , և նոյն պատիժները կ'սպառնայ : Մարդոց անհնազանդութիւնը իր օրէնքները փոխելու պատճառ մը չէ :

Աթէ տղայ մը իր ծնողացը պատուէրները չըսելու համար իր ականջները գոցէ , ու ծնողացը կամքին հակառակ գործէ , հարկաւ ըստ օրինի պիտի պատժուի , որպէս թէ ականջները գոցած չէր , քանզի ականջը գոցելն ու չըսելը իր յանցանքն է :

Այլ թէ որ մենք մեղսագործութեան մէջ այնքան յառաջ գացած ենք որ՝ մինչև Աստուծոյ ձայնն ալ չենք լսեր երբոր մեր խղճովը մեզի կը խօսի . և թէ որ այսպէս անխորհրդաբար յառաջ կ'երթանք ընդդէմ Աստուծոյ մեղանչելով , ու անոր դատապարտութեան ենթակայ ըլլալով , մեր վիճակը խիստ թշուառ պիտի ըլլար եթէ ուրիշ լոյս մը չտար մեզի : 'Արէ դար մարդիկ ևս քան զևս մեղսասէր պիտի ըլլային և բոլորն ալ առանց փրկութեան յուսոյ պիտի մնային : Այլ բուն իսկ հիմա ալ մարդիկ աս ճամբով յառաջ կ'երթան ,

որն որ ինքնայայտ կրտսենուի իրենց գործքերէն :

Չեմ պնդեր թէ մարդոց մէջ առաքինութիւն չուկայ, այլ առ կ'ըսեմ թէ Աստուծոյ օրէնքը կատարեալ հնազանդութիւն կը պահանջէ աղէկ հատուցում մը հատուցանելու համար :

Նաև մարդիկ ոչ միայն հնազանդութիւն չեն ցուցըներ, հապա այնքան անհնազանդ ալ եղած են, որ իրենցմէ պահանջուած պարտքերը խղճմտանքին լուսովը չեն տեսներ : Ա. Շատ պարտքեր կան առ Աստուած և առ ընկեր, որ մարդ իր անօգնական խղճմտանքովը չկրնար դիտնալ : Ղ'ամբորդներուն հեթանոս ազգաց վրայ ըրած պատմութիւնները, և քարոզիչներուն ըրած պատմութիւնները կարգացողները աղէկ կը հասկընան աս բանը : Բ. Յայտնի է թէ ուր տեղ որ աս պարտականութիւնները գիտցուած են, մարդիկ շատ անգամ զանոնք կատարելու կերպին մէջ կը սխալին՝ եթէ միայն բնութեան լուսոյ թողուին : Ինչպէս հեթանոսները որ կը խոստովանին թէ Աստուծոյ երկրպագութիւն ընելու է, խիստ անարգելի և ապականեալ արարողութիւններ կը կատարեն իբրև երկրպագութեան գործքեր : Ար խոստովանին թէ աղաք իրենց ծնողքը սիրել պարտական են, բայց շատ անգամ երբոր ծերանան կամ հիւանդանան կը մեռցընեն զանոնք : Գ. Մարդիկ առ հասարակ իրենց վայելած լուսոյ պէս չեն ապրիր, այսինքն այնքան բարի չեն որքան որ պիտեն թէ պէտք է ըլլալ : Ասիկայ հեթանոսները

և քրիստոնէութեան կատարեալ ներգործութեան տակը եղողներն անգամ կը խոստովանին : Ամէն մարդ գիտէ թէ մարդիկ հակամիտ են՝ առ Աստուած ունեցած պարտքերնիս զանց ընելու՝ վաղանցիկ և սնոտի բողձանքներ վայելելու համար :

Արդ՝ եթէ մեր վիճակը այսպէս է, եթէ Աստուծոյ օրէնքները աւրելու հակամիտած ենք, և եթէ ամէն աւերմանը ահարկու պատիժ սպառնացած է չէ թէ միայն աս աշխարհիս մէջ, այլ գալու աշխարհին մէջ ալ, եւ եթէ մեր պարտքերը սորվեցընելու համար խղճմանքին լուսէն ուրիշ բան մը չըլլար, մեր վիճակը բոլորովին անյոյս պիտի մնար : Իսոյց գիտենք որ Աստուած ինչպէս որ խիստ արդար է, անանկ ալ խիստ ողորմած է, ուստի շատ հաւանական է, որ ուրիշ տեղեկութիւն մը տայ մեզի այս բանին վրայ : Անհամար ապացոյցներ ցրցուցած է թէ՛ իր աքարածներուն բարի գործելը և անոնց երջանկութիւնը կ'ուզէ : Այս վերջի երկու խորհրդածութիւնները մեծ վստահութիւն կու տան որ մեր պարտականութեանց համար անօգնական խղճմտանքով եղած ծանօթութիւններէն կատարելագոյն ազգարարութեան ակն ունենանք : Եւ այս ծանօթութիւնները և ազգարարութիւնը բնական լուսէն և Աստուածային յայտնութենէն կը սորվինք :

Հորհրդանք :

1. Բացատրէ թէ ինչ պիտի ըլլար մարդոց վիճակը, եթէ անօգնական խղճմտանքով եղածէն ուրիշ կերպով չիմանային իրենց պարտքերը :

2. Կ'ըսուի թէ եթէ խղճմտանքէն զատ ուրիշ ըոյս մը չըլլար, առ Մատուած և առ ընկեր ունեցած շատ պարտքերուն վրայ ագէտ պիտի ըլլար մարդս : () ըինակ մը կրնաս տալ :

3. Կ'ըսուի որ մարդիկ գիտեն թէ այսինչ պարտքը կատարելու է, բայց չեն գիտեր թէ ինչ կերպով կատարելու է՝ որ Մատուածոց ընդունելի ըլլայ : () ըինակ մը տալ :

4. Մարդիկ ընդհանրապէս գիտցածնուն պէս կը գործեն :

5. Եթէ Մատուած քեզ հաշիւի կանչէ կենաց բոլոր գործքերուդ համար որ առանց խորհելու իրեն կամքին դեմ ըրիր, ինչ պիտի ըլլայ քու վիճակդ :

6. Եթէ մենք այսպէս ագէտ և մեղանչական ենք . և Մատուած այնպէս բարի է և կը կամի որ բարի գործենք, ինչ բան հաւանական կ'ընէ՞ որ մեզի համար ընէ :



Գ. 1. ԱՒԻԽ Օ.

Բնական լուսոյ բնութիւնը և պատմութիւնները:

Բնական լուսոյ բնութիւնը աղէկ բացատրելու համար հետեւեալ օրինակով պիտի սկսիմ: Ղիցուք թէ տղայ մը դժբաղգութեամբ խուլ ու մունճ է (ինչպէս որ ոմանք կ'ըլլան) ու իր ծնողացը խօսքերը չլսեր: Այլ դիցուք թէ իւր ծնողքները շատ իմաստուն՝ արգար և բարերար անձինք են. և տղայն ալ աղէկ գիտէ ասիկայ: Բռնք թէ այս տղայն կը տեսնէ որ երբոր տեսակ մը գործքեր կ'ընէ, զոր օրինակ՝ կը բարկանայ, չարութիւն կ'ընէ կամ անպարկեշտ կ'ըլլայ, ծնողքը տհաճութիւն կը ցուցնեն, և եթէ անանկ շարունակէ, կը պատժուի. բայց երբոր բարերար՝ երախտագէտ և համեստ կ'ըլլայ, ծնողքը միշտ կը հանին ու աղէկ հատուցում կ'ընեն: Այլ դիցուք թէ դիտողութիւն ըսեր հասկցեր է որ իր ծնողքը քանի մը միջոցներով անանկ իմաստուն տնօրէնութիւն մը ըրեր են որ բարի գործք մը բոլոր ընտանիքին միշտ երջանկութիւն կը պատճառէ, ու չար գործք մը՝ ապերջանկութիւն: Արդ՝ ըսնք թէ բոլոր աս բաները միշտ կը պատահին անանկ որ տղայն ստուգապէս կը սորվի ծնողացը կամ-

քը, այսինքն, ընտանեացը օրինաց ինչ ըլլալը, որպէս թէ կը ըսէր, ու խօսքով իրեն կը պատուիրէին :

Ճիշդ այսպէս է ընտան կրօնքին կամ լուսոյ ալ. որով մեր առ Մատուած և առ մարդիկ ու նեցած պարտականութեանց վրայ անանկ գաղափարներ կ'ունենանք, զորոնք առանց Մատուածաշունչ Վրոց կրնանք սորվիլ :

Մատուած նոյն կերպով կը գործէ առ մարդ, ինչպէս որ այնպէս ծնողք մը անանկ զաւկի մը : Մատուած գործքերուն ոմանց երջանկութիւն և ոմանց թշուառութիւն յօդեց՝ եթէ մինչև անգամ գործքին միայն մեզի վերաբերեալ մասը խորհելու ըլլանք : Ինչպէս երբոր այսինչ գործքերը ընենք խղճի խայթ կ'զգացընէ մեզի, և երբոր այն ինչ գործքերը ընենք՝ երջանկութիւն : Մակեց զատ այնպէս հնարեր է որ զանազան գործքեր ցաւ և նեղութիւն կը պատճառեն, և զանազան գործքեր ալ հաճութիւն, ինչպէս որ մտքին՝ անանկ ալ մարմնոյ : Մենուն յայտնի է որ չափէ գուրս ուտելը հիւանդութիւն կը պատճառէ. և թէ արբեցութիւնը մարդս թշուառ կ'ընէ. և թէ ստախօսը ամենուն անարգելի է և զզուելի : Մաւ Մատուած անանկ կարգադրեց այս աշխարհիս բաները որ չար գործքերը միշտ անհանգստութիւն և ապերջանկութիւն կը պատճառեն. և եթէ ընդհանուր գործածուին մարդկային ընկերութիւնը՝ ի միասին չկրնար կենալ : Խորհէ քիչ մը թէ տը-

զաք սուս խօսելով, պիղծ խօսքեր գործածելով, իրարու հետ կուռելով և անհնազանդութիւն ընելով որչափ ապերջանիկ են և որչափ ապերջանիկ կ'ընեն իրենց ծնողքը: Հարցուր ինքզինքիդ թէ մարդիկ ի՞նչպէս կրնան միաբան բնակիլ եթէ ամէնը ստախօս, արբեցող և գող ըլլան. և քանզի Մատուած բոլոր այսպէս գործքերուն այսպէս գէշ հետեանքներ գուգեց, ուրեմն անակգործքերը իր սուրբ կամքին դէմ ըլլալը շատ յայտնի է՝ որպէս թէ յերկնից պատգամ խրկած ու պատուիրած ըլլար: Այլ քանզի բարի գործքերուն այսպէս հետեանքներ սահմանեց, յայտնի է թէ կ'ուզէ որ բարի գործքեր ընենք միշտ: Աստի մարդիկ այս հետեանքները տեսնելով կրնան իմանալ թէ, Մատուած որ բաները կ'ուզէ որ ընենք, և որ բաները կ'ուզէ որ չընենք: Մյայտէս կանոնները կ'ըսուին բնական կրօնքին օրէնքները:

{Յայտնի է թէ պարտականութիւններնու վրայ շատ տեղեկութիւնները այս կերպովը կ'առնենք: 'Այա և յայտնի է որ գիտութիւննիս ողբան աւելնայ, պատասխանատուութիւննիս ալ այնքան կը ծանրտնայ. քանզի որեւիցէ պատուիրանազանցութեան յանցանքին չափը համեմատ է այն պատուիրանքին վրայ ունեցած լուսոյ կամ գիտութեան: 'Այա մանաւանդ՝ այս ամենուն վրայ, բնական կրօնքը ոչ միայն ևս աւելի պայծառութեամբ առջննիս կը դնէ բարոյական օրէնքը՝ մեր

գործքերուն հեռեանքները մեզի լմացընելով, այլ և պարտքերնիս կտտարելու ալ ևս աւելի շարժառիթներ կուտայ : Էլ՝ որովհետև 'ի բարին և 'ի չափն ունեցած հակամիտութիւննիս՝ գալած ճամբանուս մէջ յաղթած արգելքներնէս կը չափուի, վասնորոյ թէ որ աս յաւելեալ շարժառիթներուն վրայ ալ չարութիւն գործելու ըլլա՞նք, ալ ան ատեն իրաւամբ ևս առաւել յանցաւոր պիտի սեպուինք Մատուծոյ առջևը :

Սակայն թէպէտև բնական լոյսը կամ օրէնքը այսպէս լոյս կ'ընծայէ մեզի, այլ մեր ներկայ վիճակին մէջ թերի և անբաւական է մարդս առաքինութեան և երջանկութեան առաջնորդելու : Մտկայ աղէկ կը հասկընանք, նախ՝ անկէ թէ, մարդկային ազգը ուր որ առանց Մատուծաշունչի բնակեցաւ, միշտ խիստ մոլի եղաւ : Արկորդ՝ այս բանը ոչ ալ գիտութեան պակասութեան կը տրուի, ինչու որ որքան որ գիտութեան մէջ յառաջ գացին, այնքան չարացան : Արրորդ՝ մարդոց բնական լոյսէն հանած կրօնական դրութեանց և ոչ մէկը զգալի ազդեցութիւն մը չկրցաւ ունենալ՝ վիրենք 'ի լաւ անդր փոխելու :

Սանաւանդ՝ բնական լոյսը չճանուցաներ սոյն գլխաւոր ճշմարտութիւնները՝ ոյրնք կրօնական բնաւորութեան և երանելի անմահութեան հաստատուն յուսոյ էականապէս հարկաւոր են : Օրորիինակ, բնական լոյսը ապառնի վիճակին դոյուլթեան օւտեղողութեան վրայ տեղեկութիւն

չտար, և չպատմեր թէ մահէն ետքը արդեօք պիտի ապրի՞նք, կամ ո՞րքան: Ըպտունի վիճակին վրայօք բան մը չիմացըններ: Սեր մեղանչական ըլլալնիս շատ կերպով կ'իմացընէ, բայց մեղքը ինչ ճամբով կը ներուի՝ անոր վրայ բան մը չըսեր: Սանաւանդ՝ որ Վրիտանոսով եղած քաւու թեանը, և անոր արժանաւորութեամբը եղած փրկութեան եղանակին ու բարոյական կատարելութեան համար բնաւ բան մը չիմացըններ: Սատի՛ որովհետեւ անոնք մեզի ամենակարևոր և օգտակար գիտելիքներ են, և բնական օրէնքն ալ զանոնք չկրնար յայտնել, յայտնի է թէ՛ եթէ ուրիշ առաջնորդ չունենայինք, յետին տգիտութեան մէջ պիտի մնայինք. և ան բաները, որ իբրև բարոյական և անմահ էակներ շատ կարօտ ենք սորվելու, երբէք կարող պիտի չըլլայինք գիտնալու: Ըս խաւարը ցրուելու և աս վիճակին մէջ մեզի պէտք եղած բարոյական բաներուն վրայ բոլոր տեղեկութիւնները տալու համար էր որ՝ Ըտուած Սուրբ Գիրքը մեզի տուաւ:

Հարցո՞ւնք:

1. Ըռանց Սուրբ Գրոց ի՞նչպէս կը գիտնանք թէ Ըստուած որ բաները կ'ուզէ որ ընենք և որ բաները չուզեր:

2. Ինչէ՞ն կ'իմանանք թէ Ըստուած արբեցու թիւն, գողութիւն և կռիւ ընենիս չուզեր:

3. Ի՞նչպէս պիտի գիտնաս թէ Ըստուած կ'ուզ

զէ որ աղաք իրարու բարերար և իրենց ծնողացը հնազանդ ըլլան :

4. Ըստ կերպ սորվելը մարդիկ բարի ընելու բաւական է: Կարդացածէդ բան մը կը յիշես աս բանին վրայ :

5. Աղղեմի Եօնաց և Հոովմայեցոց բարոյական բնաւորութիւննին ի՞նչ էր :

6. Հեթանոսներուն ընդհանրապէս ի՞նչպէս է :

7. Գալու աշխարհք մը ի՞նչպէս կ'իմանաս եթէ Ըստուած չծանուցանէ :

8. Բնական շոյսէն ուրիշ բան կը սորվինք բաց 'ի Ըստուծոյ քանի մը հրամաններէն կամ պատուէրներէն :

9. Ըստուծոյ օրէնքները կոտորելու ըլլանք նէ, բնական օրէնքը քաւութեան ճամբայ կը սորվեցընէ՞ մեզի :

10. Եթէ մարդիկ Ըստուածաշունչ չունենան, Ըստուած զանոնք ի՞նչ օրէնքով պիտի դատէ :



Գ Լ Ո Ւ Խ Ե Լ :



Սուրբ Գիրք :

Սուրբ Գիրքը կը պարունակի Հին և Նոր Ատակարաններուն մէջ և իւր գլխաւոր նպատակն է Ըստուծոյ օրէնքը կամ կամքը, և Եիսուս

Վրիստոսի ըրած քաւութեամբը եղած փրկող
թիւնը մարդոց յայտնել :

Հին Ատակարանը կը պարունակէ 'Ասի' աշ-
խարհիս արարչագործութիւնը՝ մարդուս ստեղծ-
ուիլը և անկումը՝ հանդերձ մարդկային սեռին վը-
րայ մինչև ջրհեղեղ եղած պատմութեամբ : Արկ-
րորդ՝ Աստուծոյ Աբրահամին ընտանիքը ընտրելը ,
Հրէից ազգին ծագումը և իրենց սկիզբէն մինչև
Մաբելոնի գերութենէ դառնալնին , 1500 տար-
ուան միջոց : Արրորդ՝ բարոյական , քաղաքա-
կան և արարողական օրինաց դրութիւնը , որ Աստ-
ուած ան ժողովուրդին կառավարութեանը համար
հաստատեց . մանաւանդ՝ ապագայ անտեսութիւնը
անոնց առջևը պատկերացընելու համար սնօրի-
նեց և կարգադրեց : Չորրորդ՝ անոնց պատմու-
թեան մէջի զանազան դիպուածները . իրենց ներ-
շնչեալ ուսուցիչներուն խօսքերը . բարեպաշտ
անձանց աղօթքներն ու երգերը . ապառնի գիպ-
ուածներուն գուշակութիւնները . մանաւանդ Ա՛ե-
սիային գալուն , և անոր թագաւորութեանը փառ-
քին , օգուտներուն և բնութեանը վրայ կատա-
րեալ և մանրամասն մարգարէութիւններ , որոնց-
մով Հին Ատակարանը լեցուն է : Այս ամէն
բաներուն վրայ՝ կը ցուցընէ թէ ամենէն յարմար
պարագաներուն տակն անգամ՝ ամենեկին ո՛րևիցէ
վարուց օրինակ մը բաւական չէ մարդուս բարո-
յակամբ վերակենդանացընելու :

Աոր Ատակարանին դիտաւարութիւնը ան է որ ,

Մստուծոյ օրէնքը արդէն յայտնուածէն աւելի պայծառ կերպով յայտնէ . և մանաւանդ՝ Յիսուս Քրիստոսի Մետարանով եղած փրկութեան ճամբան մարդոց սրվեցընէ : Մ, յս նպատակը ունենալուն համար, կը պարունակէ 'Սախ' Յիսուսի կենացը, մահուան, յարութեան և համբարձմանը վրայ պատմութիւն մը . Սակ մը որուն մէջ աստուածային և մարդկային բնութիւնները գաղտնի և անիմանալի կերպով մը միացած են : Մշխարհք եկաւ որ առ Մստուած ունեցած պարտքերնուս վրայ որչափ որ պէտք է տեղեկութիւն տայ և իւր հնազանդութեամբը, չարչարանքներովը, մահուամբը, յարութիւնովը և համբառնալովը ու միջնորդութիւնովը՝ քաւութեան և փրկութեան ճամբայ մը պատրաստէ : Արկրորդ՝ Քրիստոսի համբառնալէն մինչև քանի մը տարի ետքը քրիստոնէութեան յառաջադիմութեանը վրայ համառօտ պատմութիւն մը : Արրորդ՝ Թուղթերը՝ որ Մուքեալները իրենց ժամանակի մարդոցը տուին Մստուծոյ ներշնչութեամբը անոնց պիտանի խրատներ տալու համար : Մ, յս բոլոր գիրքը մէկ տեղ մեր փափաքածին չափ տեղեկութիւն կու տայ մեզի, առ Մստուած ունեցած պարտքերնուս, ապառնի վիճակին և քաւութեան ու երկնաւոր Լօր ընդունելի ըլլալու համար : Ալ ուստի կը հաւատանք թէ Մստուած ինչ որ յայտնեց և կ'ուզէ յայտնել իր կամացը վրայօք, Լին և 'Ար' Աստուծոսնը ամբողջ կ'ը պարունակեն .

Մի միայն ասոր մէջ գրուած բաները մարդուս խղճմտանքը կը պարտաւորէ և ուրիշ ամէն գրուածք և աւանդութիւն մարդոց խօսքն է : Ուստի կը տեսնենք թէ Մատուած ինչ միջոցներ տուաւ դէպ 'ի իրեն և առ ընկեր ունեցած պարտքերնիս ճանչնալու համար : Ա . Խղճմտանք մը տուաւ մեզի որ մեր պարտքերը մեզի կ'իմացընէ և մեզ կը խրատէ որ ընենք ան պարտքերը : Բ . Բողոր մեր շուրջի բաները այնպէս կարգադրեց , որ երբ որ իւր կամքը ընենք՝ երջանկութիւն կը վայելենք , և երբոր եղձանենք՝ ապերջանկութիւն կը կրենք : Ուստի եթէ միայն քննենք թէ գործք մը մեր և ուրիշներուն վրայ ինչ ներգործութիւններ ունի , կը սորվինք թէ Մատուած ի՞նչպէս կ'ուզէ որ գործենք : Գ . Երբոր բուն մեր չարութեամբը մեր խիղճը անկատար եղաւ և բնութեան լոյսէն մեր պարտքերը սորվելէն դադրեցանք , ան ատենը գրաւոր օրէնք մը տուաւ , որով մեր վրայ ունեցած կամքը կ'իմացընէ : Դ . Երբոր աս ալ բաւական չեղաւ մարդիկ մոլութենէն առաքինութեան դարձընելու , ժամանակին լրանալուն Մատուած իր Արդին խրկեց մեր պարտքերը սորվեցընելու , ու մեր մեղքերուն համար քաւութիւն ընելու և ան ումնուն՝ որ Յիսուս Վրիստոսի կը հաւատան ու կը գղջան , թողութիւն մեղաց ու յաւիտենական կեանք ընծայելու :

Եթէ աս այսպէս է , յայտնի է թէ մեր պատասխանատուութիւնը կ'աճի՝ բարոյական լուսոյ

աճմանը հետ: Այլ եթէ ան որ բնութեան օրէնքով Մատուծոյ կախքին անհնազանդ է, անպատասխանի է, ո՞րքան ահեղ պիտի ըլլայ անոնց դատապարտութիւնը, որ Մետարանին յստակ և պայծառ լուսոյ տակ և աս նոր տնօրէնութեան գթած պատրաստութիւններուն դէմ, անխորհուրդ անհնազանդութեան ընթացք մը բռնելու են դէպ 'ի Մատուած, ու փոխանակ հանդերձեալ աշխարհի համար ապրելու՝ այս աշխարհին համար կ'ապրին:

Արդ՝ պատանիները կը կարծեն թէ աս բոլոր բաները ուրիշներուն համար է ու չէ թէ իրենց համար: Բայց այսպէս չէ: Չէ՞ որ պատանիներուն խիղճն ալ զիրենք կը խրատէ: Պատանիները չի՞ն տեսներ իրենց և ուրիշներուն մէջ չարութիւնով յառաջ եկած թշուառութիւնը: Չի՞ն կարդար Սուրբ Գիորքին մէջ Մատուծոյ և մեր օրհնեալ Վրկչին մեղքի դէմ ունեցած ատելութիւնը և բարկութիւնը: Այլ թէ աս այսպէս է, ամէն պատանի այնպէս պատասխանատու է Մատուծոյ իր ունեցած տեղեկութեանը համար, որպէս թէ ծեր ըլլար: Ս'ենք ամէնքս ալ թէ ծեր և թէ պատանի, պէտք է որ զղջանք, Մատուծոյ հնազանդիք ու օրհնեալ Վրկչին հաւատանք:

Այլ թէ պատանիները աս ըսուած բաները աղէկ չեն հասկընար, իրենց ծնողացը կամ ուսուցիչներուն և կամ երեջներուն հարցունեն:

Հարցմունք :

1. Լստուածաշունչին մէջ ո՞ր գիրքին մէջն է մարգկային առաջին ցեղին պատմութիւնը :

2. Ո՞ր գիրքին մէջ կը գտնուի Հրէից պատմութիւնը՝ Ագիպտոսէն ելլելէն մինչև Բաբելոնի գերութիւնը :

3. Սովսիսական օրէնքը ո՞ր գիրքերուն մէջ կը պարունակուի :

4. Բարոյական, քաղաքական և արարողական օրէնքներուն մէջ ի՞նչ տարբերութիւն կայ :

5. Բարեպաշտ մարդոց աղօթքներովը և փառաբանութիւններովը ո՞ր գիրքը լեցուած է :

6. Վրիստոսի գալստեանը, բնութեանը և աշոր կենացը վրայ որոշ և մանրամասն մարգարեութիւնները ո՞ր գիրքը կը պարունակէ :

7. Վոր Ատակարանին մէջ ո՞ր գիրքերը Վրիստոսի կենացը պատմութիւնը կը պարունակէ :

8. Լնոր համբառնալէն ետքը Վրիստոնէութեան յառաջադիմութիւնը ո՞ր գիրքին մէջ կը պարունակուի :

9. Բացատրէ՛ Լստուծոյ ցուցըցած կերպը, որով մեր պարտքերը կը ճանչնանք :

10. Ինչո՞ւ համար Սուրբ Վիլք լսողներէն Լստուծոյ անհնազանդ եղողները հեթանոսներուն մէջ անհնազանդ եղողներէն չար են :

11. Պատանի մը որ Լստուծոյ անհնազանդ է՝ ծերիէ մը պական յանցաւոր է :

Մ Ե Ս Ն Բ

Մարդուն՝ առ Վստոսփձ. և՛ առ ընկեր ունեցած
դարձրեցը:

Մինչև հիմա ջանացինք մարդուս բարոյակա-
նին ինչ ըլլալը բացատրել, և իր բարոյական
լոյսը բղխած աղբիւրը ցուցնել: Այլ հիմա ալ
պիտի ձեռնարկեմ մարդկային պարտուցը վրայ
համառօտ բացատրութիւն մը ընել, որքան որ
կրնանք սորվիլ կամ բնական լոյսէն կամ Վստ-
ուածային յայտնութենէն: Սուրբ Գիւրքը կը
սորվեցրնէ թէ մարդուս բոլոր պարտքը միայն
սէր բառին վրայ կը կայանայ:

«Սիրէ քու Տէր Վստուածդ քու բոլոր սրտէդ
և սիրէ քու ընկերդ քու անձիդ պէս»: Ուստի
մարդուս պարտքերը երկու ընդհանուր բաժա-
նում ունին: Վռաջինը՝ Սէր առ Վստուած կամ
աստուածպաշտութիւն. Արկրորդը՝ սէր առ մարդ,
կամ առաքինութիւն. որոնց վրայ՝ պիտի խօսիմ:

Սէր աս Աստուած ,

կամ Աստուածազուգարո-նի-ն :

Գ Լ Ո Ի Խ Ե

ՉԱՍՏՈՒԾ ՍԻՐԵԼՈՒ ԿԱՐԿՈՅ ԸՐՈՅ :

Ամէն մարդ աս ընդին վրայ խորհածին պէս կը գիտնայ թէ զԱստուած սիրել, ու անոր հնազանդիլ պարտական է : Բայց մարդիկ ընդհարապէս այս բաներուն նշանակութեանը վրայ անորոշ գաղափար ունին :

Շատերը ոչ կը խոստովանին թէ պէտք է զԱստուած սիրել ու անոր հնազանդիլ, բայց նոյն ատեն Անոր կամացը դէմ կ'ընեն, և չեն խոհորթ թէ մեղք կը գործեն կոր : Ուրեմն մեր առ Աստուած ունեցած պարտուցը բնութիւնը կրցածնու չափ բացատրելու համար երկար խօսիլ արժան է : Ա. Ամէն բարեկիրթ զաւակներ գիտեն թէ ծնողաց հնազանդ ըլլալու են և զանոնք սիրելու են : Այլ աս պարտքը կ'ըզան, ինչու որ իրենց ծնողքն են . այսինքն, թէպէտև ուրիշ անձինք նոյնպէս իմաստուն և բարի են, սակայն առաւել պարտական կը ճանչնան անձերնին իրենց ծնողացը՝ քան թէ ուրիշ անձանց :

Ո՛վ չսարսափիր երբոր չար և անզգամ պա-

տանիններուն՝ իրենց ամենէն լաւ երկրային բարեկամներուն այսինքն ծնողացը վրայ խօսելու եղանակը կը դիտէ : Վննեցիր երբէք թէ ասանկ պատանիները ընդհանրապէս անկիրթ, մոլի և վնասակար ընկեր են : Բ. Վիցուք թէ մեր ծընողքը շատ իմաստուն, առաքինի և մարդասէր անձինք են, մեր պարտքերը ևս առաւել կ'աճին . և ան ատեն չէ թէ միայն ծնողքնիս ըլլալուն համար պիտի սիրենք, հապա առաքինի ըլլալնուն համար ալ : Վ՞նչ պիտի խորհինք անանկ տղու մը վրայ, որ թէպէտև այսպէս բարի ծնողք ունի, իր վարքովը կը ցուցնէ թէ զանոնք բանի տեղ չգնիր . ոչ անոնց խրատը մտիկ կ'ընէ, ոչ ալ անոնց հետ կենցաղավարութիւն կ'ընէ՝ խիստ կարևոր ժամանակներէն 'ի զատ, այլ դատարկակեաց, մոլի, և զզուելի ընկերներու հետ կը կենակցի :

Գ. Վաւ ըսենք թէ ասանկ տղայ մը շատ հիւանդ էր, կամ կոյր ու խուլ էր, և իր ծնողացը այս ազնիւ առաքինութիւնները միշտ անոր աղէկութեանը համար գործածուեցան, և քանի մը տարի երբոր մահուան չափ հիւանդ էր, իւր մայրը անկողինին քովը զինքը կը հսկէր, զինքը կը քաջալերէր, և վերջապէս գերեզման իջնալէն ազատեց : Ալ իր հայրը գիբկը կ'առնէր կը պաշտօններ երբոր դուքս ելլելու կարող էր, և երբոր կարողութիւն չունենար դուքս ելլելու, միշտ ընկերներ կը բերէր անոր քով և ամէն պէտք եղած բաները կ'ընէր զանիկայ տանը մէջ երջա-

նիկ ընելու համար : Մանաւանդ՝ դիցուք թէ իր ծնողքը հարուստ էին , ու հոյակապ պալատ մը շինեցին իրենց անօգնական զաւակը երջանիկ ընելու համար : Ասանկ տղի մը վրայ ի՞նչ պիտի խորհինք եթէ կուրուձեանը մէջ անդամ կամք ընէր իւր ծնողքէն փախչել , ու անոնց արգիլած տեղերը երթալ , և շարունակ ինքզինքը և ուրիշները փաստէր բոլոր անոնց բազմահոգութեան փոխարէն : Ի՞նչ պիտի մատածենք անանկ տղին վրայ որ բոլոր աս բարերարութիւններուն՝ ամենեկին երախտագիտութիւն չցուցրներ , և ունակարար չէ թէ միայն կը վշտացրնէ ծնողքը , հապա վարքովն ալ կը ցուցրնէ թէ անոնցմէ առաւել կը սիրէ մոլի մարդիկը :

Ամէն մարդ կը խոստովանի թէ այսպէս տղայ մը չէ թէ միայն յիմար է , այլ չար ալ է : Եւ ընդհակառակն , դիցուք թէ տղայ մը այսպէս պարագաներուն մէջ բարի և յարմար դժացութիւններ ունենայ դէպ ՚ի իւր ծնողացը : Հարկաւ անոնք իւր ծնողքն ըլլալուն համար կը պատուէ , կը յարգէ ու կը հնազանդի անոնց . և շատ իմաստուն և առաքինի անձինք ըլլալուն համար՝ ուրիշ մարդոց տուած խրատէն ու խորհուրդէն ևս առաւել անոնցը կ'ընտրէ , և անոնց հետ ընկերանալը բոլոր ուրիշ մարդոց ընկերութենէն աւելի յարգի կը սեպէ : Իբ երջանկութեանը յառաջագիմովեան համար ամէն միջոցը գործածելուն երախտագէտ կ'ըլլայ անոնց , և ձեռքէն ե-

կած առէն բանը կ'ընէ զանոնք հաճեցընելու համար՝ ինքզինքը և ուրիշները հաճեցընելէն առաւել : Էհմա կ'արծեմ՝ թէ առէն մարդ ծեր և թէ պատանի կը տ'սնեն թէ ճիշդ աս է կերպը՝ որով այնպէս տղայ մը այնպէս ծնողաց հետ վարուիլ պարտական է :

Ը. որ՝ այս խօսքերը դարձընենք մեր առ Ըստուած ունեցած առնչութիւններուն, և առէն մարդ պիտի տեսնայ թէ մեր բոլոր ուրիշ էականերուն ունեցած պարտքերէն անհուն չափով առաւել պարտական ենք զանիկայ սիրելու և անոր հնազանդելու :

Ա. Մեր Ըրարիչն ու Պաշտպանողն է : Ըն ստեղծեց մեզ մեր բոլոր ունեցած կարողութիւններովը, և առէն վայրկեան մեզ կը պահէ : Ըն ռանց իւր զօրութեանը ոչ կրնանք տեսնել, ոչ լսել, ոչ ճաշակել, ոչ ալ զգալ, ոչ կրնանք խորհիլ, ոչ յիշել, ոչ հաճութիւն և ոչ ալ տհաճութիւն կրնանք զգալ, ոչ կրնանք սիրել, ոչ ալ կրնանք սիրուիլ : Ըողոր ունեցածնիս իրն է, և քնն որ ընենք, միայն իւր կամօքը յոչնչէ արդիւնաւորած է :

Ը. որ՝ այն Ըյակը՝ որ ասանկ մասնաւոր կերպով մեր Տէրն է, մեր յարգութեանը արժան է՝ այն որ առէն վայրկեան մեզ կը պաշտպանէ, պարտիմք միշտ անոր ներկայութիւնը յիշել և անոր վրայ խորհիլ :

Բ. Ըսկէց 'ի վատ մտածէ Ըստուծոյ ստորոտ
Յ է

գերեացը վրայ, և խորհէ թէ Բնչ կերպով խորհրդածութիւն ընել պարտական ես : Ընհունապէս Խմաստուն , Հաւատարիմ, Լքդար , Սուրբ ու Գլխած է Ընիկայ :

Աթէ մեր բարոյական բնութեամբը պարտական ենք այս յատկութիւնները սիրել ու յարգել, և եթէ մասնաւորապէս պարտական ենք մեր ծնողացը քով գտնուած յատկութիւնները սիրելու ու յարգելու , որքան ևս առաւել մեր երկնային Հօրը քով եղածները . որոնք ուրիշ էակի մը ունեցածէն այնչափ պատուական և տարբեր են , որչափ որ արարիչը իւր արարածներէն գերազանց և մեծ է :

Գ . Եւ մանաւանդ , արարչին այս բոլոր ազդողելիքները 'ի սկզբանէ հետէ մեր երջանկութեանը համար գործածուեցան : Եւ պագային վրայ այնքան տգէտ ենք , որքան որ կոյր մը իւր շուրջի անարկաներուն վրայ տգէտ է . սակայն Եստուած ամէն բան պատրաստեց մեզի համար :

Եւ մէն վայրկեան ինքս վտանգաւոր հիւանդի չափ մահուան կենթակայ ենք . սակայն Եստուած մեզ մինչև այս ժամս պահեց : Ինչ մը ստեղծեալ զսրութիւն չունինք , սակայն Եստուած այս աշխարհս բարիքով լեցուն ստեղծեց , և մեր մասնաւոր երջանկութեանը համար պատրաստեց : Բայց ժամանակէն մեռնինք պիտի , բայց զինքը սիրողներուն անանկ փառաւոր և գերագոյն երջանկութեան աշխարհ մը ստեղծեց , որ բնաւ մեր

Վարքին սակ չկնար : Արբոր ամէնքս ալ մեղա-
ւոր էինք , և եր արդար բարկութեանը ենթակայ ,
ինքը պնայէս սիրեց զաշխարհը , որ մէկ հասիկ
սիրելի Արդին հօս խրկեց , որ ով որ անոր հաւա-
սայ , պիտի չկորսուի , հայտ յաւիտենական
կեանք պիտի ժառանգէ : Արդարև բոլոր աս բա-
ները երախտագիտութեան ու սիրոյ արժանի են :
Աւ եթէ սէրը ու երախտագիտութիւնը բարեբա-
րին բնաւորութեանը , ու ընծայած պարզեանքուն
հասմմաստ պէտք է ըլլայ , յոյժով մեր երկնային
Հայրը ստուգապէս բոլոր ուրիշ բաներէն անչա-
փելի համմմատութեամբ առաւել սիրելու ենք ու
երախտագէտ ըլլալու ենք : Աւրիշ խօսքով՝ բոլոր
արտով սիրելու ենք , գերագոյն և վեմ՝ կերպով :
Աւ նակ՝ դնենք թէ իրօք յարգութեան , սի-
րոյ , երախտագիտութեան զգացումներ ունինք առ
Աստուած , որոնց ինքն արժանի է , բայց զանոնք
ինչպէս ցուցնելու ենք : (Յայրանի է . Արովհետև
ամէն բան Աստուծոյ գործքն է և զԱստուած միշտ
մեր յիշողութեան մեջ պահելու դիտարկութեամբ
եղած են՝ վանարոյ ամէն բան մեր միտքը կը բե-
րեն զանիկայ : Ա . Աթէ անոր վայ խորհինք ,
իւր ստորոգելիքները մեզ սիրով , ու կրախտագի-
տութեամբ և զարմանքով կը լեցնեն : Աւ ո-
րովհետև այս ամէն բաները մեզի համար եղան ,
իր ձեռքէն եկած ամէն շնորհքը երախտագիտու-
թեան և երկրպագութեան կը յորդորեն զմեզ :
Վոլորը այս չէ . որովհետև Աստուածութեան մէջ

եղած ամէն երկրպագութիւն ստորագելիքները անհուն
և անչափ գերազանց և՛ պատուականագոյն են
երկրիս վրայ ընդունուած որ և իցէ բարութենէն .
և որովհետև բոլոր հակմերուն մեղի ունեցած
յարաբերութիւններէն թիտ գերազանց յարա-
բերութիւններ ունի մեզի, անոր համար այս զգա-
յումները չէ թէ միայն շարունակ ըլլալու են, այլ
որքան որ դէպ 'ի բոլոր ուրիշ հակմերուն ունինք,
դէպ 'ի անոր անհունարար առաւել ունենալու
ենք : Բ. Վիցուք թէ ճիշդ ասանկ ընենք .
յայտնի է թէ այսպէս զգացում մը մեր վարուցը
վրայ շատ ներգործութիւն պիտի ընէ . ասանկ ար-
դար, գթած ու սուրբ Աչակ մը սիրելով՝ մենք
արգարութեամբ, գթութեամբ ու սրբութեամբ
պիտի գործենք, և ինչքը անանկ երախտադիտու-
թեամբ սիրելովնիս ամէն բանէն առաւել պիտի
փափաքինք որ ան ալ մեղ սիրէ, վասն զի սի-
րոյ բնութիւնը ճիշդ այս է . ուտափ պէտք է ա-
մէն բան անոր հաճելի գործելք և ամէն բանէն
աւելի իր կամբը գիտնալը ու ընենք : Այս եթէ
այս կերպով գործենք ան Աստուած՝ բնաւ բան մը
անկէց ընտիր պիտի չանդենք :

Բոլոր հաճութեանց և օգտից ու կրից թե-
լադրութիւններուն դէմ այս բաւական պատաս-
խան է թէ, այս մեծ շարութիւնը ինչպէս կրնանք
համարձակիլ գործելու և Աստուծոյ դէմ մեղան-
չելու :

Գ. Այս որովհետև մեզ գերագոյն փափաքն

ընթացում է Աստուծոյ հաճելի ըլլալ, ուրեմն, մեծ յօժարութեամբ և զուարթամտութեամբ աշխատելու ենք սորվիլ իր սուրբ կամքը թէ իր գործքերուն մէջ և թէ Սուրբ Գրոց մէջ: Բերկբութիւնով քննելու ենք թէ ինչ կերպով վարուեցաւ ազգաց և անհատից հետ, որ մենք ալ սորվինք ան կանոնները, որով մեզ կրկառավարէ: Սանաւանդ մեծ ջանքով իւր գրաւոր խօսքերը կարդալու ենք, որ աս աշխարհիս մէջ եղած ժախանկնիս մեր վրայ ունեցած կամքը և հանդերձեալին համար ըջած պատրաստութիւնները սորվինք: Եւ այս կամքը անգամ մը սորվելէն ետքը մեր սրտերուն առաջին և ամենէն զօրաւոր ազդուժը անոր հնաշանդին ըլլալու է, հոգ չէ ինչ կամ քանի և կամ քորան հակառակ ազդեցութիւններ ըլլան:

Դ. Եւ եթէ այս այսպէս է որ Աստուծոյ ստեղծած աճէն բաները մեզի իր ստորագելիքները կը սորվեցնեն և ՚ի հարկէ այն դիտաւորութեամբ ալ եղած են որ մեր խորհալքները առ Աստուած ուղղելը, ուրեմն գիտութիւն ստանալու ամենամեծ շարժառիթն այս ըլլալու է թէ այս կերպով կրնանք գիտութիւն ունենալ՝ զմեզ և ամէն բան Ստեղծողին գործքերուն և բնաւորութեանը վրայ: Եւ ևս աւելի, ինչպէս որ ասիկայ ըլլալու է գիտութեամբ աճելու ամենազօրաւոր գրդումնիս, անանկ ալ մեր գիտութեան վախճանն այն ըլլալու է: Երկրորդ անին դոյները, վարդին հոտը, փոթորիկին

ահեղութիւնը, կարկառասահանքներուն գոչուծը
ինչպէս որ գեղեցկութեան կամ ահեղութեան
զգացումն կը զարթուցանեն, նմանապէս ալ աստ-
ուածաբաշտութեան զգացումներ ալ զարթուցանե-
լու են :

Ասանկով հանապազ աս բերկրալի զգացմունքը
և ճանաչումը պիտի ունենանք թէ Աստուծոյ մէջ կը
բնակինք և անով կեամք և կը շարժինք և ենք :

Եւ Ալ գարձեալ, որովհետև Աստուած զիջաւ
ինքզինքը աւելի կատարեալ յայտնել գրաւոր
պատգամով, և իր բնաւորութեանը վրայ առաւել
փառաւոր տեղեկութիւն տուաւ, և մեր լեզուովը
մեզի հետ խօսելու հաճեցաւ, և մանաւանդ մեր
վարուցը Աստուածային օրինակ մը տուաւ, և մե-
զի իմացուց թէ կ'ուզէ որ իրեն հետ խօսինք ա-
ղօթքով, միջնորդով և իր հետ հաղորդակցութիւն
ունենանք աստուածապաշտ հոգւոյ բոլոր զգա-
ցումներուն բարբառովը, վասնորոյ յայտնի է թէ
մեր արածութիւններուն խիստ ընտիրներն են ա-
ստիք, և մեզի բնական ըլլալու են բարեկամի կեն-
ցաղավարութեան պէս, կամ զաւկի մը իր սիրե-
լի և աղնիւ ծնողացը հետ ունեցած կենակցու-
թեանը պէս : Ալ ոչ ոք կը տարակուսի կարծեմ,
թէ պէտք է մարդս առ Աստուած ասանկ զգաց-
մունք ունենայ : Բայց որքան քիչ և տկար կը
տեսնուի այսպիսի զգացմունք մարդոց գործքերուն
մէջ : Ալ այսպիսի բարոյական բնաւորութիւն մը
որքան քիչ կը տեսնուի աշխարհիս մէջ : Ամէն

դար և ամէն անգամ վկայութիւն կու տայ թէ մարդս մեղանշական է և առ Աստուած իւր բարոյական զգացումները շատ տարբեր են ան զգացումներէն, որ պէտք է ունենայ իր այսպիսի Արարչին վրայ: Այժմէ այսպէս է, վերջապէս վայելուչ է հարցը նել թէ մեղաւոր ըլլալնէս ետքը առ Աստուած ունենալու յարմար բնաւորութիւննիս որո՞նք են: Ա. Յայտնի է թէ՛ թէ պէտք է մենք փոխուած ենք, սակայն Աստուած նոյն է և անփոփոխ: Իւր ստորոգելիքները նոյն են, և նոյնպէս սիրելի են, և դէպ ՚ի մեզ ունեցած վարմունքները առջի պէս արդար և բարի են: Աւստի ճիշդ նոյնպէս պարտական ենք զանհիկայ սիրելու, անոր հնազանդելու, և նոյն բարոյական կատարելութիւնը կրկին ձեռք ձգել ջանալու ենք, որպէս թէ բնաւ չմեղանշեցինք:

Բ. Այժմէ Աստուած միշտ բարի և արդար և սուրբ է, մեր անոր դէմ մեղքերը խիստ չար են: Աւրեմն մեզի կը վայելէ որ այս բանը խոստովանինք և ինչպէս որ ինքզինքնիս կը դատապարտենք անանկ ալ զանհիկայ արդարացընենք: Թէպէտև պետք է որ անցած յանցանքներնուս համար անկեղծ արտամութեամբ ինչ որ անոր անհաճոյ է անկեց քաշուինք, և ինչպէս որ ՚ի սկզբանէ մեր պարտքըն է, անկեղծ, որդիական հնազանդութիւն ցուցընենք ամէն բանի մէջ:

Աս է ինչ որ Աստուած աշունջը զղջումն բարով կ'իմացընէ:

Գ. 'Եւ մանաւանդ, եթէ մեր երկնաւոր
Հայրը քաւութեան ճամբայ մը պատրաստեց,
ճամբայ մը՝ որ միայն անով պիտի ընդունէ մեզ
մեղանշականներս, մեզի կը վայելէ որ սիրով և
փափաքով փնտռենք թէ ինչ է ան ճամբան, և
ան իմաստուն և գթած պայմաններուն հնազան-
դինք որ մեր վրկութեանը համար սահմանեց :
Եթէ ասիկայ զանց առնենք, յանցաւոր ենք չէ
թէ միայն Մատուցոյ դէմ գործած մեղքերնուս
համար, այլ մեղքի մէջ շարունակելնուս համար
ալ . թէպէտև մեր Մարիչք անկէց ազատելու մի-
ջոց մը պատրաստեց, ու քաւութեան ճամբայ
մը հնարեց՝ կատարեալ և ամենայարմար և գթած
պայմաններով : Մասնկ վարուց չար ընթացքին
վրայ Սուրբ Գիւրջը յայտնի խօսքով կը խօսի :
"Մս է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհք
եկաւ, և մարդիկ իսաւարը լոյսէն առաւել սիրու-
ցին, ինչու որ իրենց գործքերը չար էին" : Ին-
չոր ըսածներէս յայտնի է թէ առ Մատուցած ունի-
ցած յարաբերութիւննիս հետևեալ պարտուց տակ
կը դնեն զմեզ :

Ա. Մէն բանէն աւելի գինքը պարտինք սի-
րել : Բ. Մէն բանի մէջ կատարելապէս հնազան-
դելու ենք անոր, թէպէտև մեր բաղձանագ, կրից
և կամաց դէմ ըլլան, և թէպէտև տիեզերքին
մէջ բոլոր բաները մեզի հակառակ ըլլան : Գ. Մեր
տնցեալ և ներկայ բազմաթիւ մեղքերուն համար
դձնակարար ապաշաւեալ և կտարած սիրտ մը ու-

Նենալու ենք : Գ . Ընոր սահմանած պայմաններով պատրաստուած ողորմութիւնը, ընդունելու ենք կամ՝ մարեպաշտ գղջացեալ և աստուածապաշտ կիտանք մը վարելու ենք : Բնդ հակառակն առ Մատուած ունեցած պարտքերնիս կարգիլեն՝ Ա . Առապաշտութիւնը, կամ որ և իցէ : Բան սիրել, որ անոր հակառակ է կամ զանիկայ սիրելու արգելք է : Առ և Գարգիլեն ոչ երկինքին մէջ ոչ երկրիս վրայ թէ տեսանելի և թէ անտեսանելի բանի մը կամ էակի մը երկրպագութիւն ընելն, բայց միայն իրեն : Բ . Ընոր պատուիրանաց գէմ եղած մեր կամ այլոց փափաքները կատարելը : Գ . Ընգեղջ ապրիլը կամ անոր դէմ գործած մեղքերնուս վրայ զղում չընելը : Գ . Իւր փրկութեան համար պատրաստած ճամբան զանց առնելով ապրելը : Կամ թէ ըսենք՝ առ Մատուած ունեցած պարտքերնիս կ'արգիլեն անհոգութիւնը, հեշտասիրութիւնը, անառակութիւնը և անկրօնութիւնը ինչ անուամբ որ կոչուին կամ ինչ պատրուակի տակ որ քաղաքկուին :

Եւ վերջապէս որովհետև ամէն գործքերնիս կամ Մատուծոյ կամացը համեմատ է կամ հակառակ, վստմորոյ առ մարդ եղած պարտքերը, առ Մատուած ալ պարտք են . ըսել է որ մեր առ մարդ ունեցած յարաբերութեան պատճառաւ ինչ պարտք որ ունիք, առ Մատուած ունեցած յարաբերութեանց համար ալ պարտք է . ինչու որ Մատուած կը պահանջէ զանոնք մեզմէ :

Ուստի կը տեսնենք թէ, տարբերութիւն կայ պարզապէս մեր առ Վստուած ունեցած պարտուց և ան պարտուց մէջ՝ որ և առ մարդ և առ Վստուած ունինք : Վստոյնը մարդկային օրինաց իշխանութենէն և բռնութենէն գեր 'ի վերոյ է և անկախ : Իսկ երկրորդը իշխանութեան տակ է : Եւ ով որ զանց կ'առնէ ու չկատարեր, իրաւամբ կը պատժուի : Սակայն մարդիկ կը պատժեն յանցաւորը՝ չէ թէ իր գործքերը Վստուծոյ անհաճոյ ըլլալուն համար, այլ իր առ մարդ ունեցած պարտքերը զանց առնելուն համար :

Հարցմանք :

1. Օ՛վստուած սիրելը ու անոր հնազանդիլը քու պարտքդ ըլլալը կ'զգաս՝ ինչպէս որ կ'զգաս թէ ծնողքներդ սիրելու ես և անոնց հնազանդելու ես :

2. Չար և անհնազանդ զաւակ մը իւր բարերար և բարի ծնողաց հետ թ'նչպէս կը վարուի :

3. Իտրի և հնազանդ զաւակ մը թ'նչպէս պիտի վարուի :

4. Շ'չմարտապէս մեր ծնողքը ո՞րն է, Վստուած, թէ մեր հայրն աւ մայրը :

5. Ո՞րն է ամենխմտտ և ամենաբարի դէպ'ի մեղի, Վստուած, կամ հայրն ու մայրը :

6. Ո՞րը մեծագոյն պարտք է, զՎստուած սիրելը, թէ մեր ծնողքը :

7. Աստուծոյ հետ ինչպէս կը վարուինք, սիրելի ու երախտագէտ զաւակներո՞ւ պէս, թէ ապերախտ ու անհնազանդ զաւակներունման :

8. Ըսէ քանի մը պատճառներ որոնց համար պարտական եմք զՆստուած սիրել և անոր հնազանդիլ :

9. զՆստուած ճշմարտագէս սիրող ու անոր ծառայող անձ մը ինչպէս կը վարուի :

10. Եթէ իրօք Նստուած կը սիրենք, մեր բոլոր գործերուն մէջ մեր փափաքը ինչ ըլլալու է :

11. Մեր մեղաւոր ըլլալը զՆստուած սիրելու և անոր հնազանդելու պարտքէն ազատ կ'ընէ՞ զմեզ :

12. Եթէ մեղաւոր եմք, և զՆստուած սիրելու նոյն պարտուց տակն եմք, ուրիշ պարտուց տակ չենք, և ինչ են անոնք :

13. Նստուած իւր Որդին մեզի համար մեռնելու տալովը ինչ պարտուց տակ ինկանք :

14. Գիցուք թէ մեր մեղքերուն վրայ չեմք զղջար, ու Քրիստոսի չեմք հաւատար, աւելի աղէկ վիճակի՞ մէջ պիտի ըլլանք, քան թէ պիտի ըլլայինք եթէ Փրկիչ սահմանուած չողջար :

15. Նստանկով առաւել գէշ վիճակի մէջ պիտի ըլլամք : Եւ ինչո՞ւ :

16. Սուրբ Գիորքը ինչ տարբերութիւն կը դրնէ հեթանոսաց և Նահտարանը լսողաց յանցանաց մէջ :

17. Արդաւ ըսէ՛ առ Մատուած ունեցած պարտքերնիս :

18. Ի՞նչ է կռապոշտութիւնը :

19. Սարդ մը որ ոչ կուռքի, ոչ ալ պատկերի երկրպագութիւն կ'ընէ, կրնայ՝ կռապաշտ ըլլալ տակաւին :

20. Արբոր այսինչ բանը ընելու շատ կը ցանկանք, սյս բաւական պատճա՞ռ է ան բանը ընելու : Ինչո՞ւ : Ի՞նչ բան տիրելու է մեր փափաքանացը :

21. Օ, Մատուած կրնա՞նք սիրել եթէ անհոգութեամբ և առանց նկատման անոր դէմ մեղանչենք : Ի՞նչ զգացումն ունենալու ենք երբոր անոր դէմ մեղանչենք :

22. Օ, Մատուած կրնա՞նք սիրել. եթէ սուտ խօսինք. ծնողաց անհնազանդ ըլլանք. գէշ խօսքեր խօսինք և անոր անունը պարտպ տեղը գործածենք :

23. ()րինակ մը տուր որ միայն առ Մատուած պարտք է՝ և ուրիշ օրինակ մը որ և առ մարդ և առ Մատուած պարտք է :

24. Սարդիկ լոկ առ Մատուած եղած պարտքը բռնութեամբ կատարել տալու իրաւունք ունին :



Գ Լ Ա Ի Խ Բ

Ա Ղ Յ Ի Կ :



Յ Օ Գ Ա Ի Ա Ժ Ը

Ի Ն Ն Է Ա Ղ Յ Ի Կ :

Որովհետև առ Աստուած եղած ջերմեռանդ
 Կիրքերը և զգացումները բարի բնաւորութեան
 շատ մեծ օգուտ ունին, անոր համար Աստուած
 հաճեցաւ զանոնք մշակելու համար մասնաւոր մի-
 ջոցներ սահմանել: Ասոնք են Աղծք, Սուրբ
 ()ը . այսինքն Ախրակին: Այս գլխուն մէջ ա-
 ղծքի վրայ պիտի խօսիմ: 'Այս' Աղծքին բը-
 նութեանը վրայ: Արկրորդ՝ հարկաւորութեան
 վրայ: Արրորդ՝ օգտին վրայ:

Աղծքը մեր հոգիներուն՝ հոգեղէն և անտե-
 սանելի Արարչին հետ հաղորդակցութիւնն է:
 'Աստուած հոգի է, և անոնք որ երկրպագութիւն
 կ'ընեն, պէտք է որ հոգւով և ճշմարտութիւնով
 ընեն':

Ինչպէս որ հլու և սիրելի զաւակ մը բոլոր իր
 հոգերը, տրամութիւնները և պակասութիւննե-
 րը, իր իմաստուն և առաքինի ու սիրելի ծնողաց
 կը բանայ կը յայտնէ, և իւր յիսալմունքները կը
 խոստովանի, ասանկ ալ մենք ամենքս հրաւիրեալ

ենք մեր երկնաւոր Լօրը մօտենալու և անոր հետ հաղորդակցելու աղօթքով և աղաչանքով :

Լստինքն՝ աղօթքն է Լստուծոյ երկրպագութիւն ընել, պարտքերնիս խոստովանիլ, շնորհակալութիւն մատուցանել, մեղքերնիս խոստովանիլ, մեր վարքերը շիտկելու դիտաւորութիւննիս նորոգել զօրացընել, ժամանակաւոր և հոգևոր շնորհաց և պարգևաց համար աղաչանք ընել : Լստնք ամէնը յարմար և վայելուչ զգացումներով ըլլալու են : Լստնք կը պահանջին որ Լստուծոյ բնութեան և ստորագելեացը, և անոր առ մեզ ունեցած յարաբերութեանց վրայ հաւատք, և մեր դէպ 'ի անոր ունեցած յարաբերութեանց և պարտոց վրայ ներքին զգացումն ունենանք : Սեր ժեղանչական, անօգնական և թշուառ ըլլալը խոստովանինք, անկէց ընդունած բոլոր շնորհաց համար անկերճ երախտագիտութիւն մատուցանենք : Եւ և բոլոր իր պատուիրանքները պահելու համար հաստատուն և անփոփոխ դիտաւորութիւն, իւր կամացը կատարեալ հնազանդութիւն, իւր ճշմարտախօսութեան վրայ կատարեալ վստահութիւն, հոգևոր օրհնութիւններուն համար ըրած աղօթքնիս կատարուելու զօրաւոր բաղձանք և բոլոր մարդոց հետ խաղաղութեան հոգի մը ունենանք :

Չենք պնդեր թէ աս ամէն զգացումները միշտ և մի և նոյն ժամանակ 'ի գործ դնելու ենք, այլ 'իսյն զանոնք՝ որ մեր աղաչանսցը և խնդրուարոցը արժան և պէտք է : Եւ նայելու ենք որ աս

զգացումներուն հակառակ բան մը չընենք : Ա՞ս է հոգիով աղօթքը որ Աստուած խոտացաւ պատասխանելու, այսինքն ընդունելու :

Աղօթքը կը բաժանի յառանձին՝ յընտանեկան և յընկերական կամ 'ի միաբանական :

'Կախ' Առանձին աղօթք : Արովհետեւ առանձին աղօթելու ժամանակնիս մեր նպատակը Աստուծոյ հետ անձամբ հաղորդակցութիւն ունենալ է, անոր համար պատուէր կայ մեզի որ անանկ ժամանակներ մեր խուցը մտնենք ու դուռը գոցենք, ու մեր Լօղը 'ի ծածուկ աղօթենք, մեր կարօտութիւնները և խնդրուածքները պէտք է որ պատշաճ կերպով ցուցնենք՝ բայց ազատաբար և մասնաւորաբար : Եւ որովհետեւ Աստուծոյ հետ աս հաղորդակցութիւնը երևելի միջոց մըն է չընկճելու տեսանելի և ժամանակաւոր բաներուն շարունական ճնշումէն, վասնորոյ յաճախակի և ունակաբար ըլլալու է աս հաղորդակցութիւնը : Ինչպէս Ղաւիթ կ'ըսէ "Աստու, կէս օր և երեկոյ քեզի կը կանչեմ" :

Երկրորդ՝ Ընտանեկան աղօթք : Արովհետեւ կնկան ու երկան, ծնողաց և զաւակաց, եղբօր և քրոջ առնչութիւնները կամ կապակցութիւնները երկրին վրայ ունեցած ամէն բանէն մտերիմ և սիրելի է, և որովհետեւ աս առնչութեանց պատճառաւ իւրաքանչիւրոց գրէթէ բոլոր ուրախութիւնները ու տրամուլթիւնները իր հետ կենակցողներուն կը հաղորդին, վասնորոյ մեծապէս վա-

յիւրուչ է որ ամէնքս 'ի միասին մեր պակասուած թիւնները, կարօտութիւնները Աստուծոյ յայտնենք, և անոր շնորհակալութիւն մատուցանենք: Աս ընտանեկան աղօթքին՝ ծնողաց և զաւակաց վրայ ըրած բարոյական ներգործութիւնը՝ ամէն խոհուն ծնողաց վրայ պարտք կը դնէ որ անխափան աս պարտքը կատարեն:

Արրորդ՝ Ընկերական աղօթք: Արովհետև մի և նոյն ընկերութեան անդամները շարունակ ընկերական շնորհքներ կ'ընդունին իրենց Արարչէն, անոր համար վայելուչ է որ ընկերութեամբ ալ խոստովանին ընդունածնին:

Աստուածպաշտութիւնը ըստ մասին ընկերական սկզբունք մըն է, մարդիկ կը միացընէ իրարու աղէկութիւն ընելու ջանքով: անոր համար Աստուածպաշտութիւնը բարեպաշտ ընկերութեանց մէկ տեղ ժողուելով կը մշակուի և կը զարգանայ: Ալ ասիկայ ժողովրդոց բարոյականը յառաջ տանելու այնչափ օգտակար է, որ առանց անոր բռնաւ տեղ մը մարդուս յառաջադիմութեան համար ջանք մը չյաջողեցաւ: Ընկերական աղօթքին օգտին վրայ արդարև ասկէց աւելի բան մը ըսել պէտք չէ:

Հարցումն է:

1. Ի՞նչ պատճառաւ Աստուած մեզմէ աղօթք ընել կը պահանջէ:

2. Ի՞նչ է աղօթքը :
3. Այլոց հետ հասարակ կենցաղավարութեան մէջ ի՞նչ բան կայ , որ աղօթքի կը նմանի :
4. Ի՞նչ ըսել կ'ուզես Աստուծոյ մեզի հետ՝ և մեր անոր հետ ունեցած առնչութիւնները ըսելով :
5. Մեր մեղանչական ըլլալը խոստովանել ըսելով ի՞նչ ըսել կ'ուզես :
6. Աստուծմէ ի՞նչ շնորհքներ կ'ընդունինք ըսէ՛ ոմանք :
7. Աստուծոյ ճշմարտութեան վրայ կատարեալ վստահութիւն ըսելով ի՞նչ կ'իմանանք :
8. Աստուծոյ կամացը հնազանդելու է ըսելը ի՞նչ ըսել է :
9. Ա՛յն մարդոց հետ խաղաղութիւն ունենալ ի՞նչ ըսել է :
10. Ո՛ւր գրուած է թէ՛ եթէ մենք մարդոց յանցանաց թողութիւն չտանք , մեր երկնաւոր Հայրն ալ մեզի թողութիւն պիտի չտայ :
11. Դիցուք թէ աղօթք ընելու ժամանակ մէկուն բարկացած ենք կամ մէկուն վրէժխնդիր եղած ենք , Աստուած պիտի ընդունէ՞ մեր աղօթքը :
12. Բացատրէ՛ նայիմ՝ աղօթք ընելու ժամանակ ի՞նչ զգացումներ ունենալու ենք :
13. Պատանիները ի՞նչ կերպով վարուելու են ընթանիքին մէջ երբոր իրենց ծնողքը աղօթք կ'ընեն :
14. Ա՛յն ծնողք պարտակա՞ն է իւր զաւկրնե՛րուն հետ աղօթք ընել :

ՅՕԴՈՒԱԾ Բ

Յառօրէն պարտաւոր Մշակիչ :

Մշակայ մեր առ Մատուած ունեցած յարաբե-
րութիւններէն յայտնի է :

Նախ՝ մենք բողբոջին անզօր ենք , և ապա-
գային վրայ ալ բողբոջին տգէտ , և բուն մեր կե-
նացը և անոր հարկաւոր պարգեւաց համար էապէս
Մատուծմէ կախում ունինք : Ո՞րքան յարմար և
վայելուչ է որ մեր ամէն վայրկեան կարօտ եղած
պարգեւաց համար երկնաւոր Հօրը աղաչենք , և
ամէն վայրկեան առանց մեր իրաւանց ընդունած
պարգեւնիս խոնարհութեամբ և շնորհակալութեամբ
խոստովանինք :

Երկրորդ՝ ասիկայ ընելու ենք մանաւանդ՝ եր-
բոր կը յիշենք թէ մեղաւոր ենք , և պարգև ըն-
գունելու բոլոր իրաւունքնիս կորսընցուցինք , և Մա-
տուծոյ բարկութեանը արժանի ենք , և թէ ամէն
աւուր յանցանքներնուս համար թողութեան և
Սուրբ Հոգւոյն մաքրիչ զօրութեանը կարօտ ենք՝
որ մեր մեղանչական բնութիւնը մաքրէ , ու երա-
նելի անմահութեան համար պատրաստէ զմեզ :

Երրորդ՝ Մատուծոյ վրայ ապաւինելու այսպէս
բնաւորութիւն ունենալը աս կենցաղիս երջանկու-
թեանը համար հարկաւոր է :

Չորրորդ՝ ան զգացումները՝ որ աղօթելու ժա-

մանակ պէտք են, առաքինութեան մէջ յառաջ երթալու համար շատ հարկաւոր են :

Լ'ղօթքի պարտականութիւնը Սուրբ Գրոց մէջ շատ տեղ կը յիշուի :

Վախ՝ շատ անգամ յայտնի խօսքերով հրամայուած է. ինչպէս «Լ'նդադար աղօթէ» : Ա խօսք . Ե . 17 : «Լ'մէն իժիր ամէն բանի համար գոհութիւն տուէք շօրը ու Լ'ստուծոյ՝ մեր Տէր Աստուծոյ Վրիստոսի անունովը» : Երկր . Ե . 20 : «Վան մը մի հոգար. հապա ամէն աղօթքով ու ինդրուածքով՝ գոհութիւնով ձեր խնդրուածքը Լ'ստուծոյ յայտնի ըլլայ» : Վիլի . Գ . 6 : «Ուստի կ'աղաչեմ ամէն բանէն առաջ՝ աղօթք ընել, խնդրուած, աղաչանք, գոհութիւն ամէն մարդոց համար» : Ա Տէր . Բ . 1 :

Երկրորդ՝ Լ'ստուած Սուրբ Գրոց մէջ կ'իմացընէ մեզի թէ, այս պայմանաւ պարգև պիտի ընծայէ . այսինքն խնդրելու ենք՝ ընդունելու համար : «Նապա թէ որ ձեզմէ մէկը իմաստութեանէ պակասած ըլլայ, թող խնդրէ Լ'ստուծմէ՝ որ ամէնուն առատապէս կու տայ՝ ու չնախատեր, և պիտի տրուի իրեն» : Աս . Ա . 3 :

«Խնդրեցէք՝ և պիտի տրուի ձեզի, փնտռեցէք՝ և պիտի գտնաք, չալեցէք՝ և պիտի բացուի ձեզի» : Մատթ . Է . 7 :

Երրորդ՝ Սուրբ Վիրքը կ'ըսէ թէ աղօթքի սովորութիւնը արդարը չարէն կ'որոշէ : «Լ'մենակարողը ինչ է որ անոր պիտի ծառայենք, և ինչ

պիտի չահինք թէ որ անոր աղօթենք" : Յ. Բ. ԻԱ .
15 : "Ամբարիշտը իր երեսի բարկութեանը համար
Լստուած չի նտըռեր, բոլորովին իր մաքին մէջ
Լստուած չկայ" : Սուր. Ժ . 4 :

Չորրորդ՝ Սուրբ Գրոց մէջ շատ օրինակներ
կան, որ զանազան պարագաներու մէջ աղօթքը
մասնաւոր կերպով ընդունուած ու կատարուած է :
Տես Լքրահամին աղօթքը Սողոմին համար : Իս-
րայէլացոց աղօթքը՝ երբոր Ագիպտոսի մէջ գե-
րութեան մէջ էին : Սուսէսին աղօթքը՝ անա-
պատին Իսրայէլացոց համար : Աղիային աղօթ-
քը՝ երաշտութեան և անձրևի համար : Ալեմիա-
յին աղօթքը՝ Հրէից վերադարձին համար : Գա-
նիէլի աղօթքը՝ նոյն բանին համար, և Լստուծոյ
գիտաւորութեանց վրայ Լստուածային բացատրու-
թեան համար : Ինչ բան որ Լստուած այնքան
կը համոզէ մեզ որ ընենք, ոչ միայն պարտք է՝
հապա խիստ յարգի և անպատմելի արտօնութիւն
մըն է :

Սէկ խօսքով՝ կոյր, մեղանչական և անօգնա-
կան մարդու մը համար ասկէ օգտակար ինչ ար-
տօնութիւն մը կրնայ ըլլալ՝ որ իրեն պատահու-
թիւն շնորհուած է երթալու՝ բոլոր իւր կարօ-
տութիւններովը և տրտմութիւններովը ամենիմաստ
մարդասէր և կարեկից Լքրաբէին՝ այն վստահու-
թեամբը թէ ան որ կու գայ՝ բնաւ դուրս պիտի
չձգուի, և ինչ որ վայելապէս կը խնդրէ, պիտի
ընդունի՝ եթէ իրեն յարմար և պիտանի է . և թե

Լստուած պիտի հատուցանէ միայն այն կերպով
իրեն երթալուն համար անգամ :

Հարցմանս :

1. Իացատրէ՛ ինչո՞ւ ստեղծուած ըլլալնուս հա-
մար աղօթք ընելու ենք Լստուծոյ :

2. Ի՞նչ մեղաւոր ըլլալնուս համար ի՞նչ ա-
ղօթք ընելու ենք :

3. Լղօթքի պահանջած ներքին զգացումները
ի՞նչ օգուտ ունին :

4. Լստ զգացումները ունեցող ու չունեցող
մարդոց մէջի տարբերութիւնը ի՞նչ է :

5. Ի՞նչ էր այն առակը, որով մեր Փրկիչը
սորվեցուց մարդոց միշտ աղօթել ու բնաւ չձանձ-
րանալ : Արկնէ՛ տեսնեմ :

6. Սուրբ Գիորգը աղօթելու համար ի՞նչ քա-
ջալերութիւններ կուտայ :

7. Լղօթքը գէշ մարդը բարի մարդէն ի՞նչ
պէս կ'որոշէ :

8. Լստահամին աղօթքէն ի՞նչ քաջալերութիւն
կ'առնենք :

9. Լստուած ի՞նչ կ'ըսէ Սովսէսին Եղիպատ-
սի մէջ եղած Խարայելի որդւոցը համար ըրած ա-
ղօթքին վրայօք :

10. Յակոբոս առաքեալը ի՞նչ կ'ըսէ Եղիպին
աղօթքին համար :

11. Եկեմիսյի Խորայելին դարձին համար ըրած

աղօթքը ո՛ւր տեղ գրուած է, և այս աղօթքը
ի՛նչպէս կատարուեցաւ :

12. Դանիէլին Մատուածային լուսաւորութեան
համար ըրած աղօթքը ի՛նչպէս կատարուեցաւ :

13. Դանիէլ աղէ՞կ բան ըրաւ Մատուծոյ աղօ-
թելովը՝ երբոր թագաւորին օրէնքը կ'արգիլէր ա-
ղօթք ընելը :

14. Մսկէց ի՛նչ սորվելու ենք :

15. Հատ բաներու կարօտ պիտի չըլլա՞ս, եթէ
ծնողքէդ բնաւ բան մը չինդրես և ընդունած բա-
նիդ համար շնորհակալ չըլլաս նէ :

16. Մարդիկ շատ բաներէն զուրկ չե՞ն ըլլար
թէ որ բնաւ չինդրին Մատուծմէ, ու ընդունած
բաներնուն համար շնորհակալ չըլլան :

Յ Օ Դ Ո Ի Ա Ժ Գ

Մ, շ ը ի ն օ գ ու ղ :

Ըսածներնուս վրայ միայն սա կ'աւելցրնեմ
թէ, աղօթից օգուտը կ'երևի, Ա. ան զգացում-
ներէն, որ աղօթքը կը պահանջէ, ինչպէս որ ա-
ռաջ ալ ըսինք : Մ, մէն մարդ կը խոստովանի թէ
այս զգացումներէն ինչ որ յառաջ կու գայ, բա-
րոյական և պատասխանատու եակի մը մեծ օգուտ
ունի : Բ. Մատուած պայման գրած է որ՝ միայն
աղօթքով կարենանք ընդունել մեզի շահակա

պարգևներ : Այն թէ բնաւ չխնդրած պարգև-
նիս չենք առներ , բայց Աստուած ամենևին իրաւ-
մունք չըներ ուրիշ պայմանով պարգև ընծայե-
լու . և կ'ըսէ թէ աղօթողներուն պարգևներ պի-
տի շնորհէ . իսկ չընողներուն պիտի չըշնորհէ . և
ասիկայ շատ իրաւացի է : Անողք մը իւր աղո-
ցը պէտք եղած հոգը կը տանի , անոնց հարկա-
ւոր կերակուրը ու հանդերձը կու տայ , բայց ար-
դարև շատ անիմաստ և անարդար ծնողք մը
կ'ըլլայ , եթէ իւր աղոցը բնաւորութեանը յար-
մար չվարուիր . այսինքն , եթէ երախտագէտ և
հնազանդ զակրներուն հաճութիւն , և ապերախտ
ու անհնազանդներուն տհաճութիւն չցուցնեն :

Բսել չեմ ուղեր թէ մարդ իւր խնդիրը ա-
մէն անգամ և բոլորը ու խնդրած կերպովը կ'առ-
նէ : Սակայն կը հաստատենք թէ ան որ վայե-
լուչ կերպով մը կը խնդրէ , բոլոր իր գործքերը
ճշմարիտ հնազանդութեամբ ամենիմաստ և կա-
րեկից ու հաւատարիմ Աստուծոյ կը յանձնէ ,
վստահ է որ Աստուած հոգ պիտի տանի իւր
գործքերուն , և իր աղէկութեանը համար 'ի գործ
պիտի դնէ : Բանական և բարեպաշտ անձ մը
ասկէց աւելի բան չուզեր : Անոր համար որ և
իցէ ժամանակաւոր պարգևի համար ըրած ա-
ղօթքնիս միշտ չկատարուիր , այլ միայն մեր ոգ-
տին համար ըլլայ նէ :

Բայց որովհետև հոգևոր պարգևները , այսինքն ,
բարոյական յառաջադիմութիւնը մեր ոգտին հա-

մար են, անոր համար թէ որ խնդրենք, հարկաւ բուն մեր բարի գործոց մէջ ազօթքնիս կատարուած պիտի տեսնենք :

Եւ որովհետեւ բոլոր մարդոց առ Մտուած ունեցած յարաբերութիւննին տիրապէս նոյն են, վասնորոյ բոլոր մարդիկ ազօթք ընելու պարտական են. և բոլորն ալ միօրինակ պիտի կորնչին եթէ առանց ազօթից անցունեն իրենց կեանքը :

Ուստի բոլոր մարդիկ թէ պատանի և թէ ծեր, թէ իմաստուն և թէ տգէտ ազօթք ընելու պարտական են : Ոչ ուրիշ գործոց և ոչ պարտականութեանց ծանրութիւնը ազօթից զմնցառութեանը պատճառ կամ պատճառանք կրնան ըլլալ, վասն զի որչափ որ բազմաթիւ և երեւելի են մեր պարտքերը, այնչափ մեծ է մեր պատասխանատուութիւնը և այնչափ Մտուածային օգնութեանը կարօտ ենք : Մանկութիւնն ալ ազօթից զանցառութիւնը չարդարացըններ, քանի որ տգէտ, տկար և անպաշտպան ըլլալնիս պատճառ չէ որ չգիմենք օգնութիւն խնդրելու այն Եակէն, որուն քովն է իմաստութեան և յաւիտենական զօրութեան անսպառ գանձը :

Հարցումն 4 :

1. Մեռնելու ժամանակ պիտի չուզնս որ ազօթքի համար պէտք եղած զգացումները մշակած ըլլայիր :

2. Եթէ ազօթք չընես պատճառ մը ունիս

հաւատալու թէ մեղքերդ պիտի թողուին , ու երկնից համար պատրաստութիւն պիտի տեսնես : Ինչո՞ւ :

3. Ա՛րժան չէ՞ որ Աստուած աղօթք ընողներուն պարգև ընծայէ , ու չընողներուն չընծայէ :

4. Երբոր Աստուած կը խոստանայ թէ մեր աղօթքները պիտի կատարէ , ըսել կ'ուզէ թէ ամէն ինչրած բաներնիս պիտի տայ :

5. Հապա ի՞նչ ըսել կ'ուզէ :

6. Ի՞նչ պարգևներ են , որ ինքը կը խոստանայ տալ՝ եթէ ինչրենք իրմէ :

7. Պատանիներն ալ ծերերուն պէս աղօթք ընելու պարտակա՞ն են :

8. Օգտաւոր կամ գործքը աղօթք չընելու պատճա՞ռ է : Ինչո՞ւ :

9. Ուսմունքը պատճա՞ռ է :

10. Խաղը պատճա՞ռ է :

11. Աղօթելու կամք չունենալնիս աղօթք չընելու պատճա՞ռ է :

12. Ուրեմն քանի որ այս ընթացքը բռնենք աղօթք չընելու համար , մեր բարոյական բնութեան վրայ փաղափար կրնա՞նք ունենալ :

13. Գիցու՞ք թէ առանց զգացումներու աղօթք կ'ընենք մեզի օգուտ մը պիտի ընէ՞ :

14. Մարդ մը կայ որ աղօթք ընելու պարտքէն ազատ ըլլայ :

Գ Լ ՈՒ Խ Գ

Յազոփս պահպանութեան Շաբաթնա :

Թեպէտև Շաբաթը դրական օրէնք մըն է , և զանիկայ պահելը պարտք մը ըլլալուն Սուրբ Գրքոց մէջ վկայութիւններ կը գտնուին , սակայն փորձառութիւնն ալ կը սորվեցընէ որ ժամանակին մէկ մասը հանգստութեան տալու է : Ան կենդանիները և այն մարդիկ՝ որ եօթը աւուրց մէկը աշխատութենէ կը հանգչին , դժուարութեան աւելի դէմ կը դնեն . և մէկ տարուան մէջ շարունակ ամէն օր աշխատողներէն առաւել գործք կը կատարեն : Այս գլխուն մէջ Աստուածաշունչին այս բանին վրայ տուած խրատները պիտի քննենք . 'Սախ' օրուան դրութիւնը . 'Նրկրորդ' պահելու կերպը :

Յ Օ Գ ՈՒ Ը Թ Ը

Յազոփս դրութեան Շաբաթնա :

Շաբաթի վերաբերեալ խօսք . 'Սախ' կը գտնուի Ծանոթ. Բ. 1—3 : "Ու երկինքը ու երկիրը և անոնց ամէն զարդը կատարուեցան ու Աստուած իր ըրած գործքերը վեցերորդ օրը կա-

տարելով՝ եօթներորդ օրը իր ըրած ամէն գործ-
քերէն հանգչեցաւ” :

Երդ՝ այս պարբերութիւնը կը սորվեցընէ թէ՛

Ա. Ըստուած ինք հաստատեց շաբաթը, և օրհ-
նեց ան օրը :

Բ. Այլ միայն նախածնողաց համար եղաւ շա-
բաթը, այլ բոլոր մարդկային ազգին համար :

Գ. Ըստուած օրհնեց, այսինքն մարդու մաս-
նաւոր օրհնութեան համար օր մը ըրաւ զանիկայ :
Սրբեց զանիկայ, այսինքն, հասարակ օրերէն զա-
տեց սրբազան գործածութեան համար :

Դ. () րէնքին բնութիւնը ընդհանուր է : Ըստ-
ուած սրբեց օրը : Գործքը մասնաւոր ժողովուր-
դի մը չվերաբերիր, այլ բուն խակ օրուան :

Ե. () րը ընտրուելուն նպատակն ալ ընդհա-
նուր է : Հանգստութեան համար է նէ, բոլոր
մարդիկ հանգստութեան կարօտ են : Բարոյա-
կան կրթութեան համար կամ կրօնական գործոց
գործածութեան համար է նէ, բոլոր մարդոց առ
հասարակ հարկ է .

Եկնարկութիւններ կան որ օրէնքը դրուելէն
առաջ ալ շաբաթ օրը Սուրբ կը պահուէր : Ա.
Օճնդ . Գ. 3 : “Այլ եղև յետ աւուրց եբեր Վայեն”,
յետ աւուրց՝ ընդհանրապէս շաբաթ օրուան կը
վերաբերի, այսինքն, շաբթուան վերջին օրը :

Բ. Կ'երևի թէ՛ Վոյ ալ շաբաթներու բաժա-
նումն կը նայէր : Ըսիկայ յայտնի է աղանին
խրկած ժամանակին միջոցէն : Օճնդ . Ը. 10-12 :

վնասը փոխատուին կ'իլնայ . ինչու որ անանկ սե-
պելու է թէ՛ կանխատես եղաւ այն վտանգին , և
անոր համար փոխարէն մը ընդունեց :

Բ . Այժմ սահմանուած վտանգներէն գտնա
վնաս մը պատահի՞ պէտք է որ փոխառուն բա-

չէ վնասը : Եթէ ձի մը բազմահոգութեամբ նայուի, և երկու կողմանէ յանձնառու եղած վտանգի մը մէջ մեռնի, վնասը փոխառուին է . և եթէ անհոգ և անխնայ վարելովս մեռնի, իմ է վնասը : Ըն պարտական է որ աղէկ ձի մը սայ, և ես ալ պարտական եմ որ օրինաւոր կերպով գործածեմ :

Գ. Նշն սկզբունքները կը պահուի եթէ անակնկալ շահ մը ելլէ : Եթէ այս շահը դաշինքին մէջ կայ նէ, փոխառուին է . և եթէ չկայ նէ, իրաւունք չունի ան շահը ինքը առնելու :

Եթէ երկիր մը բռնեմ, թէ ցորենին գինը բարձրանալէն և թէ երկրագործութեան մէջ ունեցած վարսեաութենէս ելած օգուաներուն իրաւունք ունիմ՝ սուանց ուրիշ հասուցում մը չունելու :

Իսկ եթէ անուխի հանք մը ելլէ, իրաւունք չունիմ անկեց գործածելու, ինչու որ այն միաբով չբռնեցի երկիրը :

Վ. գահակազրութիւն :

Սիշտ երկմտկայ են ստացուածքները կորսուելու կամ հրդեհով կամ փոխորկեով որ կ'ըսուի վառնգ :

Երբոր մէկը միւսին համար ապահովագրութիւն կ'ընէ, գաշինք կ'ընէ որ այս ինչ գումար ստակի համար վտանգը իր վրան առնէ : Ինչպէս, իմ

տունս այրելու ենթակայ է . իմ դրօցինս կ'ըսէ թէ , եթէ տարին քսան տալէն տալու ըլլաս , տանը արժէքը կուտամ եթէ այրի : Աթէ Զինաստան կամ ուրիշ տեղ մը նաւ մը խրկելու ըլլամ , ապահովագրողին ստակ կուտամ , և ան աչ դաշինք կ'ընէ որ եթէ նաւը վնասուի կամ կորուի , նախն արժէքը պիտի տայ :

Եյս կ'ըսուի ապահովագրութիւն : Ի Մարդիկ որ կը միաբանին տուները և նաւերը ապահովագրելու , կ'ըսուին ապահովագրութեան ընկերութիւն : Աւ ան որ ուրիշին ստացուածքը կ'ապահովագրէ , կ'ըսուի ապահովագրող :

Աւ այս բանին մէջ կանոնը պարզ և յստակ է : Ստացուածքը ապահովագրութեան տուտողը պարտական է գիտցած ածէն պարագաները՝ որ դաշնադրեալ վտանգին կը վերաբերի , ապահովագրողին խնայընել : Եյսինքն , ստացուածքը՝ ո'րքան որ տեղեակ է , ըսածին կամ ծանուցածին պէտ ըլլայ . և վտանգներն ալ ըսած վտանգներէն աւելի կամ տարբեր պիտի չըլլայ :

Աթէ ուրիշ վտանգներու ապ ստացուածքը , ապահովագրողը անպարտ է : և եթէ ստացուածքը կորուի՝ արժէքը չհասուցաներ , միայն թէ ապահովագրութեան համար առած ստակը ևս կուտայ : Աթէ վնասը դաշնագրեալ պայմանով պատահի , ապահովագրողը պարտական է դաշնագրութեան խոստացածին պէս՝ ճիշդ և կատարեալ հատուցում մը ընել :

1. Կ'պիտի ճարտարութեան գնոյ վրայ շատ խօսք ընել
Տարի չէ : 1) ասանկները և պարագաները ան-
թիւ են, վասնորոյ անէն վտանգի և անէն պարան-
գաներու համար երկու կողմէն յատուկ դաշնա-
դրութիւն ընելու են :

Արդիւնք :

4. Տնօրէնի լսելով թէ ընել կ'ուզես : (Պի-
նակ մը սուր :

2. (Պիտիւնով ցոնցուր Եսայի թիւ լսելէ գոր-
ծածուցիեան համար վարել : երկրորդ, վասն-
գի համար վարել :

3. Գիցուք թէ երկու տուն ունիս և մէկը վերջ
բնակելու համար վարձու հու տաս : միւսն ալ վա-
նայ գնելու համար : որուն համար շատ վարձք
կ'տանես : Ինչո՞ւ :

4. Գիցուք թէ մարդ մը ստանի շատ կարօտու-
թիւն ունի : Թէ՞ չէ համար ստորականէն երկու
անգամ և ել վարձք չես տաներ :

5. Ընտանեկան շահելու համար ինչո՞ւ օտար
պատերազմի մը լուր հրատարակելու չենք որ
ստանան շահ ընտանեկան :

6. Գիցուք թէ տուն շինելու գնչիներով ստանի
տախտիկ մը շահ վարելով, ինչո՞ւ ճաշ մը չեմ
կրնար շինել այն ստանիով :

7. Թէ՞ չէ մտայ անեմ վարձք վարելու, խոտու :

մուկքով . և եթէ հետեւեալ որ ճիշդ լինի,
հաստատութիւնն է :

8. Եթէ մէկուն ստակ չարագական էմ, և ուր
բնէքը չդարտաւորէր պէս որ հասուցանեմ, յը-
սու ամենայնիւ տալու պարտակուն եմ թէ չէ :

9. Բսնէք թէ անանկ կտոր մը վարձու տուի
որ ճամբան պիտի կտորի, այս արդարութիւնն է :
Ինչո՞ւ :

10. Եթէ ձի մը բռնեմ ու անանկ անհոգու
թեւալի վարեմ զանկիցայ՝ որ միտաւի, այս արդար-
ութիւնն է : Ինչո՞ւ :

11. Ընտրելի սցնչափ հագ կը տանին վարձով
բռնած սպառաւորին վայր որչափ որ կտոր տա-
տացուածքին վրայ կը տանին : Ընտրութիւնն է
ստիկայ :

12. Եթէ մըն կը թալու հարկար մը բռնեմ
ու տասը մըն քշեմ և միտաւի, միտար ո՞վ կը
քաշէ :

13. Եթէ մը բռնեմ կտորի լծելու համար, ու
արտի լծեմ կենդանին, և միտաւի նե, միտար
ո՞վ կը քաշէ :

14. Եթէ տուն մը բռնեմ տարուան մը հար-
մար, և տարին չմնացած մեկ նոր բարձր մը բռնե-
ուի՝ որ տանը արժէքը կանխապահեմ բռնեմու
պարտակուն եմ տալու վարձք տալու :

15. Բսնէք թէ կ'ուրեւ որ տունը պարսկա-
թեան գրես, ինչ ընելու կ'ուրեւ :

16. Եթէ մէկը թէ սկսեմ որ տունը կ'արհաւիրեմ

զանրուելու ենք անկախ է ո՛ր յիշելու պարտաւիրան են
երբոր ապահովութեան գրել կ'ուզես :

ԳԴ. ... Կարգ հարգութեան գրելէդ ետքը ե՛լ չես պար-
տեն. հոգ չստնիս մէջ, փրճուուցիք է քեզուն :



ԱՐԻՄՈՒՆԻ

Փոխարքունիքն, երբոր փոխարեւը զ՚նշխան վե՛ :

Էսս քննելու բաներնիս ապրտաւորի եւ անկող-
վոյ է :

Մարդս շատ անգամ ուզոյիլն ապրտաւորութեանը
կը կարգաւորէ. քրքրեմն պետականկան, երբեմն
արհեստի կամ առևտրոյ գործոց մէջ փոխապետ-
ութիւնը պա է. մէկ կողմէն տոհմականութեւն ապ-
րտութիւն, եւ միւս կողմէն առհասարակ ապրտ-
ութիւնն է ե՛լ ինչ կամ մէկը անհրաւ փո-
խարէն մը պահանջէ, կամ միւսը դաշինք չնկնի
ետքը իւր պարտքը չկատարէ :

Ա. Տէրը պարտական է իւր պարտաւորին ար-
ժան հասնուցում մը տայ : Սակայն այդ հասնու-
ցումը ամբողջ պարտականելու մէջ շատ կը փո-
փոխի, անոր համար երկու կողմէն ապաշուց դա-
շինք ընելու են :

Եսս բանն մէջ ինչպէս որ ուզոյիլ որ ինչ փո-
խադրութեան կամ առևտրոյ մէջ քրկու կողմէն
ալ արգելեալ են զանազան շարժառիթներով ե :

անվարելի միջոցներով իրար սրտակէն կտմ իրարէն :

Տերը ինչ որ դաշինք բռնու, ապա պարտական է ամբողջ, և ճիշդ ժամանակին : Իսկզ՞ն ոչևոր տաւորներուն վարձքը ուշացրնելէն առանկա նիրաւութիւն չկայ, ինչու որ օրէնքով աննելու միջոց չունին :

Եւսպեո կ'ըսէ Սուրբ Գիրքը՝ Յօ. Ե. 4 :
"Ե՛ս ձեր արարքը հնձող բանտրներուն վարձքը՝ որ ես պահեցիք, կ'աղաղակեմ, ու հնձողներուն բողոքը ըրաւթեանց : Տերը պիտի քննէ ձեր սաւը" :

Եւ վերջապէս տերը պարտական է որ գաշտադրութիւնով եղած ենք բանտրութիւն շարժան հանրէ սպասարարէն, և մարմնական տուտը ըստ ձեռնարկի և բարոյական պակասութիւններուն հոգ տանի : Եւ ներառութիւն է մարդիկ իրենց ֆիզիզական կարողութիւնէ և ել աշխատողները, որով մասւոր և կրօնական յագաթաբանութեան միջոցներէն կը զրկուին : Սակայն այս գիտնալու է որ, երբոր այսպէս գաշտներն կ'ըրան, շատ անգամ ինչպէս աշխատողներն անանկ ալ աշխատողին ագահութիւնէ յագաթ կու գան : Եւ անկ գիպաւածի մէջ յանցանքը անանց մէջ բաւնաւորուին :

Բ. Ինչ հակառակն սպասաւորը պարտական է դաշինքին պէս կտարել սպասաւորութիւնը : Ինչ որ արիշտ գրան համար գործածելու գաշտը ըրած ժամանակը ծախու թէն ամբ, անպիտան խօսակ-

ցութեամբ, կամ իր պարտքը չեղած որ Երկնէ
կերպով անցընէ նէ, գողութեան չափ յանցանք
կ'ընէ :

Սրբան որ խորհեութիւն է աշխատաւորին իրա-
ւացի վարձքը չհատուցանելն, այնքան խաբէութիւն
է ստակ առնել չորած բանին համար :

Նշ. դարձեալ, որովհետեւ տէրը չէ թէ սպասա-
ւորին յարմիրը կ'ընաղեցընէ, հապա միտքը և
բանակամութիւնը անոր համար սպասաւորը պար-
տական է իր ամենէն աղէկ ջանքը ընել իր տէ-
րոջը շահին յառաջադիմութեան համար : Եթէ
այս հոգը չունենալով ստացուածքը վատուի, ըս-
պասաւորը կ'ընելու է վնասը : Եւ որ արգարութեան
նայելով գաշնադրութիւն ընելու սկզբունքները
ասոնք են :

Մակցոն Վեճարանին բարեսիրութիւնը ևս ա-
ռաւել կը սորվեցընէ : Երկու կողմին ալ կը սոր-
վեցընէ որ իրենց վիճակը մասնաւոր պատեհու-
թիւն մը սեպեն իրարու բարի գործելու : Եւս
բանը կը յորդորէ զտէրը, սպասաւորին վիճակը
կրցածին չափ երջանիկ ընել առանց դաշնորը
նկատելու : և սպասաւորը կը պարտաւորէ ի-
րեն յանձնուած պաշտօնին այնպէս հոգ տա-
նիլ, որ գաշնադրութեան մէջ բառով չկրնար
ծանուցուիլ : Եւսանալով երկու կողմէն ալ շա-
րունակ մարդասիրութիւն, և բարերարութիւն
պիտի ըլլայ իրարու, որով երկու կողմին ալ

բարոյական որպիսութեանը նպաստաւորութիւն մը կ'ըլլայ, և իրջանկութիւննին օտարձանաւ յառաջ կ'երթայ :

Ամէն երկրի մէջ տէր և ստրկաւոր բաւերուն անպիտան ահաճութիւն մը կը ցուցնեն մարդիկ : Ս'արդ մը ինչ ատիճանաւոր ուրիշը վարձու կը բռնէ, սյնքան տէր և իշխան է. և մէկը ինչ ղիճակի մէջ որ ուրիշի ծառայութիւն կամ սպասաւորութիւն կ'ընէ, սյնքան ծառայ կամ սպասաւոր է :

Աւստի ամէն մարդ զանազան բանեցու մէջ միանգամայն սպասաւոր և տէր է : Աւրեմն ինչո՞ւ չլիս յարաբերութիւնները ցուցնող բառերը տեղի պիտի ըլլան : Պատիւը և անպարտութիւնը ծառայ կամ տէր ըլլալը և չըլլալը չէ, հասկա մէջը գտնուած վիճակին պարտականութիւնը հաստատարիմ կերպով 'ի գործ դնելն է :

Հարցումներ :

1. Ինչո՞ւ մարդ երբեմն սպասաւորի կը կարօտի :
2. Ղաշինք ընելու ժամանակ ի՞նչ սկզբունք պիտի բռնեն երկու կողմէն :
3. Ընթացի հետ ունեցած գործքերնու հարուստի հետ ունեցածներնու առանձի՞ բազմահոգ ըլլալու ենք թէ՛ անհոգ :
4. Ղիցուք թէ՛ մարդ մը կ'աշխատեցնէ վարձկան մը որը տասն և ութը ժամ, վարձկանին ալ

Տաճուկ թանգարտի ստիպանքով, յանցանքը որ
ունենէր, որպէս զայն անհարկ անհարկ անհարկ

5. Իսկ թանգարտի բարեկարգութիւնը վերջ քան վերջ
խման, անարժանաւորութիւնը անհարկ անհարկ
ունենէր: Եւ զայն անհարկ անհարկ անհարկ

6. Իսկ զանցանքով անդ մը խորհուիս, և դուք
փողոցները կարգիս ու խման, արդարութիւնն է:

7. Իսկ զանցանքով քորսովն զանցանք ան-
ցրանս ինչ պիտի ըլլայ քու զանցանքը:

8. Իսկ զանցանքով շինես ուրիշ մը, և ան-
հարկ թեմանդ և զանցանքով թեմանք զանցանք, զի-
նայնով պիտի ըլլայ:

9. Իսկ զանցանքով դուք պիտի անհարկ քաներ միտ-
նայնով և անհարկ անհարկ անհարկ անհարկ:

10. Իսկ ըլլալով պիտի և անհարկ անհարկ ան-
հարկ անհարկ անհարկ:

11. Ինչ թանգարտի Տաճարունն ունենա-
լով էնք մարդոց վրայ:

Գ Լ Ա Ի Խ Գ

Ինքնակամ արդարութիւնն:

Երբ որ Տաճարուն թէ Ինչ և անհարկ մարդուն
արդարութիւնը ինչ անհարկ անհարկ անհարկ:

զած կարծիքնիս կը գտայցնեմ այսինքն ինչ մտ-
ցը, հմտութեանցը, հանձարին, բարոյական սքա-
բանցը որպիսութիւնը: Արդո՞ւր յընդամենը
իմացունելու համար, կ'ըստէք թէ ասանկ կամ ա-
նանկ տաղանդ, կամ այնպէս սկզբունքներ կամ
պակասութիւններ կամ աղէկութիւններ ունի:

Երդ՝ յայտնի է որ ըստ որպիսութիւնը ամեն
ստացուածքէ յարգի է: Ա՛նք անբնական վիճակին եր-
ջանկութեան ազդեցութեան, և ասպտակի վիճակի եր-
ջանկութեան համար ալ ունեցած իրաւացի յար-
սերնսս միակ հիմք:

Աստի բանականութիւնը մեզ կը բարկացնէ թէ
ամենէն մեծ տրուար որ ուրիշին կրնանք ընել, անոր
բարոյական որպիսութիւնը յառաջացրելէն է այս-
ինքնզանիկայ շատացրելներ: Ի՞նչ ամենէն մեծ վնաս
սը որ կրնանք հասցընել մէկուն՝ անոր բարոյականը
խանգարելն է: Այսինքն շարքնել զանիկայ:

Փոխադարձութեան օրէնքը՝ կ'արդիւն գտնէ՝ որ
և իցէ պատճառաւ կամ որ և իցէ կերպով ուրի-
շին թէ բարոյական և թէ մտաւոր որպիսութիւն-
ները մնասել. ըսել է թէ զանիկայ շար ընելու
չենք:

Սուրբ Գրոց մէջ շատ ահարկու սպառնալիքներ
կան անոնց դէմ՝ որ այլոց բաժրը կ'ապականեն:
“Ով որ այս պատուիրաններուն պինտ պղտի-
կը զանց կ'ընէ ու անանկ կը սորվեցընէ մարդոց,
երկնից արքայութեան մէջն զգտնի չպիտի վրէ-
տիքն ունի իմաստաբան ինչպէս (կ'ըրոյցանք) մեծ շո-
քով”:

բարոյս կը կոչուի, վասն զի Իսրայէլէն մեղք գործել տուաւ: Լատուած իւր ահարկու բարկութիւնը Բարեչնի վրայ թափեց. քննու որ իւր շարութեամբը երկիրը ազատեանց: Տէր Աստուծոյ փարիսեցոց տուած վայր այս էր: «Ինչու որ դուք ծով աւ ցամաք կը շրջիք նոյն հաւատ մը ընելու համար, և նրբաբ կ'ընէք, ձեզմէ ասարանգամ տուպսել զժոխքի որդի կ'ընէք»:

Մարդու բարոյական որպիսութիւնը զանազան կերպով կրնանք վնասել:

Ա. Իրենց բարոյական սանձերը ախարացընելով: Կրօնական սկզբունքը մոլութեան դէմ ամենէն մեծ սանձն է: Եւ որ քրիստոնէական սկզբունքներուն զօրութիւնը պահեսցընելու բաներ կ'ընէ, կամ կրօնքին վրայ հարկանցի խօսելով, անառակութեամբ Սուրբ օրը չպահելով, Սուրբ Կիրքը կամ ուրիշ վարդապետութիւնները ծաղը ընելով, կամ ծնողաց դէմ անհնազանդութիւն գրգռելով, միշտ այս մեղաց տէրն է:

Բ. Մարդոյ չար կիրքերը շարժելով: Եւ մարդն ալ այս մեղքը գործած կ'ըլլայ՝ որ վնասակար գիրքեր և անառակ պատկերներ կը հրատարակէ, կամ չար և պիղծ խօսակցութեամբ ուրիշներուն միտքը չար խորհուրդներով կը լեցընէ: Եւն մեղքը կ'ընէ այն՝ որ ուրիշները կը նեղէ, անոնց բարկութիւնը կը գրգռէ, կամ

չարութեան կամ վրեժխնդրութեան կը թելադրէ. վասնզի այս կերպով ալ ուրիշները գէշ քնաւորութեան տէր և մոլի կ'ընենք :

Գ. Ըյս մեզքը գործելուն ուրիշ կերպն ալ տես ե որ՝ մարդոց չար ախորժակներուն կ'օգնենք : Ըյս յանցանքին տէրն անտէք են, որ ոգեղէն ընկերներ խմել կը սորվեցընեն կամ խմելու կը թելադրեն, կամ կը խմցունեն : Յաւալի բան մին է որ շատերը իրենց ապրուստը կը գտնեն՝ պատանիները չարութեան առաջնորդելով, և անանկ սովորութիւններ մշակելով, որ վերջապէս անառակութեան և մոլութեան կը տանին :

Ուրեմն միշտ յիշելու ենք թէ, ոչ խօսք կամ գործք կամ վարք կամ գրութիւն, կամ զբաղմանք անմեղ կրնայ ըլլալ, որուն բնական հակումը կամ ազգեցութիւնն է այլոց բարոյականը ապականել աշխնքն է՝ զանոնք չարացընել :

Հարցմանք :

1. Մարդու որպիսութիւնը ըսելով ի՞նչ ըսել կ'ուզես :

2. Ընէ՛ք բարոյական որպիսութեան օգուտը ի՞նչ է, վնասը ի՞նչ է :

3. Ի՞նչ ներգործութիւն կրնանք ընել ուրիշին բարոյական որպիսութեանը, և ի՞նչ կերպով կրնանք ընել...

4. Ի՞նչ ներգործութիւն ընել պարտական ենք ուրիշներուն բարոյական որպիսութեանը . օրինակ մը տուրք :

5. Ուրիշներուն ըրած բաներնուս համար Մատուած մեզ պատասխանատու պիտի սեպէ՞ :

6. Ըսենք թէ տղայ մը ուրիշը կը թելադրէ որ կիրակին չբռնէ , ի՞նչ մեղքի տէր կ'ըլլայ :

7. Աթէ մէկը ուրիշին սորվեցընէ ծնողաց վերայ անարգութեամբ խօսիլ , ի՞նչ մեղքի տէր կ'ըլլայ :

8. Աթէ տղայ մը ուրիշ տղի մը սխալքընէ սորվեցընէ , ի՞նչ մեղք գործած կ'ըլլայ :

9. Ըսենք թէ տղայ մը ուրիշը կը ներդէ և կը տանջէ բարկացընելու համար . ի՞նչ մեղք գործած կ'ըլլայ :

10. Ըսենք թէ տղայ մը դիմովցուցիր կատակի համար . ի՞նչ մեղք գործած կ'ըլլաս :

11. Դիցուք թէ մէկը օրինակով կամ խօսակցութիւնով կ'առաջնորդէ զուրիշը որ չարութիւն ընէ , ի՞նչ մեղք գործած կ'ըլլայ :

12. Ի՞նչպէս գիտես թէ Մատուած անառակները սաստիկ պիտի պատժէ :

13. Աթէ գտնենք որ մեր ընկերները մեզ չարութեան կ'առաջնորդեն , ի՞նչ ընելու ենք :

14. Մեր ամենէն չար թշնամիները որո՞նք են :

Գ Լ ՈՒ Ե Ե

Համբաւ կամ Անուն :

Նախընթաց դէպուս մէջ խօսեցանք մարգուս բարոյական որպիսութեանը վրայ : Մարդու մը բարոյական որպիսութիւնը որ կողմանէ ըլլայ նէ, բնականապէս անոր համեմատ համարում մը կը բերէ իրեն վրայ մարդոց մէջը : Ինչպէս՝ եթէ մարդ մը միշտ ճշմարիտ կը խօսի, մարդիկ պիտի համարեն թէ ճշմարտախօս է, այսինքն ճշմարտախօսութեան համբաւ կ'ունենայ . կամ եթէ միշտ արդար ըլլայ, մարդիկ անոր համեմատ համարում մը կ'ունենան . այսինքն արդարութեան համբաւ կ'առնէ, նոյնպէս ալ ուրիշ բաներու մէջ :

Արդ՝ այս համարումը որ մէկը ստացած է, շատ յարգի և մեծադին ստացուածք ձեռք ձրգած է : Ամէն մարդու գործի մէջ յաջողութիւնը իր վրայ եղած համարումէն կախում ունի : Մի պիտի գործածէ անանկ մարդ մը, որ ստախօս և գող ճանչցուած է : Եւտոի ուրիշին անունը կոտորելը, անոր ամենէն մեծ անիրաւութիւն ընել և անբութելի վնաս մը հասցընել է : Ինչպէս որ ուրիշի դրամը յափըշտակելու իրաւունք չունինք, անանկ ալ ուրիշին համբաւը կոտորելու իրաւունք չունինք : Սինչև

անգամ եթէ ունեցած համբաւին արժանի չէ,
 եւ համբաւը կորսնցրնելու Գրառուից Գրանիք :
 Ընդհար թե՛ մեկը անհրաժեշտութեամբ արժեք չափե-
 ցուի, այս բանը մեզի իրաւանք չէ որք ար ասե-
 կը վրե՛ յարեցողութիւնը, կամ ար լե՛ կը կը յարու-
 մը արդ խառնութիւնը Եթէ օրեկը մե՛ իջնանաւթիւն
 չունիք, Դ՛, անկ ալ իրաւ ու մը, չունիք, Եւ իր ինչ
 համբաւը կորսեցու, մինչև անգամ արժ անկ Ե-
 դածէն առաւել ունենայ, եթէ օրը լե՛ արդ ար-
 պարճու մը չունենանք ընկած :
 Դ՛, յա բանին վրայ, Սարից Կրօնք անուան կանա-
 նիցը պատկաւ են : 11-րդ թ. 1-3, 11-12, 13-14, 15-16
 դասերը որ չգտանիք : Բանկի ինչ Դասա-
 պարտի որ դասեր, անկ, արիւր դասապարտ, Ե ինչ
 չարիւր որ չարիք, անկ, արիւր չարիւր ձեղի :
 Ե ինչու բաւ երբորք աչքին մեզի շնորք կը տե-
 նիս, ու բաւ աչքի մեզի գեղանիւն չէն Եսցիք :
 Յե՛ թ. 11, "11-եղանկ մի բամբակեք միջոցներ
 ան որ իր եղբայրը կը բամբակ, կամ իր եղբայրը
 կը դատե, օրեկը կը բամբակ, ու օրեկը կը բա-
 ժե, հայա թե որ օրեկը գտանե, այլ դուր օ-
 ընկը կարարաչ չէն : հայա գտանե" :
 11-րդ նախ արիւր իրանք թե որ արարգ օրե-
 րու մեջ արգիւրու կը կերպար, Ե թ որ արար-
 գիւրու մեջ արգիւրու չէն արարար Դ՛, Դ՛, Դ՛
 արարար իրանք : Դ՛, արարար արարար
 արարար թե արե՛ կերպարու մեջ արարար Դ՛, Դ՛, Դ՛
 ինչու որ ստախոսութեան վրայ արարար իրանք

ուրիշ անը :

Ա. Ըրգիլեալ ենք մարդոց շար գործքերը՝ Տրուստարափելու արանց՝ Տարկաւոր պատճառի : Ընանց իրուացի : պատճառի ըրածն՝ կ'ըլլանք , երբոր ուրիշն իրեն չար գործքերը կը Տրուստարափենք կրճ կը պատանենք առանց ինչ և իցէ պատճառի՝ կամ դաւաարից հեաւքնեութիւն ինելու կամ իուսել՝ սիրելու կամ նախանձութեան կամ շարութեան կամ վրէժխնդրութեան պատճառաւ :

Բ. Ըրգիլեալ ենք մարդոց գործքէն շնորհաւոր հեատու թիւննէր հանել , որոնք այս ինչ շար գործքերէն կ'ելեն : Ի՞նչ կ'ուզէ որ միայն մէկ գործքով մը դատուի : Ի՞նչ կ'ծծի գործքը բաւական չէ՝ այս մարդը ազատ է լսել ապա . ինչպէս որ գործք մը աւաւսածեւնութեան փաստ չէ՝ գործողը մարդասէր սեպելու չափ : Արեւն ուրան աւերաութիւն է մէկուն անունը՝ հանել իբրև բոլոր աւաւքնութենէ զուրկ՝ աւաւքնութեան դեմ գործք մը կ'աւաւքելալի :

Գ. Ըրգիլեալ ենք գատելու , այսինքն առանց բաւական պատճառի ուրիշն գործքերուն շար շարժաբիթ ապրու : Ընանց բաւական պատճառի՝ վրանք , ինչու որ կան անանկ գործքեր՝ ուսից անկարելի է բարի շարժաբիթ մը հանել : Ի՞նչէ անգամ այսպէս գիպուածքի մէջ ազէկ է միայն գործքը պատանի . ու եթէ Տարկաւոր չե յայտնել , թողելու է որ ամէն մարդ ինքը խորհի շարժաբիթի վրայ :

Եւս կանոնը կը սորվեցընէ մեզի նախ՝ անվա-
յեւուչ շարժառիթ մը հանել, ուր որ կարծիք
կրնայ ըլլալ թէ գործքը ան մէկ շարժառիթէն
յառաջ չեկած ըլլայ: Երկրորդ՝ բայն սեպած
գործք մը ընտւ շար շարժառիթով եղած սեպե-
լու շինք՝ թէ որ բաւական կամ յայտնի ապացոյց
չունինք:

Եւս բանին արդար և պոժած ըլլալ յայտնի
կ'ըլլայ երբոր բանը բուն մեզի գտնընենք: Այս
ուրիշ կանոն մը որով կ'ուզենք որ գործքերնիս
քննուին:

Գ. Իրաւունք չունինք ուրիշներուն համարու-
մը պակեցընելու խեղկատակութեամբ՝ ծարրա-
բանութեամբ անուններ կանչելով, նախա-
տական անականներ առլով, կամ որ և իցէ մի-
ջոցով՝ որով անոնց նախառիք կու գայ: Եթ-
դարացի չէ այսպէս ընելովս վնաս մը ընել չեմ
ուզեր կոր ըսել: Վիտենք որ վնաս կ'ընէ, և
այս բաւական է մեզ յանցաւոր ընելու: Երե-
րնն ալ, պատանիներն ալ շատ տարբեր պի-
տի խօսին երբոր Սուրբ Վրոց բօածները յի-
շեն: Սաթ. ԺԲ. 37: "Ինչու որ քու խա-
քերէդ պիտի արդարանաս, և քու խօսքերէդ
պիտի դատապարտուին":

Եղէկ ըսաւ. Հայրապետ մը թէ քնաւ համար-
թեամբ մտիկ ընելու շնոր, և՞ բնաւ կ'ընտելու շնոր
ամանկ բաները, որ զի՞ստութեամբ անպատիւ կ'ընեն,
մեր բարքը կը խանգարեն քամ մեր ընկերք կը
վնասեն:

Հիմա խօսիլք թէ որ պարագաներուն մէջ վնասակար ճշմարտութիւններ խօսելու արգելեալ չենք : Եւսիք են . . .

Ա . . . Հրատարակեց արդարութեամբ պաշտպաններու և յանաջողութեան համար . . . Ընդ որ ընկերութեան գեմ եղած ցանցանքը կը ծածկէ, ինքըն ալ հաղորդ կ'ըլայ ան յանցանքին : Ըսանկ դիպուածի մէջ զարտակման եւք զանիկայ քաղաքական պաշտպաններին իմացընել որ յանցաւորը քննուի ու պատժուի :

Բ . . . Ընմեղները պաշտպանելու համար :

Երբոր գիտեմ թէ այս մարդը ան մարդուն վնաս մը պիտի հասցընէ, և եթէ վնասուելու մարդուն իմացընելովս վնասէ կ'ազատի, պարտականութիւնս է որ իմացընեմ : Իայց միայն այս կերպով, թէ ինչ որ գիտեմ զայն հաստատեմ և միայն այն, և ան ալ անմեղը պաշտպանելու միտքով :

Գ . . . Իուն յանցաւորին օգտին համար :

Երբոր ուրիշին շատ գործքերը գիտենք, և ուրիշ մէկը կայ որ չգիտեր այս բաները, ինչպէս ծնողք մը կամ խնամակալու մը, որ եթէ գիտնաննէ, կամ իշխանութեամբ կամ խրատով կ'արգիլեն այն չար գործքերը, պարտական ենք հարկաւոր ելած ծանօթութիւնները տալ անոնց : Երկու կողմին ալ մեծ քարերարութիւն ընել է ասիկայ : Եւ անոնկ քարերարութիւն մը, որ արանց անոր շատ տղայք կ'ապականին կոր : Օ՛նայք մը

չառ շնորհակալ Վճիթի պէս արդեհեմքն զՍր արար-
ւածքներուն օգտակար զտները իրեն, կ'իմացընէ Յ

Դ. Կենսական սպասութիւն չունինք որ, պար-
տիշներուն չորք փորձերը հրատարակենք : բայց
պարտականութիւն ալ չունինք որ անոնց հետ ան-
մեղներու պէս վարուինք : Այժմէ Աստուծոյ նպատա-
նամարտիմք այս անղեկութիւնը մեզի առաւ, օրի-
նաւոր է զանիկայ մեզի համար գործածել, կրնանք և
պարտական ենք չար ընկերէ մտնել իր, յան-
ցանքները միայն մեզ գիտնալով :

Հարցումն :

1. Ինչո՞ւ մարդուս որպիսութեան և համբաւոյն մեզ
ազգի տարբերութիւնը ի՞նչ է : Արինակ մը տուր :

2. Արինակ մը տուր բարի համբաւին յարգը
և վատ համբաւին վնասը ցուցընելու համար :

3. Ինչո՞ւ մարդուս համբաւը իբրև իր ստաց-
ուածքը իրենն է :

4. Ինչո՞ւ երկու ընկեր մէկ տեղ նստելու և
ուրիշներուն վրայ գիտցած չարութիւններուն վը-
րայ խօսելու չեն :

5. Այժմէ անգամ մը մէկը բարիացած տես-
նեմ, իրաւունք ունիմ մակարերել թէ միշտ բար-
կացող է :

6. Իրաւունք ունիմ հրատարակել թէ անիկայ
բարիացող է, և իրաւունք ունիմ անոր աղէկ
յատկութիւնները ծածկելու, թող որոյս որ բար-
կացող է :

7. Այժմէ մէկը առատաձեռն ըլլայ, իրաւունք

աւելմ' պարծանքի համար կշննէ կոր լսելու :

8. Իսնէք թէ մէկը ինձի սղորտութիւն ընել չուզեր, իրաւունք ունիմ ապահ է լսելու :

9. Ի՞նչ վնաս կ'ելլէ մէկը ծաղր ընելէն եւ անոր նախատական անուները կանչելէն՝ թէ ներկայ եզեր է թէ հեռի :

10. Իսնէք թէ գիտենք որ մէկը էի մե գողցաւ, տերօղը իմացընելու պարտակա՞ն ենք :

11. Եթէ գիտնամ որ մէկը ընկերութեան եւ բուլի օրէնքին մէկը կը կիտրէ, պարտակա՞ն եմ ծածուկ պահել :

12. Եթէ ըսելու պարտական ըլլամ, որո՞ն ըսել պէտք է :

13. Դիցուք թէ անիրաւ մարդ մը բարեկամիս մէկը խաբել կ'ուզէ, իմ պարտականութիւնս ի՞նչ է :

14. Իսնէք թէ բարեկամիս լաի, ամէն մարդու ըսելու պարտակա՞ն եմ :

15. Օրպարտութենէն ի՞նչ տարբերութիւն ունի ասանկ բան մը :

16. Եթէ ողայ մը կամ յիշոցք ընէ կամ սուտ խօսի կամ գողութիւն ընէ կամ գէշ խօսքեր գործածէ, ծնողացը իմացընեմ նէ զրպարտութիւն ըրած կ'ըլլամ :

17. Այցելու է ոսրիչներուն հրամարակել :

18. Երբոր ուրիշներուն չար գործերը ծանուցանենք, ի՞նչ շարժառիթով ընելու ենք, որ մեր գործը անմեղ ըլլայ :

19. Բանք թէ գիտնք որ այս մարգը չար է, թէպէտև անոր վայ պիտի չխօսինք, ուրիշ բան մը բնելու ենք :

Գ Լ ՈՒ Ն Գ

Ճշմարտութեան խնայում :

Ճշմարտութեան խնայումը ճշմարտութեանն է նոյն գիտակցութիւնով :

Ճշմարտութեան խնայումը անցեալ կամ ներկայ ժամանակի կը վերաբերի, ինչպէս կը հաստատան թէ երէկ անձրևեց կամ հիմա կանձրևեց կոր : Բայանի ժամանակի ալ կը վերաբերի : Ինչպէս, երբոր կը խոստանամ թէ մէկուն պաշտօն տասն պիտի տամ :

Երբոր մէկ խօսքի մը բարոյական յանցանքը կամ անսեղութիւնը բնենք, միշտ խոսողն գիտակցութիւնը նայելու ենք :

Եթէ մէկը իրօք ճշմարտութեան կուգէ, ստան խոսակցեան յանցանքէն չաղտաւ է թէպէտև սխալ մտքի մէջ իյնայ :

Եթէ իր միտքը խաբել է, յանցաւոր է, թէև պէտև կրնայ ըլլալ որ իր խօսքը ճշմարտա ելլէ : Ինչպիսի ճշմարտութեան խնայումը երկու կը բաժանի : Ա. պատմութիւն : Բ. խոստումը և դաշնը :

ՅՈՒՐՈՒՄ

Օրոյց :

Ղշմարտախօսութեան օրէնքը այս բանին մէջ կը պահանջէ թէ երբոր բան մը զրուցենք՝ դիմացինին ալ ճիշդ մեր միտքի գաղափարը տանք . ուրիշ խօսքով՝ ծանուցանենք ճիշդ մեր հաւատացածը :

Այս բանին վրայօք Սուրբ Գրքին խօսքերը պատէս են : Առէ՛ք . ԼԳ . 13 : «Ըստ լեզուդ շարութենէ պահէ, ու շրթուներդ նենգութիւն խօսելեն» :

Յե՛ն . Ը . 14 : «Գոցք ձեր հօրմէն Սասանայէն էք, ու ձեր հօրը բաղձանքը կ'ուզէք ընել . անիկաց սկիզբէն հետէ մարդաստան էր, և ճշշմարտութեան մէջ չիկցաւ . ինչու որ անոր ներսի դին ճշմարտութիւն չկայ . երբոր անիկայ ստութիւն իօսի, լսու իտենսերէն կը խօսի . բանցի անիկաց սպախօս է և անոր հալած» :

Յայր . ԻԱ . 8 . 27 : «Ի՜նչ էրբէր ստեղծեալն հովիւն՝ իտելու որ ձգտի թաւալու զնորմէն . ԳԼԷ զիտ շատա՛ն զի ետե՛րս զիտ . Ի՜նչ էրբէն զիտ ստեղծեալն . . . ստեղծեալն զորմոլ զ» : Իսկ օրինակ՝ Սարգիստի առեղծութիւնը ստախօսութեան վրայ, տե՛ք . Ենիգիւն գեպար . Ի . Թ . 1 . Ե . 20 - 27 : Եւ Լիանայիկ . Ե . Թափեցաք ձեռք ձերմէն . Ի՜նչ էրբէն ձերմարտութեան օրէնքը կ'առե՛նք . Իսկ իսկ .

ըլլալը գիտցած բաներնուս զօրս, իբրի ճշմարիտ
խօսիլը : Այսպէս կ'ըլլայ երբոր քր. և իցե պարս-
գաներու, մէջ խօսակցում գիտաւորութեամբ կը խօս-
ակնք :

Երկրորդ՝ ճշմարիտ ըլլալը չգիտցած բանին վա-
րայ իբրև ճշմարիտ խօսիլը : Արդար խօսք մը իբրև
ճշմարիտ կը խօսինք, և ստոյգ չենք գիտեր թէ
ճշմարիտ է, մեր գիտցածին պէս զբուցած չենք
ըլլար, որ է ստախօսութիւն :

Ճշմարտեան պատճառանք մըն է ըսել թէ
սուտ ըլլալը չէի գիտեր : Բայց թէ որ բոլոր
գիտցածդ այնչափ էր, պէտք էր անիկայ իմացու-
նէիր ու հակառակ գաղափար չհաղորդէիր գիմն-
ցիմիդ : Թերևս ըսես թէ ճշմարիտ ըլլալը չգիտցած
բաներնուն վրայ բնաւ պիտի չխօսինք. բնաւ կար-
ծիք պիտի չտանք : Անտարակոյս՝ պիտի խօսինք,
բայց ան առեմ իբրև կարծիք պիտի խօսինք, ու
չէ թէ իբրև ճշմարիտ :

Երրորդ՝ ճշմարտութիւնը անանկ կերպով մը
կամ այնպէս պարագաներով յայտնել կամ զբու-
ցել որով ուրիշին սխալ խորհուրդ մը կ'իմացը-
նենք : Բնիկայ զանազան կերպով կրնանք ընել :
Ա. Պարագաներէն ոմանք չափազանցելով : Բ.
Պարագաներէն ոմանք պակսեցրնելով : Գ. Պա-
րագաներէն ոմանք չափազանցելով և ոմանք պակ-
սեցրնելով : Գ. Բանը եղածին պէս զրուցելով,
բայց անանկ ձևով որ ունկնդիրը ուղիղը չհաս-
կընայ, ու սխալ կարծիք ունենայ : Այժմ ընեմ

Թէ պարսն Մ.Ը. պարսն Ռին սենեակը մտաւ և դուրս ելածին պէս Ռ.Ը նայեցաւ որ ժամացոյցը սենեակէն գողցեր են, ես բնականապէս անանկ կարծիք մը կու տամ թէ Մ.Ը գող էր : Այժմէ ասիկայ սուտ կարծիք մը տալու դիտաւորութեամբ զրուցեմ, ստախոսութեան յանցաւոր եմ, թէպէտև ուրիշ բան մը չզրուցեցի, այլ միայն եղած դիպուածը զրուցեցի : Ե . ԱրովՏեակ տոութիւնը դիտամամ ուրիշին սուտ խորհուրդ տալն է, եթէ խօսքերու կամ բառերու տեղ ձայնի եղանակներով, նայուածքով կամ մարմնոյ շարժումներով ուրիշին սուտ կարծիք տանք նե, ստախոսութիւն է :

Այժմէ ճամբորդ մը ինծի հարցրնէ թէ պս ինչ քաղաքը ո՞ր կողմէն կ'երթան, և ես ալ մտաով սխալ ճամբայ մը ցուցրնեմ, իբրև խօսքով եղած ստախոսութիւն է : Զ . Մ.Կ օրէնքը մեր առ մարդ գիկ ունեցած յարաբերութեամբ եղած կենսակցութեան կը վերաբերի : Արդիկէ ծնադքը իրենց զուակացը սուտ խօսելէն, ուռուցիչները իրենց աչակերաններուն, և աչակերաները՝ իրենց ուռուցիչներուն : Անծը՝ պզտիկին, պզտիկը՝ մեծին և իրարու . գնողը՝ ծախողին և ծախողը՝ գնողին, սրէնսդիղները՝ իր կողմին եղողներուն և հակառակորդներուն կողմին . մէկ խօսքով՝ արարտականութիւնը ընդհանուր է, և մարդ մէկ գի չկրնար ձգել թէ բնական և թէ օրինօք յարաբերութեանց մէջ որ մարդիկ մեկզմէկու օւնին :

Մտիկ ընողին ճշմարիտը իմանալու իրաւունք

չունենալը պատճառ է որ բանը չիմացընենք, բայց պատճառ չէ որ սուտ խօսինք :

Այժմ մեկը անիրաւ պահանջմունք մը կ'ընէ մեզ, մէ, իրաւունք ունինք խնդիրքը չկատարելու, բայց զինքը խարելու բնաւ իրաւունք և պատճառ չունինք :

Ղշմարտութեան քաջ նկատումն ունենալու սովորութեան հարկաւորութիւնը աննաւակի է . Ուտի՛ կատակի մէջ, զբօսանքի համար, և զըտցքին զօրութիւն տալու համար դիպուածները չափազանցելու . համար սուտ խօսելէն շատ գէշութիւն կ'ելլէ : Ան որ կատակի մէջ սուտ կը խօսի, շատով ուրիշ ժամանակն ալ պիտի խօսի, և վերջապէս սովորութեամբ ստախօս կ'ըլլայ : Ամէն մարդ ամենէն չնչին քաներու մէջ անգամ թող ձիշգ և անվրէպ թրշմարտախօսութիւն պահէ, և շատով պիտի իմանայ որ ուրիշ թ և իցէ առաքինութեան մշակութիւնովը ասիէ ակելի իշխանութիւն կամ ազգեցութիւն չկրնար ունենալ թէ իր անձին վրայ և թէ ուրիշներուն գործքերուն վրայ :

Այժմ այս այսպէս է, որչափ շարութիւն է ուրիշներուն ստախօսութիւն սորվեցընելը : Անոցք և մանկակարգերը (պեպեպ) երբեք ժամանակաւոր և չնչին բաներու համար առասպել զտոյցներով կը վախեցընեն . ոմանք ալ սողց կամ անբաւարարց կը պատահընեն թէ՛ անսովորութեան եկողներուն ըսին որ սուրբ չեն, քանի որ սուրբ

նաժամ ինչ Կրօնային ալ վաճառարանները անբա-
սաւորաց կը պատուիրեն որ առեալոյ մէջ տա-
խափեն : Լսանկ անձինք Լսուածոյ ինչպէս պա-
տասխանեն պիտի ան վնասներուն համար , որ
կը հասցունեն իրենց խնամքին , յանձնուածնե-
րուն : Լսանկ անձինք ինչպէս կրնան զտաս
ըլալ թէ անոնք՝ որոնց բուն իրենք գիտմամբ
ստասխանութիւն կը սորվեցունեն , զիրենք ալ պիտի
չխաբեն :

Հարցման :

1. Չճմարիտ խօսելու է ըսելով ինչ ըսել
կ'ուզես . օրինակ մը տուր :
2. Օրինակ մը տուր որ մէկը ճճմարիտը չը-
խօսիր , ու տակաւին ստասխօս չսեպուիր :
3. Օրինակ մը տուր որ մէկը ճճմարիտը կը
խօսի , ու ստասխօս է :
4. Չճմարտասխօսութիւնը ինչու զրօցք է
խօսուման կը բաժանի :
5. Երբոր բան մը կը զրօցենք , ինչպէս
գիտենք թէ ստասխօսութեան յանցաւոր չենք :
6. Գեղեզին օրինակը կրկնէ :
7. Ենանիպին և Վափերային գիպուածները
զբուցէ :
8. Ինանցմէ ինչ կը սորվենք :
9. Դիտմամբ կրնա՞նք խաբել ուրիշը՝ առանց
ստասխօսութեան , յանցաւոր ըլլալու :

10. Ղշմարիտ ըլլալը չզիտցած բաներնիս զրուցելը ինչո՞ւ ստախձոտութիւնն է և :

11. Չափազանցութիւնով եղած ստութեան օրինակ մը տուր :

12. Պակօցընելով եղած ստութեան օրինակ մը տուր :

13. Նրկուքը մեկէն եղած ստութեան օրինակ մը տուր :

14. () օրինակ տուր միայն եղած ինչպէ՞ս զրոպտած բան մը, բայց անանկ ձեռով մը որ անտախորհուրդ ունենայ մտիկ ընելը :

15. Ինչո՞ւ « Բանց քնքրի եղած ստութեան » օրինակ մը տուր :

16. Ե՞տ որ քանի մը աշակերտներ վարժակետը խաբել միայնակին, այնչափ չար է որքան որ եթէ վարժակետը աշակերտները խաբէ :

17. Ենացանքը կը քիչնամ մայր սուս փակել սովորութիւն ունենալուն համար :

18. Պատակի մէջ սուս Խոսիլը վրաս պէնքնիս :

19. Իսենք թէ մեզը քնքրի կը հրամայէ որ անոնք մը լսեն, ընելու պարտանքն է նոյն :

20. Իսենք թէ մեզը կը հրամայէ որ մեզ անոնք սիս և դուն ալ համազօրիմ, ուրիշն հրամայէ, Իստուհոյ անոնք քնքրի կ'արդարացնեն :

Ինչո՞ւսով դա պէտք է, յա հա մեծատակ զաս 11

ՅԵՊԻՒՍԹ Բ

Խոստման և դաշնի :

Ա. Խոստմունք : Խոստմունքը մեր գիտաւոյութեան ցոյցքն է ամանկ կերպով մը , որ կամաւ ուրիշին ակնկալութիւն կուտանք : Ճշմարտախոսութեամբ օրէնքը կը պահանջէ որ մեր գիտաւորութիւնը ճիշդ եղանին պէս իմացընենք : Ե ինչպէս որ՝ որ և իցէ բանն հասար սուտ գրուածին ազատութիւն չունինք , անանկ ալ այս բանին մէջ :

Այն գիտաւորութիւնը արդէս յայտնելով ուրիշին ակնկալութիւն տալէն ետքը պէտք է որ կատարենք : Արիշ խոսքով խոստացողը պարտական է իր խոստմունքը կատարելու անանկ կերպով որ գիտէ թէ խոստմունք ընդունողը հասկըցաւ . այսինքն պարտական էնք կամաւ ուրիշին տուած ակնկալութիւնն իր կատարելու : Արեմն խոստմունքը ոչ խոստացողին իմացընել ուզանին պէս է , վասն զի կրնայ զլու որ բեկնով ուրիշ բան ըսէ , մասքը սբիշ ըլլալ . ոչ ալ խոստմունք ընդունողին հասկըցանին պէս է , վասն զի մարդոց ակնկալութեանը սահման չկայ : Ը՛յլ պարտականութիւնը ինչպէս որ ըսի , կամաւ ուրիշին տուած ակնկալութիւնը կատարել է :

Աւտի խոստման մէջ ալ , ինչպէս որ խոսքով ,

անանի ալ գործում, շարժումներով և գեղեցիկ
կը խոստանանք: Աճողի մէջ թէ որ մէկը նշա-
նացի խօսի, բերնով խօսածի պէս է, ու պար-
տական է խոստանալը կատարել:

Յարմար կը սեպենք որ հոս անզո քանի մը
կերպ յիշենք, որոնց մէջ խոստանալընքը չեն
պարտաւորեր:

1. Այրոր, խոստանալին կատարումն անկասե-
լի է: Մեր կարողութիւններէն բոլորովն վեր է-
ղած խոստանալընքը կատարելու պարտական չենք:
Իսկ թէ որ այս անկարելութիւնը առաջուց գի-
տենք, խաբէբայ և ստախօս ենք, և պարտական
ենք մեր խոստանալը չկատարելէն եղած վնասը
հատուցանելու:

2. Արոր կատարումը ապօրինաւոր է: Պար-
տական չենք հակառակ պարտականութեանը ար-
գիլուած քանք կատարելու: Իսկ թէ որ դեռ
խոստանալը չըրած ապօրինաւոր ըլլալը գիտենք կամ
կրնանք գիտնալ, և խոստանալը ընդունալը չգի-
տենք, խաբէութիւն կ'ընենք և պարտական ենք որ
խոստանալը ընդունալին վնասը քաշենք: Իսկ թէ
որ գործքին ապօրինաւոր ըլլալը գիտէ, ալ պար-
տականութեան սակ չենք:

Եթէ քաշենք ընեմ ուրիշի հետ յափշտակո-
թիւն ընելու, սպրտական եմ իմ խոստանալըս ետ
տունել: Բայց իրաւամբ պարտական չեմ որ պէ-
մեզ բոլոր շահելու ստանլը անոր վնարեմ:

3. Խոստանալը չպարտաւորեր կրոր եղած

Վերջինը թիւերը համարները տեղադրելով իր
 ճշտութեամբ որո՞՞նք զնա ինչո՞՞ք : Գնահատուող զի
 ինչե՞ր կը լինի լսելի թերեւ զի ինչե՞ր իր լիակատար
 ինձ , միտք չունենալով որ ինչ իմացքն է ցնոր : Կ
 եթէ ինչ իմացքն էլ ոչ ոք արանց : Եւ ցիտեա
 լուն , Եւ պարտախան չէ ճիշտացու :

Եթէ Եւ ինչ ինչ որ իմացքն զի , Եւ
 ան ամենը պարտախան է որպէս թէ իր բերանով
 լսած է :

Կ : Խոստմունքը չպարտաւորելը , երբ որ խոստ
 մունքին պատճառը վերջապէս սուս ելլէ : Եթէ
 մուրացիկներ մը իր վիճակին պատմութիւնը ստոր
 սեպերով ստակ խոստանաւ , Եւ թէ որ իմանաւ
 որ պատմութիւնը սուս է , պարտախան չեմ խոստ
 մունքս կատարելու :

Եւստիք են գլխաւոր փեւերը որոնց մէջ խոստ
 մունքը : չպարտաւորելը : Խոստմունքը կատարելին
 եղան անյարմարութիւնները չկատարելու պատճառ
 չեն : Ուստի խոստմունք ընելու շատ զգուշ
 լու կեր , Եւ բնաւ խոստմունք ընելու չենք առանց
 բաւական խոր Տեղա : Կը ընդ համարապէս անհնար որ
 շատ զգուշ են խոստմունք ընելու : Կրկնց խոստ
 մունքը կատարելու շատ ճիշդ են :

Կ : Ինչո՞ւ : Ինչո՞ւ : Ինչո՞ւ : Ինչո՞ւ : Ինչո՞ւ :
 մունք , Եւ պարտախան , Եւ սուս խոստանաւ : Եւ
 ինչ բանը ընել , այն պայմանաւ որ զիմացիկու
 ալ այն ինչ քանն չրեկ : Ինչո՞ւ : Ինչո՞ւ : Ինչո՞ւ :
 ըր , անոր պարտաւորելը լրջալուր : Եւստիք , Ե

բացառութեան կերպերը նոյն են խոստման մէջ եղածներուն հետ : արտաբերութիւնը միայն այս է թէ , ասոր մէջ մէկ մասնաւոր դաշինք մը յաւելցած է , որով երկու կողմի պարտականութիւնները սահմանուած և որոշուած են : Բնաւոր դաշինքը ըլլալէն ետքը քանի որ մէկ կողմը կրկատարէ իր պարտքը , միւս կողմն ալ պարտական է կատարելու : Ի այց թէ որ մէկ կողմը կը դադարի՝ միւս կողմն ալ ազատ է , դաշինքին հարկաւոր պայմանը պակսելուն համար : Կա մանաւանդ ան կողմը որ կը դադարի իր դաշինքը կատարելէն , եւտք է որ իր դադարելովը եղած վնասները քաշէ :

Եւս ընդհանուր կանոն մըն է : Սակայն մէկ բացառութիւն մը կայ՝ որ յիշելու արժանի է : Կան դաշինքներ՝ որոնց պայմանները Եւսուծմէ պահանջուած է . ինչպէս են ամուսնութեան և քաղաքական ընկերութեան դաշինքները : Եւսոնց մէջ մէկ կողմի զանցառութեամբը միւսը ազատ չէ , եթէ Եւսուծոյ ցուցրցած պատճառները չպատահին : Եւ ճշմարտապասութիւն եղած պարտականութիւնը՝ թէ անհատից մէջ և ընկերութեանց մէջ նոյն է : Ինկերութիւնը և անհատները նոյն պարտականութիւնը ունին իրենց խոստմունքը կատարելու : Կա քաղաքականացեալ ժողովուրդ մը իր դաշնադրութեամբը ուրիշ քաղաքականացեալ ժողովուրդի մը և անկիրթ ժողովուրդի մը հաւաստաբապէս պարտական է . ինչ-

պէն որ սնեցաւ, սնե՛մ մը ուրիշ, սնեցաւ: մը պար-
տախան է դաշինքին պէս քայլել:

— Ի՞նչն սխալ է ընթացք ինչ պատրուակի տակ
ճանճեաւած ըլլայ կամ ինչ իշխանութեամբ ըլլայ
Թող ըլլայ, ինչպէս որ տնօրէնաց և շար է, ա-
նանկ ալ վատ և նախաստի է:

Հարցումներ:

1. Խոստմունքի օրինակ մը տար և բացատրէ
Թէ ի՞նչ կը պարունակէ:

2. Խոստմունքը կատարելու պարտական ենք
ըսելով ի՞նչ կ'իմանաս:

3. Չօրպակեալ մը քաղաք մը պաշարելով խոս-
տացաւ որ եթէ անձնատուր ըլլան արիւն պիտի
չթափէ: Ի՞նչն ալ անձնատուր եղան, և զօրա-
պետը զանանք բարբոթող սող թնայեց իր խոստ-
մունքը պահեց: Ինչո՞ւ:

4. Հերոսիկոս Հերակլիային աղջկանը խոս-
տացաւ որ ինչ որ ուզէ նէ տայ, իր խոստմունքո-
վը պարտական էր Յովհաննէս մկրտչին գլուխը
տալ: Ինչո՞ւ:

5. Բսենք Թէ տղի մը, որ ուրիշէ զմեզն և
ունի է, հարցունեն՝ Թէ արգետք առա՞ն Թէ չէ,
և անիկաց իր գլուխովը չէ ըսէ նէ, սո՞ւա է:
Ինչո՞ւ:

6. Վիցուք Թէ մէկը տեսութիւն երթալու
խօսք տայ. ժամանակը չհասած դժբաղդուն թէ ամբ:

նորը կտորի, շերթալուն համար ստախօն կ'ըլլայ :
Ինչո՞ւ :

7. Դիցուք թէ Լեւոնդէս իրօք Յովհաննէս
մկրտչին գլուխը տալու խօսք տայ : պարտական է
խոստմունքը կատարելու :

8. Դիցուք թէ բանի մը անձինք միացան ա-
պօրինաւոր բան մը ընելու՝ միաբանելնին զիբնք
կը պարտաւորէ՞ գործքը կատարելու : Ինչո՞ւ :

9. Եթէ մէկը քեզի առանց հօրդ պիտանալուն
ըտէ թէ հայրդ ոսկի մը պիտի տայ քեզի, հայրդ
պարտական է ատելու :

10. Եթէ բժիշկ մը խօսք տայ որ հիւանդի՛եր-
ւթայ, խոստմունքէն ազատ պիտի ըլլայ՝ փութորդիկ
չամ բարեկամներէ հրաւիրեալ ըլլալուն պատ-
ճառաւ :

11. Որո՞նք շատ կը կատրեն իրենց խոստմունքը :

12. Դաշինքի օրինակ մը սուր :

13. Դիցուք թէ քեզի խօսք կու տամ՝ որ վաղը
ժամը մեցին կանքով կը պարտեցնեմ եթէ պատ-
րաստ ըլլաս, պարտական եմ խոստմունքս կա-
տարելու եթէ այն ժամանակը քառորդ մը անց-
նելէն ետքը պատրաստ ըլլաս :

14. Բսնք թէ Տէրութիւնը Լեւոնդայոց հետ
է Պարսկաց հետ դաշնագրութիւն կ'ընէ, որ դա-
շինքը կատարելու առաւել պարտական է :

15. Դիցուք թէ երկու դաշինք բրի, մէկը Գիւ
դրացինիս հետ և միւսն ալ տէրութեան հետ.
որը աւելի պարտաւորիչ է :

Գ Լ ՈՒՍ Է :

Պարտ է իրատունի ծնուց :

Ծնողաց յարաբերութեանց նպատակը դիւրաւ կը հասկըցուի քանի մը յայտնի բաներէ :

Ա. Տղան աշխարհք կու գայ բոլորովին անպատրաստ իր սքարտականութեանցը համար, զորս ապագայ կենացը մէջ պիտի կատարէ : Քանի մը տարիէն ինքզինքը հագայլու պարտական պիտի ըլլայ, վասնորոյ մարմնական զօրութիւն պէտք է. բայց ինքը բոլորովին տկար է : Ընանկ պարգևներ կը վայելէ, որոնք ձեռք ձգելու համար շատ խելք և միտք հարկաւոր է. բայց ինքը հիմա բոլորովին տգէտ է : Ը առ փորձութիւններ զինքը պիտի պաշարեն, որոնց դէմ դնելու համար բարոյական կրթութիւն պէտք է, բայց իր բարոյական կարողութիւնները դեռ երևան ելած չեն և սկզբունքները դեռ անկազմ և անձև են : Ըստիք բոլորը մէկ օրինակով բացատրելու համար, արհեստ մը կամ պաշտօն մը առ և խորհէ թէ մէկ ամսուան կամ մէկ տարեկան մանուկ մը ինչպէս կրնայ այն արհեստին ձեռօքը ինքզինք հագալ և ապրիլ :

Ուրեմն յայտնի է թէ մանուկը մանկութեան ժամանակ, օգնութեան և մտքի մշակութեան կը

կարօտի, որով ապագայ կեանքին պարտականութեանցը պատրաստ կ'ըլլայ: Ամենքնիս այս պաշտպանութիւնը և օգնութիւնը վայելցցինք, եթէ ոչ՝ ողջ չէինք մնար: Ասանորոյ մերն ալ պարտքն է մէզմե ետքը եկողներուն նոյն հոգը տանիլ:

Արդ՝ ծնողաց և զաւակի վիճակը այս է. ծնողքը ունի զօրութիւն, իմաստութիւն, փորձառութիւն և զանոնք տղին բարեկեցութեան, մանաւանդ՝ դաստիարակութեան համար՝ ի գործ դնելու բնաւորութիւն և յօժարութիւն. և տղան է տկար, ֆտգէտ, անփորձ. և բնութիւնն ալ այնպէս կարգադրեր է՝ որ ծնողաց կարգադրութեանը ապաւինի և վստահի: Աստի ծնողաց բոլոր պարտականութիւնները մինակ դաստիարակութիւն բառին տակը կ'իյնայ. և ամէն բանի մէջ իրաւունք ունին, որ՝ ինչ և իցէ կերպով այս պարտականութեան կատարմանը հարկաւոր է:

Ե. Ծնողաց պարտք:

Ծնողաց պարտականութիւնը հետեւեալ բաները կը պարունակէ.

Ա. կերակուր և պաշտպանութիւն: Ծնողքը պարտական է իր տղան կերակրելու ու անոր հանգերձը հոգալու՝ մինչև որ տարիքը առնէ, ու կարող ըլլայ ինքզինքը հոգալ վայելուչ ջանքով: Օտարքին որքանութեան վրայ ծնողքը խորհելու են: Ծնողաց վայելուչ չէ արժանէն

վար կամ վեր ծախքով պահել տղան : Օնորդ
քը նաև բնական պաշտպանն է տղին՝ պարտքն
է գանիկայ վնասէն պաշտպանել և նեղութենէ
ապահով ընել :

Բ. Մարմնաւոր կրթութիւն :

Շատերը ուշ կը սորվին առողջ և զօրաւոր
մարմնոյ կազմութեան օգուտը : Այսպէս կազմ
մութիւն մը մարմնական շարժումներով, բարե-
խառնութիւնով և մանկութեան ժամանակը հոգ
տանելով կ'ըլլայ : Օնորդաց պարտականութիւնն է
մարմնոյ կրթութեան այնպէս ընթացք մը բռնել,
որ տղին մարմնաւոր բոլոր զօրութիւնները յառա-
ջանան, դժուարութեան կրթութիւն և աշխատու-
թեան համբերել սորվին : Այլ ասոր հարկաւոր
հսկողութիւնը ամէն մարդէն առաւել ծնողքը պի-
տի ընէ :

Գ. Մտաւորական կրթութիւն :

Բնել հարկ չէ՛ թէ մտաւոր էակի մը երջան-
կութիւնը որքան կախում ունի մտաւորական կրթ-
թութենէ և յայտնի է որ բոլոր ասանկ կրթու-
թեան հինք մանկութեան ժամանակ գրուելու է .
ինչու որ երբոր այս ժամանակը կ'անցնի, աչ մա-
նակը բուն իրեն համար հոգ տանելու ժամանա-
կին կը հասնի :

Այլ հոս կ'ըսենք թէ ծնողքը պարտականու-
թեան տակ է :

Ա. Կրցածին չափ դաւկին անտնի կրթութիւն
մը տալ, որ իր մասնաւոր բնակարանութեանց և
կարողութեանցը յարմար են :

2. Տարմար և կարող դաստիարակ կամ մար-
զեւ ընտրել :

3. Կայել թէ ուսուցիչը իր պարտականու-
թիւնները կը կատարէ՝ և տղան քաջալերել իր
ուսման մէջի օգուտները ցուցնելով, որ վայե-
լուք ջանքերը ընելու յորդորուի :

4. Եթէ ծնալաց պարտականութիւնը այսպէս
է, այս բանը ընելու ժամանակ ծախելու պար-
տական է : Յիշելու է թէ ամէն մարդ իր պար-
տականութիւնը ընելու ժամանակ ունի : Ըն ժա-
մանակները որ Ըստուած ծնողական պարտքեր
կատարելու համար զատեր է, պէտք չէ որ գործ-
քի, զբօսանքի տան :

Ըստ կ'ըսենք որ ծնողաց մէջ մէկ զարմանալի
ոչտուութիւն մը կամ խնայութիւն մը կը տիրէ այս
բանին համար : Ընձերնին կ'ուրանան իրենց զա-
ւակներուն ստացուածք դիզելու համար, և նոյն
ժամանակին այն կրթութիւնը ստանալու համար
մանր մունր ծախքերու համար տրտունջ կ'ընեն,
որ առանց անոնց՝ տղոց ստացուածքները կամ
ժառանգութիւնը անկատար պարգև մըն է : Ըստ
անձինք կը սեպեն թէ կրթութեան համար ամէն
տեղ միօրինակ է. և միայն կը նային թէ ո՞րը քա-
նի մը դասեկան ատան է : Ըստ շատ անգամ տը-
ղին մտաւորական մշակութիւնը և վարժութիւնը
քիչ ծախք երթալու վշտ կը կալանայ :

7. Բարոյական կրթութիւն :

Սարդուս բարոյական բնաւորութիւնը և հար-

կաւ յաւիտեհական վիճակը շատ կախում ունի իր զաւկին բարոյական կրթութենէն : Այս բարոյական կրթութիւնը խրատով և օրինակով պէտք է որ տղան ծնողացը ձեռքէն ընդունէ . վասն զի ծնողքը պատասխան պիտի տայ Աստուծոյ իր զաւկին բարոյական պարտքերը ինչ կերպով սորվեցընելուն համար : Այսանորոյ ծնողքը պարտական է :

1. Սորվեցընել տղին իր առ Աստուած և առ մարդիկ ունեցած պարտքերը, և անոր մտաց մեջ տպաւորել իրեն բարոյական պատասխանատուութիւնը : Ասիկայ պէտք է որ մասնաւորապէս տղին մտացը վրայ՝ Սուրբ Գրքէն սկզբունքներ, կանոններ և խրատներ տպաւորելով ըլլայ :

2. Արբան որ կարելի է տղին մտքէն մոլի բընութիւնները արտաքսել : Պէտք է որ հսկէ հըպարտութեան, յամառութեան, չարագործութեան, նախանձութեան, վրէժխնդրութեան, անդթութեան, բարկութեան, ստախօսութեան և անոնց ազգական մոլութեանց առաջի երևոյթներուն դէմն առնելու, և ջանայ քնաջինջ ընելու զանոնք ժամանակաւ և գործածութեամբ չհաստատուած :

3. Տղին առջին անանկ օրինակներ դնելու է, որ անոր կրթութեանցը շատ օգտակար ըլլայ : Ան ծնողքը՝ որուն օրինակը տուած կանոններուն և խրատներուն հակառակ է, թող գիտնայ որ զաւակը իր խրատները զանց կ'առնէ և օրինակին կը հետևի :

Ե. ԱրովՏեաւ բոլոր այս ջանքերը, ինչպէս որ սրիշ բաներու մէջ, անանկ ալ, այս բանին մէջ անպառու կ'ըլլայ՝ առանց Լսաուճոյ օրհնութեանը, ճնողքը պարտական է որ ազօժքով Լսաուճմէ օգնականութիւն խնդրելով ընէ : Պէտք է որ իր տղոցը հետ և անոնց համար ազօժք ընէ :

5. ԱրովՏեաւ տղին բարոյական օրպիսութիւնը իր ընկերներէն մեծապէս կախում ունի, ճնողքը պէտք է որ անդադար հոգ տանի : Թողելու չէ որ անանկ ընկերներու մէջ և անանկ տեղեր գտնուի, որով բարոյականը կ'ապականի :

6. ԱրովՏեաւ ճնողքը իր ամէն զաւակներուն նոյն յարաբերութիւնը ունի, պարտական է անոնց բոլորին հետ արդարութեամբ և անաչառութեամբ վարուիլ :

Բ. Մանուկ իրաւունք :

Մանուկ իրաւունքները իրենց պարտականութեանց հաւասար են . ինչպէս որ իրենց տղոցը մարմնաւոր, մտաւորական և բարոյական կրթութեանցը համար պատասխանատու են, անանկ ալ այս պարտականութեան կատարմանը համար հարկաւոր եղած մարմնաւոր, մտաւորական և բարոյական բոլոր իրաւունքները ունին անոնց վրայ :

Հարկաւ ճնողքը իրաւունք ունի կարգազրկ տղուն մարմնաւոր գործքերը և ծախքը, անոր գատիարական կերպը և տեղը, բարոյական կրթութեան տեսակը, ունենալու ընկերները, և իրաւունք ալ ունի բոլոր իրաւացի միջոցները գոր-

Ծածեղն՝ որ ազին սրտին մէջ իրեն կամօցը հը-
նազանդութիւն մը յառաջ բերէ : Ծնողքը պար-
տական է քաջ խորհելով և ջանքով այս իշխա-
նութիւնը տղին բարեխաւածեանը համար գոր-
ծածել : Իսկ թէ որ սխալի՝ ուղղութեանը ճար-
չկայ . քանզի իր իշխանութիւնը ամենէն գերա-
գոյն է՝ քանի որ կը աւելի :

Սակայն այս պարտականութիւնները և իրա-
ւունքները մշտնջենաւոր չեն : Տղան ժամա-
նակէ մը ետքը կարող կ'ըլլայ ինքզինքը պաշտ-
պանելու , իր իմացական հետամտութիւնները
տնօրինելու , իրեն համար եղած բարոյական և
ուրիշ պարտականութիւնները որոշելու : Արբոր
այս կ'ըլլայ , ծնողքին և զակին յարաբերու-
թիւնը կը դադրի՝ որչափ որ ծնողաց պատաս-
խանատուութեան կը վերաբերի :

Իրովհետև ծնողաց պարտքերը և իրաւունքնե-
րը տղին մանկութեան ժամանակը բացարձակ և
անկախ են , և չարիահաս վիճակին մէջ բոլորովին
կը դադարին , վասն որոյ բնականապէս կը հետև-
ցունենք թէ այս իրաւունքները և պարտքերը այս
երկու ծայրերուն միջոցին մէջ դայլ առ դայլ կը
փոխփոխան , այսինքն , ողբան որ տղան կը մեծնայ ,
և ծնողաց պատասխանատուութիւնը կը պակսի և ի-
րաւունքները կը սկարանան : Այսինքն տղոցը դաս-
տիարակութիւնը այս սկզբունքին վրայ պիտի կար-
գադրուի : սակայն որ կերպով ընելը ծնողքը պի-
տի նրոշէ :

Ապրացիին իշխանութիւնը ծնողաց ձեռքով կար-
գած իշխանութիւն մըն է . վասն որոյ ծնողքին
պատասխանատու է ուսուցիչը , չէ թէ տղին : Աւրեմն
ապրացիին ու աշակերտին մէջ տեղի յարաբերու-
թիւնք ճիշդ ծնողքի ու զաւկի յարաբերութիւն է :
Ուսուցիչն է գերագոյն և աշակերտն է նուազագո-
յն : Աւսուցիչը ծնողքին հետ ինչ դաշինք որ
ընէ նոյն պարտականութիւնը ունի և իր իրա-
ւունքները հաւասար է իր պարտոցը , այսինքն ,
իշխանութիւն ունի իրեն յանձնուած գործքը կա-
տարելու : Երջ սահմանին մէջ իրաւունք ու-
նի հրամայելու գւ աշակերտին պարտքն է հնա-
զանդիլ :

Հարցումն է :

1. Ըսէ տեսնեմ ինչո՞ւ է որ տղայ մը իր ծը-
նողաց խնամքին և հոգին կարօտ է :
2. Բացատրէ այն պարագաները , որոնք ծը-
նողաց լեցընել կու տան տղոց պակասութիւնները :
3. Ծնողքին պարտքը ի՞նչ է ընդհանրապէս :
4. Դիցուք թէ տղաքը անիրաւութեամբ չար-
չարուին , կուուելու ու ծեծկուելլու են : Աթէ
պաշտպանութեան կը կարօտին , ի՞նչ ընելու են :
5. Եղէկ բան է որ ծնողք մը թողու իր տղան
որ ծուլութեամբ մեծնայ , ուտէ խմէ ինչ որ և
որչափ որ կ'ուզէ , ու բնաւ բան մը չսորվեցընէ
անոր՝ որ անուլ իր ապրուստը գտնէ : Հետևու-
թիւնը ի՞նչ կ'ըլլայ :

6. Աղէկ բան է որ ծնողք մը իր տղան թողու որ ուղէ երթայ ուղէ չերթայ դպրատուն . կամ ուղէ սորվի՝ ուղէ չսորվի : Ինչո՞ւ :

7. Ի՞նչ կը խորհինք այն պողոցը վրայ՝ որոնք չեն հաճիր կրթոր իրենց ծնողքը կ'ստիպեն որ աշխատին , ուսմունք սորվին :

8. Ծնողք մը իրաւունք ունի գիտնալ թէ իր տղան ինչպէս կը վարուի , և արդեօք ժիր . և աշխատասէր է ուսման մէջ , թէ չէ :

9. Գիցուք թէ ուսուցիչը ասանկ ծանօթութիւնները ծնողքէն կը ծածկէ . աղէկ բան կ'ընէ :

10. Ո՞րը շատ յարգի է , աղէկ կրթութիւնը՝ թէ մեծ հարստութիւնը : Ինչո՞ւ :

11. Այժմէ ծնողք մը իր տղան մեծցընէ առանց առ Մտուած ունեցած պարտականութիւնները սորվեցընելու . աղէկ է : Ինչո՞ւ :

12. Արբոր ծնողք մը իր տղոցը հետ կը խօսի այս բաներուն վրայ , ու անոնք անհանգիստ ըլլան աւ չհաճին , ի՞նչ խորհելու ենք ասանկ տղոց վրայ :

13. Իարի՞ է այն ծնողքը՝ որ իր տղան կը մեծցընէ կոտրած ձեռքով , ու ջանք չընել որ բժշկէ :

14. Ո՞րը մեծ վիաս է տղին , կոտրած ձեռք մը թէ մոլի և չար բնաւորութեան կամ ստախօսութեան և կամ գողութեան սովորութիւն մը ունենալը : Ինչո՞ւ :

15. Աղէկ է որ ծնողք մը իր զաւակը թողու որ տարափոխիկ ախտ ունեցող տղոց մէջ երթայ : Ինչո՞ւ :

16. Ո՞րը առաւել գէշ է, տարաժողովիկ ախօսմը ստանալը, կամ գէշ ու չար ունակութիւններ ստանալը :

17. Եթէ ծնողք առ Լստուած պարտական են իրենց տղոցը վրայ պսպէս հոգ տանելու, և այնպէս իրաւունք ունին անոնց վրայ, տղոցը պարտականութիւնը ի՞նչ է :

18. Բսենք թէ տղայ մը իր ծնողքը շատ խիստ և գաժան կը սեպէ, այս պատճառ է որ անոր չճնազանդի : Ինչո՞ւ :

19. Գիցուք թէ ծնողքը ու զաւակը չեն միաբանիր, ո՞րը ուղիղ ըլլալ կը կարծուի : Եւ ո՞րը իրաւունք ունի :

20. Բսենք թէ մէկ եղբայրը քսան տարեկան է, ու միւսը միայն չորս տարեկան, ո՞րը լաւագոյն պիտէ պզտիկին յարմար եղածները :

21. Ուսուցչին՝ աշակերտին վրայ ունեցած իշխանութիւնը բացատրէ :

Գ Լ ՈՒԽ Բ

Պարտականութիւնն է իբրտանն գաւազաց :

Օ՞րակաց պարտականութիւններն են
Ա. Հնազանդութիւն. այսինքն տղաք պարտական են սիրով հաւանել իրենց ծնողացը կամքին սոսկա-

պէս ծնողքն ըլլալուեն համար, թող թէ՛ ծնողացը պահանջմունքը ամենալաւեն ու իրաւացին ալ կ'երևի զաւակաց ընդհանրապէս : Այլ միայն խիղճը կրնայ չափաւորել աս հնազանդութիւնը : Վանդի՛ Մատուծոյ պահանջմունքը ծնողաց պահանջմունքէն գերի վերոյ ըլլալով, տղայ մը պէտք է առաւել Մատուծոյ հնադանդի, քան թէ ծնողացը : Բայց՝ մինչև անգամ այսպիսի դէպքերու մէջ տղան իրաւունք չունի ծնողացը գէժ դնելու . պէտք է որ Մատուծոյ հնազանդի, ու խոնարհութեամբ հետևանքներն ալ կրէ :

Բ. Սեռերան . Տղաքը պարտական են իրենց ծնողքը մեծարել, կամ ինչպէս որ Սուրբ Գիրքը կ'ըսէ, պատուել իրենց ծնողքը : Սեռերել, դատուել ըսելով կը հասկընանք այնպիսի զգացում և վարմունք մը՝ որ պզտիկը մեծին, նուաստը բարձրագոյնին պարտական է ցուցընել : Տղան պարտական է իր ծնողքը անանկ պատուելու, և դէպ 'ի անոնց անանկ զգացումներուն ներսը, որ ուրիշ մէկուն բնաւ չընել : Խորին զգացմամբ որդիական յարգութենէն պատուական՝ ազնուագոյն և յարգի բան չկայ : 'Սափողէոն իւր գերաստիճան զօրութեանը համար այնքան գովելի չէր, որքան որ իւր մայրը սիրելուն համար եղաւ : 'Այն սկզբունքները մեզի կը սորվեցընեն որ ձերերուն ընդհանուր յարգութիւն ցուցընենք :

Գ. Սեռ Դուրեւան . կամ զաւակը պարտի սիրել

իր ծնողքը՝ սոսկապէս ծնողք ըլլալնուն համար :
Գնողաց սէր ցուցընելու ենք , ինչու որ մարդ
են կամ բարի մարդ են . բայց ասկէց ՚ի զատ մաս-
նաւոր սէր ցուցընելու ենք՝ ինչու որ ծնողք
են : Լսանկով պարտական ենք միշտ ջարդու-
թեամբ խօսիլ մեր ծնողացը վրայ . որքան որ
կրնանք անոնց երջանկութեան միջոցները փնտռել
և կատարել անոնց վրայ սէր ունենալով ինչու որ
մեր ծնողքներն են : Լս սերը որ և իցէ պա-
րագան՝ իրաւ մէջ այսպիսի գործքերը բուն շա-
ներ մեր վրայ , հասպ հաճութեամբ կատարել
կու տայ :

Գ . Զեանորոշիան . Տղին պարտականութիւնն
է , ինամբ ցուցընել , երբոր Լստուծոյ նախախնա-
մութեամբը . հարկաւոր կ'ըլլայ իր ծնողքը պահել
ծերութեան փամանակ : Լն մարդը որ իր ծեր և կա-
րօտ ծնողացը պակասութեանցը համար իւր շուայ-
լութիւնները և զբօսանքները ուրախութեամբ և
հաճութեամբ մէկ դի չձգեր , մեծ ապերախտ կը
սեպուի : Եթէ ծնողքը ազբաս չեն , բարեբա-
րութեան և մարդասիրութեան զանազան գործ-
քեր կան ընելու , (որոնք կատարելու կարող է ար-
քան ,) որոնք իր ծնողացը երջանկութիւնը մեծա-
պէս կը յառաջացընեն , և ծերութեան դժուա-
րութիւնները կը դիւրացընեն : Խոհուն , բարեսէր
և հնազանգ զաւակ մը ուրախութեամբ կը փըն-
տըռէ այսպիսի պարագաներու մէջ որդիական սէր
ցուցընելու :

Սուրբ Գրոցմէջ շատ են և ազդու այն պարտականութեան վրայ եղած կանոնները, որոնց մէջ քանին հոս դնենք :

“Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Լստուածդ կուտայ քեզի” : Եւէջ Ի. 12 : “Ո՛րդիք՝ ձեր ծնողացը հնազանդ եղիք Տէրոջմով, որ ան է արժանը : Պատուէ՛ քու հայրդ և մայրդ, (որ առջի պատուիրանքն է խոստմունքով,) որ քեզի ազէկ ըլլայ, ու երկար կեանք ունենաս երկրի վրայ” : Եւէ. Զ. 1—3 :

“Ո՛րդեակ իմ՝ քու հօրդ խրատը մտիկ ըրէ, ու քու մօրդ օրէնքը մի՛ մերժեր : Վանզի անտք քու գլուխդ՝ շնորհաց պսակ, և քու պարանոցդ՝ մանեակներ պիտի ըլլան” : Լուս. Զ. 8, 9 : “Իմաստուն աղան իր հօրը խրատը մտիկ կ'ընէ բայց ծաղը ընողը՝ յանդիմանութիւնը մտիկ չընէր” : ԺԳ. 1 : “Ո՛րդիներ՝ ամէն բանի մէջ հնազանդ եղիք ձեր ծնողքներուն. ինչու որ ան է Տէրոջը առջևը հաճելի” : Կու. Գ. 20 :

Լ՛նհնազանդներուն դէմ Լ՛ստուածոյ բարիութիւնը :

“Լ՛նիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կամ մօրը դէմ հայհոյութիւն կ'ընէ. և բոլոր ժողովուրդը Լ՛մէն պիտի ըսէ” : Բ ()ւէ. Իէ. 16 :

“Ճիմարը իր հօրը խրատը կ'անարգէ. բայց յանդիմանութեան հնազանգողը խելացի կ'ըլլայ” : Լուս. ԺԵ. 5 :

«Ան աչքը՝ որ իր հայրը ծաղր կ'ընէ, և իր մօրը հնազանդիլը կ'անարգէ, ձորերուն ագռաւները պիտի փորեն, ու զանիկոց արծիւներուն ձագերը պիտի ուտեն»: Լ. 17:

Ըս և ասոնց նման վկայութիւններէն կը սորվինք .

1. Թէ պարտք կը գնէ Սուրբ Վիրքը զաւակոց վրայ՝ հնազանդելու իրենց ծնողացը՝ իբրև կրօնական պարտականութիւն . և թէ ան որ լանց կ'առնէ՝ ինչպէս որ մարդոց առջևը, անանկ ալ Ըստուծոյ առջևը յանցաւոր է : Սուրբ Վիրքը կը սորվեցընէ որ առ ծնողս անհնազանդութեան յանցանքը ան յանցանքներէն մէկն է որոնց համար՝ Ըստուած իրաւամբ կը բարկանայ մարդոց :

2. Թէ առ ծնողս հնազանդութիւնը նուաստութիւն և ծառայութիւն չէ, բայց ամէն կերպով յարգի և բերկրալի : Սէկ շնորհալի զարդ մըն է . այսինքն, գեղեցկութիւն ալ կ'աւելցընէ վրաս՝ ինչ որ առաջուց սիրելի էր :

3. Թէ այս հրամանէն անցնողը մասնաւոր պատուհասներ պիտի ընդունէ . և բոլոր դարերուն փորձերը կը վկայեն այս բանին՝ թէ մանկութեան ժամանակ ծնողաց անհնազանդութիւնը՝ չափահասութեան և ծերութեան ժամանակի անարգութեան և թշուառութեան կարապետ է :

Տղան իրաւունք ունի ակնունել թէ ծնողքը պիտի կատարէ ան պարտականութիւնները որոնց վրայ տնցեալ գլխուն մէջ խօսեցանք, և թէ

իշխանութիւնը կրցածին չափ տղին օգտին համար պիտի գործածէ : Սակայն թէ որ ծնողքը չկատարէ իր պարտքերը՝ պատճառ մը չէ որ տղան անհնազանդութիւն ընէ իր ծնողքին : Տղին իր ծնողքը սիրելու յարգելու և պատուելու պարտականութիւնները նոյնը կը մնան, որովհետև անոնք լստուծմէ՝ սահմանուեցան անփոփոխ :

Մ. Երասանց և պարտուց որոշուիւնը :

Տղան պարտական է իր ծնողացը կատարեալ հնազանդութիւն ընել, մինչդեռ մանուկ է. այսինքն, որքան որ ծնողքը անոր համար պատասխանատու է, և տղան ալ իր ծնողքէն կախում ունի : Արբոր տղան իր հօգը ինքը կը տանի, ան ատենը հնազանդութեան պարտաւորութիւնը կը դադրի : Բայց ասկէց ետքն ալ տղան մէկը չկրնար գտնել՝ որուն խրատը այնպէս յարգի և անշահախնդիր, և ընդհանրապէս իմատուռն ըլլայ, որչափ որ իր ծնողացն է :

Յարգութեան և սիրոյ պարտականութիւնները կենացը մէջ կը շարունակեն և քանի երթայ առաւել ևս կ'աճին քան թէ կը պակսին : Տղան քանի մեծնայ. կարող կ'ըլլայ առաւել վստմ յարգութիւն և կարեկից սէր ցուցնել, և ծնողքը քանի որ կը ծերանայ առաւել ևս խնամքի կարոտութիւն կ'ունենայ, և կը գտնուի իր երջանկութիւնը յայտնապէս զուկեն կախում ու

նի : Ուրեմն աս է ժամանակը երախտադիտութիւն
ցուցընելու ան բաներուն համար , որ մեր ծնողքը
մեր վրայ տարին մեր մանկութեան ժամանակը ,
և մեր վարքովը ցուցընել՝ անվայել և անխորհուրդ
գործքերուն համար ունեցած զղջումնիս . որոնց-
մով առաջուց զանոնք վշտացուցինք :

Ընցեալ գլխուն մէջ յիշեցի որ ուսուցչին առ
աշակերտ ունեցած առնչութիւնը ծնողական է :
Հոս տեղ աս ալ կ'ըսեմ թէ աշակերտին առ ու-
սուցիչ ունեցած առնչութիւնը որդիական է . այ-
սինքն , աշակերտը պարտական է ուսուցչին հնա-
զանդ ըլլալ նոյն սկզբունքին վրայ , և նոյն պատ-
ճառաւ որ իրեն ծնողքին կ'ընէ : Ծնողքին կ'իյ-
նայ որոշել թէ այս առնչութիւնը որքան ժամա-
նակ պիտի տևէ . բայց քանի որ կը կենայ , աշա-
կերտին պարտքն է հնազանդութիւն , յարգու-
թիւն և սէր ցուցընել :

Հարցումնք :

1. Ըսենք թէ ծնողքդ տեղ մը խրկէ քեզ և
ճամբան մէկը քեզի ըսէ որ չերթաս , որո՞նք խօս-
քին հնազանդելու ես : Ինչո՞ւ :

2. Ըսենք թէ ծնողքիդ արգիլած բանը ուրի-
շը ընել կը հրամայէ քեզի , որո՞նք հնազանդե ու-
ես : Ինչո՞ւ :

3. Ըսենք թէ ծնողքդ կը հրամայէ որ լսու-
տուծոյ չհնազանդիս , խօսքը մտիկ ընելով ես :

4. Ինչաւ լա՞ծ ես , որ տղայք իրենց ծնողացը վրայ անյարգութեամբ կը խօսին , Լստուծոյ ո՞ր պատուիրանքը կը կոտորեն :

5. Գիցու՞ք թէ տղայ մը ծնողացը ըսածը կ'ընէ , ու իրօք չսիրեր և չյարգեր և չբաղձար որ անոնց հաճելի ըլլայ , Լստուծոյ պատուերը կատարած կ'ըլլայ :

6. Եթէ տղայք իրենց ծնողքը ճշմարտապէս սիրեն , հնազանդելը դժուարութիւն կուտայ ա՞նոնց :

7. Ըսէ՛ ի՞նչպէս վարուելու ենք ծնողքներնու հետ՝ անոնց ծերութեան նաև կարօտութեան ժամանակը :

8. Սուրբ Գիորքը աղոց պարտուցը վրայ ի՞նչ կ'ըսէ :

9. Ըսենք թէ տղայ մը ծնողացը անհնազանդ ըլլայ , քանի՞ մեղք կը սորձէ : Ի՞նչ կնանկնք :

10. Ո՞րը աղէկ կը սեպես , ծնողաց հետ յարգանքի պատճառով առանց յարգանք վարուիլը :

11. Գաւթին զակըններէն ո՞րը իր հօրը անհրեշտազանգ և անգութ էր :

12. Ի՞նչպէս պատժուեցաւ ան :

13. Սուրբ Գիորք մէջ յիշուած բարի մարդ մը կը յիշնս , որ իր տղաքը աղէկ չկրթելուն համար պատժուեցաւ :

14. Գիցու՞ք թէ տղայ մը դժբաղդութեամբ չար ծնողք մը ունենայ՝ որ բնաւ իրաւունք չձանչնայ ,

տղան ինչ ընելու պարտական է այսպէս ծնողքի մը :

45. Բացառիկ թէ աշակերտները իրենց ուսուցիչներուն հետ ինչ կերպով վարուելու են :

46. Երբոր կը տեսնաս թէ աշակերտները այսպէս կը վարուին, ինչ զգացում կ'ունենաս :

47. Եթէ ազայք կ'ուզեն որ սիրելի և յարգի ըլլան, իրենց ուսուցիչներուն և ծնողացը հետ ինչպէս վարուելու են :



Գ Լ ՈՒՒ Խ

ՔԱՂԱՔԱՑԻՈՑ ԳԱՐՏՔ



ՅՕԳՈՒՆԺ Ա

Կառավարութիւն :

Բսնք թէ քսան մարդ իրենց ընտանիքովը անբնակ կղզի մը իյնան . ասոնք շուտով կարօտութիւնէն տուներ կը շինեն, երկիր կը մշակին, և գործածութեան համար ինչ և իցի կենդանի կը բռնեն : Եսանկով իւրաքանչիւր ընտանիք ինչ որ շինէ և ինչ որ արդիւնաւորէ և ինչ որ բռնէ բուն իրենը կը սեպուի . և ով որ իբ ունեցածը

ուրիշի հետ կը փոխադրէ, ան ալ իրենք կը սեպուի: Ուրիշ խօսքով՝ իւրաքանչիւր ընտանիք իրեն համար պիտի գործէ ու ինչ որ արգիւնաւորէ իրենք կը սեպուի:

Ասանկով երջանկութեամբ Կրնան ապրիլ. և թէ որ ամէն մէկը վերցոյիշեալ կերպով վարուի և գործէ, ոչ օրէնք հարկ կ'ըլլայ, և աչ ալ կառավարութիւն: Իսկ ըսենք թէ սկսեն անկարգութեամբ երթալ. մէկը իր դրացնոյն ընտանիքը իրենց տունէն դուրս վռնտէ, կամ անոնց հունձքը յափըշտակէ, և զանոնք սովամահ մեռցընէ: Եւ ըսենք թէ ուրիշ մը տեսնէ որ ասիկայ գիւրին ճամբայ մըն է, ինքն ալ նոյնպէս ընէ իրեն գրացիին: Էտետութիւնը աս պիտի ըլլայ թէ՛ որովհետև ոչ մէկը իր աշխատութեան պարտզը կրնայ վայելել, ուրեմն մէկը գործել և աշխատիլ պիտի չուզէ. և ասանկով կամ սովամահ պիտի կորսուին կամ թէ ամէն մէկ ընտանիք մէկ գի պիտի քաշուի և անհանգիստ և անօգնակա՛ն՝ նեղութեամբ և առանձին՝ անապատին մէջ պիտի ապրին:

Կամ ուրիշ օրինակ մը առնենք: Ըսենք թէ զրկեալը վրէժխնդրութիւն ընելու համար, զինքը վնասողին տունը կրակը տայ. ան ատենը երկու ընտանիք պիտի ըլլան առանց տան. և այն երկուքը նոյն կերպով երթան ուրիշ երկու ընտանիք իրենց տուներէն դուրս հաննն. և այս երկուքն ալ վրէժխնդիր ըլլալով զիրենք նեղու-

ճերտն տուները այրեն, և սասանկ շարունա-
կեն մինչև որ բոլոր տուները և սասցուածքները
կորնչին:

Արդ՝ յայտնի է թէ այս ամենևին աղէկ ճամ-
բայ մը չէ. ասոր դէմը առնելու է, և ան ալ պէտք
է որ 'ի սկզբան ըլլայ: Բոլոր ժողովուրդը միաբա-
նելու են առաջին յափշտակողին դէմ, և զինքը
ստիպելու են որ գողցած կամ յափշտակած սասց-
ուածքը տէրոջը դարձնէ, և դաշինք ընելու են
'ի միասին որ միշտ սասանկ ընեն այն ամենուն՝ որ
գողութիւն կ'ընեն: Այլ թէ որ այս կերպով չը-
յաջողի, կրկին միաբանելու են գողը անանկ կեր-
պով մը սրտածելու, որ դրացնոյն սասցուածքնե-
րը ետ տալու սրտատուորի: Այս կ'ըլլայ այն ժո-
ղովորեանը առաջին օրէնքը:

Այս օրէնքը դնելէն ու որոշում ընելէն ետ-
քը, թէ հոգ տանելու և նայելու են որ մէկը
իր դրացնոյն սասցուածքին և իրաւունքին չխառ-
նուի, պէտք է որ մէկը վրէժխնդիր չըլլայ, ոչ
ալ բռնութեամբ ետ սրահանջէ իրմէ յափշտա-
կած բանը:

Այստի ժողովուրդը դարձեալ կանոն դնելու է
որ՝ թէ որ մէկը զգականք կրէ, վնասին փոխարէնք
իբենց յանձնելու է, ոչ թէ ինքն իր գլխուն ի-
րեն իրաւունքը վնասուելու է: Ասոր պատճառք
յայտնի է. ինչու որ՝ անոնք իրմէ լաւագոյն գա-
տաւորներ կրնան ըլլալ՝ որոշելու թէ որքան վնաս
բաշտած է, և ի՞նչ փոխարէն ըլլալու է: Այս կ'ընայ

չէ որ ամէն մարդ իր դատաւորը ըլլայ . այս ալ ժողովրդոց երկրորդ օրէնք կ'ըլլայ :

Այս երկու օրէնքները կ'ըլլան նախ՝ թէ մէկը իր ընկերին կամ դրացնոյն իրաւունքին պիտի չբխառնուի՝ որ և իցէ կերպով : Այլ երկրորդ՝ թէ որ խառնուի, վնաս կրող անձը ջանալու չէ որ իր վնասին փոխարէնը անձամբ հատուցանէ, կամ իր իրաւունքները պաշտպանէ . այլ բանը բոլոր ժողովրդոց ձգելու է՝ որ անոնք վճռեն :

Ամսնակ անցնելով այս երկու օրէնքները կրկին կը բաժանին՝ քանի որ վնասները բազմանան : Ա՛նկը իր դրացնոյն երկրին մէկ մասը իրեն կը գրաւէ, և այն մէկ կերպ պատիժ կ'ուզէ : Ա՛նկը ցորեկը, և ուրիշ՝ գիշերը գողութիւն կ'ընէ . մէկը բռնութեամբ ւտան կը մսնէ . ուրիշ մը ձի կը գողնայ . ասոնց ամէն մէկը զանազան պատիժներ կ'ուզեն : Այս մէկը ուրիշին կը զարնէ կամ մէկը ուրիշին տունը կ'այրէ . ասոնք ամէնը որոշելու են, և ամէն տեսակ յանցանքը սահմանուելոսեմ, անանկ որ անմեղը յանցաւորէն որոշուի և յանցաւորները ըստ արժանւոյն պատժուին :

Այս բոլոր ժողովուրդը բազմանայ, հարկ կ'ըլլայ որ օրէնքներն ալ շատնան . ան տանը անկարելի կ'ըլլայ որ ամէն դիպուածքի համար ժողովուրդը ի միասին ժողովի : Այս անորոյ՝ կը պարտաւորին որ քանի մը անձինք ընտրեն՝ որ իրենց տեղը անոնք այս գործքերուն համար ժողովին և հոգան :

Այլ կամ տասը անձինք մէկտեղ կու գան և

խոհեմ և իմաստուն անձ մը պիտի ընտրեն և միա-
բանին որ անոր վճռոյն հաւանութիւն տան : Ա-
պա ընտրողները կ'ըսուին () օրէնսդիրք . ամանկ
ժողովք մը կ'ըսուի օրէնսդրական ժողով :

() օրէնքները դրուելէն ետքը երբոր վնասները
ստէպ կը պատահին , բոլոր ժողովուրդը չեն կրնար
ժողովիլ և երկու մարդոց մէջ եղած խռովութեան
գատը տեսնել : Ասանորոյ պիտի պարտաւորին
քանի մը անձինք սահմանել , որ անոնք դատերը
լսեն և ըստ օրինաց վճռեն : Ասանկով շատ ժա-
մանակ կը շահուի և արդարութիւնն ալ առաւել
կը հաստատուի : Այս անձինքը կ'ըսուին Պատա-
ւորք և իրենց ժողովը կ'ըսուի Ատեան :

Ասկէց 'ի զատ ուղիղ որը ըլլալն ու չարագործին
պատիժը սրոշելէն ետքը , վճիռը 'ի գործ դնող
մարդիկ ալ պէտք են : Այս անձինքն ալ կ'ըսուին
ստիկաններ :

Արդ բոլոր պաշտօնատարները , դատաւորները ,
օրէնսդիրները և այլն մէկտեղ կ'ըսուին երկրին
կառավարութիւնը : Ասոնք սահմանեալ անձինք
են՝ որ օրէնքներ հաստատեն և զանոնք 'ի գործ
գնել տան , անանկ որ մէկը իր ընկերին իրաւուն-
քին չխառնուի . և թէ որ խառնուի պարտաւորի
վնասը փոխարինելու , և իր յանցանքին պատիժը
ընդունէ : Աւտի մարդու մը պարտքերը իբրև
քաղաքացի ասոնք են ընդհանրապէս :

4 . Ինչպէս որ ինքը հաւանութիւն կու տայ թէ
մէկը իր դրացիին իրաւունքներուն խառնուելու չէ ,

անանկ ալ ինքը սս օրէնքին հնազանդելու է, այս-
ինքն պարտական է բոլոր իր կենցաղավարութեանը
մէջ ուրիշին ազատութեանը, համաւսին, ստաց-
ուածքին և ընտանեացը կողմանէ փոխադարձու-
թեան օրինաց հնազանդիլ, կամ թէ ուրիշներուն
այնպէս ընել ինչպէս որ կ'ուզէ թէ ուրիշները ի-
րեն ընեն :

2. Թէ որ ուրիշ մարդիկ այս օրինաց չհնա-
զանդին և զինքը փնասեն, պարտական է անձամբ
հատուցումն չընել, այլ ընկերութեան ձգել, այ-
սինքն օրինաց ատեանին յանձնելու է :

3. Արովհետև հաւանութիւն տուած է թէ օ-
րէնսգէտք քնեն բոլոր օրէնքները, վասնորոյ պար-
տական է անոնց իշխանութեամբը եղած օրէնք-
ներուն հնազանդիլ :

4. Արովհետև ինքն ալ ժողովօրոց անդամ է,
որ խոստացած է ամէն անհատից պաշտպանութիւն
ընել, վասնորոյ պարտական է ամէն կերպով ջանք
ընել որ այս պաշտպանութիւնը ըլլայ : Պարտական
է իր ընկերին՝ թէ հարուստ և թէ աղքատ, թէ
ազնուական և թէ նուաստ, բոլոր իրաւունքները
պաշտպանելու ջանք ընել :

5. Կառավարութեան նպատակները կամ խոր-
հուրդները առանց ստրկի յառաջ չեն կրնալ եր-
թալ, որովհետև կառավարիչներուն, դատաւոր-
ներուն և այլն ստակ հատուցանելու է՝ իրենց պաշ-
տօնին փոխարէն . և որովհետև ամէն մարդ անոնց
պաշտօններէն օգտու ունի, վասնորոյ կամաւ ի-

ընթացիւր՝ որ հարկ եղած, ստակը հասուցանելու է :

Ըսածնիս աղէկ հասկըցընելու համար՝ օրինակով բացատրենք. ըսենք թէ մարդ մը քու ձիդ գողցաւ. և ոչ օրէնք կայ, ոչ ալ կառավարութիւն : Այնքան ձիդ կը պահանջես բայց անիկայ չտաք : Ըսենք թէ ջանառաք բռնութեամբ առնես, մարդը քեզի դէմ կը կենայ և թէ որ քեզմէ դժուար է, քեզ կը վնասէ և կը վնասէ, կամ գուցէ մեռցունէ զքեզ՝ որ իրեն նեղութիւն չտաս : Ըսանկով ճարը չես կրնար գտնել, և հետևեալ օրը կու գայ կովդ ալ կը յափշտակէ, կամ թէ քեզ տունէդ կ'արտաքսէ, և դուն զանիկայ չես կրնար արգիլել :

Իսկ ըսենք թէ կառավարութիւն և օրէնք կայ. խորհէ թէ որքան տարբեր կ'ըլլայ քու վեճակդ : Ըսանկ պարագաներու մէջ օրէնք կ'ըլլայ, մարդիկ գողութիւն ընելէն արգիլելու համար. և դատաւորներ կ'ըլլան որոշելու թէ արդեօք այս մարդը գողութիւն ըրաւ թէ չէ. և աստիկաններ՝ գողը պատձեւաւ և գողցած ապրանքը տէրօջ տալու համար :

Հիմա ըսենք թէ ձիդ գողցուեցաւ, գողին երթալուդ տեղը դատաւորաց մէկուն կ'երթաս, և անոր կ'իմացընես որ այս ինչ մարդը ստացուածքդ գողցաւ : Ինքը շուտով մարդ կը խրկէ գողին ետեւէն, և բերել կու տայ : Ըն ասենք դուն քու կին պատմութիւնդ կ'ընես և այն ալ իր պատմութիւնդ կ'ընէ. և թէ որ հաստատես թէ ձին քու կը

է, դատաւորը կը վճռէ որ ձիգ առնես, և գողը
բանտը կը խրկէ որ՝ գողութեան պատիժը ըն-
դունէ :

Հարցմանս :

1. Մարդիկ առանց օրինաց և կառավարու-
թեան 'ի միասին կրնա՞ն բնակիլ :

2. Ի՞նչ պարագաներու տակ կրնան այսպէս
բնակիլ :

3. Ի՞նչ բան օրէնք և կառավարութիւն հարկ
կ'ընէ :

4. Ըսենք թէ մարդիկ ամէնքն ալ անիրաւու-
թիւն ընեն և օրէնք չըլլայ զանոնք զազելու, հե-
տևութիւնը ի՞նչ է :

5. ()րէնքը առանց կառավարութեան օգտա-
կար պիտի ըլլայ : Ինչո՞ւ :

6. Ինչո՞ւ աղէկ չէ որ ամէն մարդ իր դատա-
տանը տեսնէ :

7. Ընկերութեան երկու գլխաւոր օրէնքները
որո՞նք են :

8. ()րէնսդրական ժողովք ի՞նչ ըսել է :

9. ()րէնսդրական ժողովքը ի՞նչպէս կը կազ-
մուի :

10. Ղատաւոր ի՞նչ ըսել է :

11. Ղատաւորները ի՞նչ օգուտ ունին :

12. Ոստիկանները ի՞նչ օգուտ կ'ընեն :

13. Թե որ մէկը զիս վնասէ և անձամբ զանիկայ
պատժեմ, երկրիս օրէնքը աւրած կ'ըլլամ : Ինչո՞ւ :

14. Ըսենք թէ մէկը յանցանք մը գործեց ինձի

դէմ. ես ալ խուռն բազմութիւն մը ժողովեմ և իր տունը կործանեմ, օրէնքը աւրած կ'ըլլամ: Ինչո՞ւ :
15. Բսենք թէ օրէնք մը դրուեցաւ, և ես այն օրէնքը անիրաւ կը սեպեմ, իրաւունք ունիմ զանիկայ աւրելու : Ինչո՞ւ :

16. Բսենք թէ տեսնեմ որ խուժադուժ անձինք ժողովեր ու մէկուն վրայ կը յարձակին, թէ որ կայնիմ անդորրութեամբ դիտեմ նէ, անմեղ կը տեսուիմ : Ի՞նչ ընելու եմ :

17. Բսենք թէ չար անձինք վնաս մը ըրին, և ես կը գովեմ անոնց քաջութիւնը և իրենց յանցանքը կը պաշտպանեմ, անմեղ եմ :

ՅՕԳՈՒՆԺ Բ

Կառավարութեան զանազան յեւտ :

Ընցեալ յօդուածին մէջ խօսեցանք ընտրական կառավարութեան վրայ :

Ընտրական կառավարութիւնն ան է՝ որ բոլոր պաշտօնատարները ժողովողէն կ'ընտրուին . այսինքրն, բոլոր ընկերութենէն, կամ անոնցմէ՝ որ յատկապէս այս ընտրութիւնն ընելու համար սահմանուած են :

Իսկայ ամէն կառավարութիւն ընտրական չէ : Իմանք ժառանգական են . այսինքն, մարդ մը ժառանգութեամբ պաշտօնի կը հասնի : Ըստ տեսակ կառավարութեան մէջ, թէ որ արքայն մեռնի,

իր եղբայրը կամ որդին թագաւոր կ'ըլլայ իր ան-
ղը . այսինքն , իւր պաշտօնը կը ժառանգէ՝ ինչ-
պէս որ տուն մը կամ երկիր մը կը ժառանգէ : Այ-
թէ որ մէկը օրէնսդիր է , իր որդին զինքը կը յա-
ջորդէ , երբոր ինքը մեռնի :

Վարձեալ՝ կան կառավարութիւններ ալ որ ըստ
մասին ժառանգական և ըստ մասին ընտրական են :
Եւս տեսակ կառավարութեան մէջ պաշտօնատարաց
ոմանք ժառանգական են , ոմանք ալ ընտրական :
Բայց ասոնցմէ զատ ուրիշ ձև կառավարութիւններ
կան : Կառավարութիւն մը կամ միապետական կամ
ազնուապետական և կամ հասարակապետական
կ'ըլլայ :

Միապետական կառավարութիւնն ան է՝ որ
գլխաւոր իշխանութիւնը մէկ մարդու մը ձեռք
տրուած է , որ կը կոչուի թագաւոր : Թէ որ թա-
գաւորը ընտրուած է , կ'ըսուի ընտրական միապե-
տութիւն . և թէ որ ժառանգութեամբ իր պաշտօ-
նին հասնի , կ'ըսուի ժառանգական միապետութիւն :

Կառավարութեանց ոմանց մէջ թագաւորը իշ-
խանութիւն ունի ուզածին պէս օրէնք հաստատե-
լու , և իր հպատակաց ստացուածքին՝ կենացը՝
ուզածը ընելու . ասիկայ կ'ըսուի բացարձակ միա-
պետութիւն կամ տիրապետութիւն : Ոմանց մէջ
ալ թագաւորը այս ինչ կանոններուն մէջ կապ-
ուած է , որ անոնցմէ չկրնար անցնիլ . կամ թէ
օրէնք չհաստատուած՝ ուրիշ անձանց հաւանու-
թիւնը կ'առնէ . ասիկայ կ'ըսուի սահմանեալ մի-
ապետութիւն :

Աղնուապետութիւնը այն կառավարութիւնն է՝ որ բոլոր իշխանութիւնը քանի մը անձանց ձեռքն է : Աղնուապետութիւնը կամ ժառանգական է , կամ թէ նոյն ինքն ազնուապետական անդամները կ'ընտրեն՝ թէ որ իրենց մէջէն մէկը պակսի :

Հասարակապետութիւնը ան կառավարութիւնն է՝ որ բոլոր պաշտօնատարները կամ ժողովրդէն կ'ընտրուին , կամ թէ ժողովրդէն ընտրուածներէն , ինչպէս որ ըսինք :

Այս ձև կառավարութիւնները երբեմն պարզ են , և երբեմն բազադրեալ կամ խառն :

1. Ինչպէս Առուսիայի կառավարութիւնը պարզ տիրապետութիւն մըն է՝ առանց սահմանաւոր զօրութեան : Այսպէս միայն այն խորհրդականներէն օգնութիւն կ'առնէ՝ որ ինք սահմանած է :

2. Մեծն Ռիսամիոյ կառավարութիւնը բազադրեալ է երեք ձիւղերէ . թագաւոր , Ղորտեր , ու Արեւսփոխաններ :

Թագաւորին պաշտօնը ժառանգական է , և գլխաւոր օրէնագիրը թագաւորն է :

Օրէնադրութեան երկրորդ ձիւղը Ղորտերն են . ասոնք 'ի սկզբան . թագաւորէն կ'ընտրուին , և ընտրութենէ ետքը իրենց յաջորդները ժառանգական են :

Օրէնադրութեան երրորդ ձիւղն է Արեւսփոխաններուն ժողովքը . ասոնք ժողովրդէն ընտրուած են՝ ինչպէս Հասարակապետութեան մէջ :

Օրէնք մը չկրնար Հաստատուիլ մինչև որ այս

երեք Ճիւղերը հաճութիւն չտան . այսինքն (Թ)ա-
գաւորը , Աորտերն ու Արեսսիոսաններուն ժողով-
ները :

Ամէն այս կառավարութեանց մէջ խաղաղու-
թիւն , ապահովութիւն և երջանկութիւն կ'ըլլայ ,
թէ որ պաշտօնատարները ևայն , առաքինի և ժո-
ղովրդեան բարեկեցութեանը և երջանկութեանը
փափաքող ըլլան :

Հարցման :

1 . Բնտրական և ժառանգական կառավարու-
թեան տարբերութիւնը ցուցնուր :

2 . Միապետութեան , Ազնուապետութեան և
Հասարակապետութեան մէջի տարբերութիւնը բա-
ցատրէ :

3 . Անսահման և սահմանաւոր միապետութեան
տարբերութիւնը ցուցնուր :

4 . Ուոսիայի և Անգղիայի կառավարութեան
տարբերութիւնը ինչ է :

5 . կառավարութիւն մը ինչպէս կը հարստա-
հարե ժողովուրդը :

6 . Ժողովուրդը իրար ինչպէս կը հարստա-
հարեն :

7 . Արբոր ժողովուրդը իրար հարստահարե ,
Քասին ինչ դարման կայ :

8 . կառավարութեան մը մէջ հարստահարու-
թեան գէժ ամենէն ապահով կերպը որն է :



Գ Լ Ո Ւ Խ Ե Ը

ԲԱՐԵՍԻՐԱԿԱՅ ԳԱՐՏՈՒՑ ՎՐԵՑ

Բարեփոխիչներն ։

Մինչև հիմա ան պարտուցը վրայ խօսեցանք, որ մարդ առ մարդ ունի փոխադարձութեան սկզբունքով . որոնցմով մարդիկ իրարու վրայ արգար իրաւունք ունին ։ Ասոնք այն պարտականութիւններն են որ թէպէտև կը թողուն որ մարդիկ իրենց ուզածին պէս իրենց երջանկութիւնը փնտռեն, սակայն բոլորովին կ'արգելին զանոնք ուրիշները իրենց երջանկութեան իրաւունքներէն զրկելէն ։

Եթէ մարդիկ այս օրէնքին հնազանդին, աշխարհքը առաւել ևս երջանիկ կ'ըլլայ ։ Ո՛չ բռնութիւն, ո՛չ յափշտակութիւն, ոչ զրպարտութիւն, ոչ ալ որ և իցէ փնտռ կ'ըլլայ . և ամէն մարդ խաղաղութեամբ ու անդորրութեամբ կ'ապրի ։

Բայց աշխարհքը այս երջանկութեան հասցընելու համար բան մըն ալ հարկաւոր է ։ Բաւական չէ որ դրացիներուն և ընկերներուն փնտռ չտանք, այլ անոնց բարեխաւութիւնը փնտռելու ենք, և այս օրէնքը կ'ըսուի բարեսիրութեան օրէնք ։ Օ՛ր օրինակ . մարդս հիւանդութեան ենթակայ է, և ամէն ժամանակ հիւանդ պակաս չէ ։ Հիւանդները գործելու և իրենց ապրուստը ձարելու անգամ կարող չեն . և եթէ մէկը անոնց հոգ

չտանի՝ կը կորնչին : Նաև մարդս ենթակայ է փորձանքի մէջ իյնալու , և եթէ օգնութիւն չըլլայ՝ ներութիւն կը քաշէ :

Ո՞րքան չար գործք մըն է , երբոր կը տեսնեմ որ մանուկ մը կառքին տակը պիտի իյնայ ու մեռնի ու չեմ վազեր մէկդի առներ՝ խորհելով թէ պարտազանութիւն չունիմ այսպէս բան մը ընելու , ու չեմ խառնուիր : Ըմէն մարդ կ'զգայ թէ՛ թէպէտև առաջ բնաւ տեսած չեմ այն մանուկը և կարելի է որ ալ պիտի չտեսնամ , սակայն իմ պարտքս է կրցածիս չափ աշխատիլ անոր օգնելու , այսինքն . ամէն մարդ կ'զգայ , որ ես և բոլոր մարդիկ բարեսիրութիւն ընելու պարտական ենք :

Ղարձեալ՝ ըսենք թէ մերձակայ գիւղի մը մէջ շատ մը տղաք կան՝ որ ոչ կարդալ գիտեն և ոչ ալ գրել . և ասանկով օգտակար գիրք , մանաւանդ Սուրբ Գիրք կարդալու բոլոր հաճութիւններէն և օգուտներէն զրկուած են : Եւ ըսենք թէ ան տեղուանքը երկու երիտասարդ գանուին և անսնցմէ մէկը ըսէ թէ , ան տղոցը ամենէին պարտականութիւն չունիմ , ու ես իմ գործիս միայն պիտի նայիմ : Իսկ միւսը առանց ասանկ խորհրդածութեան դրպարատուն մը բանայ , ու զանոնք հոն ժողովէ և կարդալ ու գրել սորվեցրնէ՝ անանկ որ երջանիկ և օգտակար քլլալու ճամբուն դրուին տղաքը : Եւս երկուքէն մըր առաւել սիրելի է մեզի : Ո՞րը իր պարտքը կատարեց : Ո՞րը իր Երկնաւոր Ըօրը կապին պէս գործեց :

Վարձեալ՝ ըսենք թէ այս տղաքները խիստ չար են, ու պիղծ խօսքեր կ'ընեն, սուտ կը խօսին, ու գողութիւն կ'ընեն : Այժմէ բարի մէկը տեսնէ ու ըսէ, շատ կը վշտանայ, ու գուցէ իր պարտքը կ'ըլլայ անոնց մէջէն ամենէն մեծն ու չարը պատժել տալ : Վիցուք թէ մարդուն մէկը գիտնալով անոնց վիճակը, ինքիրեն ըսէ . Այս տղայոց քաղաքակից ըլլալովս՝ պարտքս կը սեպեմ, ասանկ չարութիւն մը դադրեցընելու համար զանոնք ամէնը բանտին մատնել . ալ ան ատեն իմ պարտքս կը լմնայ, ու ես ալ բանի մը չեմ խառնուիր . և թէ որ անոնք բանտին մէջ մեռնին, յանցանքը իրենցն է :

Վայց ըսենք թէ ուրիշ մէկը երթայ անոնց մէջ և իրենց գործքին չարութիւնը ցուցընէ և քաղցրութեամբ խօսի անոնց հետ, և անոնց սորվեցընէ բարի և առաքինի ըլլալ, և զանոնք առաքինի և բարեպաշտ անձինք ընելու աշխատի : Աս երկուքէն ո՞րը յարգելի կ'ըլլար . ո՞րը իր պարտքը կատարած կ'ըլլար . ո՞րը Սուրբ Վրոց հնազանդութեամբ գործած կ'ըլլար :

Վիչ մըն ալ յառաջ երթանք : Ըսենք թէ այս տղաքը նախատեն և անարգեն զանիկայ, իւր ստացուածքը գողնան, և երբոր իրենց բարերարութիւն մը ընելու միտքով գայ, ծաղր ընեն և կրցածուն չափ մնաս տան : Ինքն ալ ձգէ զանոնք և երթայ, ըսելով թէ իմ ծախքովս եկայ հոս առանց հատուցման, այս տղոցը՝ երջանիկ և առաքինի ըլլալ սորվեցընելու, և բոլոր ընգծ-

Տած հատուցումն փնաս, անարգանք և յափշտակութիւն է. զանոնք պիտի ձգեմ երթամ, թող կորսուին : Կամ դիցուք թէ ըսէ, Հոգ չեմ ըներ ինչ կերպով որ կ'ուզեն անանկ թող վարուին ինծի հետ, ես պիտի շարունակեմ ձեռքէս եկած ազէկութիւնները անոնց ընելու : Որքան չարութիւն որ գործեն այնքան յայտնի կը ցուցնեն թէ կրթութեան կարօտ են. և ես ևս առաւել պիտի ջանամ որ զանոնք առաքինի և երջանիկ ընեմ : Ընոնք որքան որ ղիս ատեն, ես զանոնք այնքան պիտի սիրեմ : Ըրդ՝ այս երկու կերպերուն ո՞րը գովելի և արժանապատիւ է : Այլ այս կերպերուն ո՞րը բռնող մարդը յարգելի է և սիրուն : Ո՞րը ընենք նէ պարտականութիւննիս ըրած կ'ըլլանք : Մեր Տէրոջը օրինակը ո՞ր կերպին նման է :

Այժմէ այս բաներուն վրայ խորհինք, պիտի տեսնենք որ մեծ պարտականութեանց տակ ենք՝ ապերջանկաց, չարերուն և մեզ փնասողներուն անգամ մարդասիրութիւն ցուցնելու : Այլ այսպէս ըլլալը մեր Տէրոջը սորվեցուցածէն յայտնի է : Մատթ. Ե. 43 — 48 : « Ես եր էք որ ըսուեցաւ. Բաւ ընկերդ սիրես, ու թշնամիդ առես : Բայց ես ձեզի կ'ըսեմ. Սիրեցէք ձեր թշնամիները. օրհնեցէք ձեզ անիծողները. բարի ըրէք անոնց՝ որ ձեզ կ'ատեն, և աղօթք ըրէք անոնց համար՝ որ ձեզ կը շարջորկեն ու կը հալածեն. Որ ձեր երկնաւոր Հօրը որդիքը ըլլաք :

ինչու որ իր արեւը կը ծագեցընէ թէ չարերուն և թէ բարիներուն վրայ , և անձրև կը խրկէ թէ արդարներուն և թէ մեղաւորներուն վրայ : Ասան զի թէ որ դուք ձեզ սիրողները սիրէք , ի՞նչ վարձք կ'ունենաք . չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն : Այլ թէ որ միայն ձեր եղբայրներուն բարև տաք , ի՞նչ աւելի կ'ընէք "բնիշխան" . չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն : Աւրեմն դուք կատարեալ եղիք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է" :

Գարձեալ Պատմ. Զ. 32—36 : "Այլ թէ որ դուք ձեզ սիրողները սիրէք՝ ի՞նչ շնորհ կ'ունենաք . ինչու որ մեղաւորներն ալ կը սիրեն զերենք սիրողները : Այլ թէ որ դուք ձեզի բարի ընողներուն բարի ընէք , ի՞նչ շնորհ կ'ունենաք . ինչու որ մեղաւորներն ալ նոյն բանը կ'ընեն : Այլ թէ որ անանկ մարդիկներու փոխ տաք՝ որոնցմէ յոյս ունիք առնելու , ի՞նչ շնորհ կ'ունենաք . ինչու որ մեղաւորներն ալ մեղաւորներուն փոխ կու տան , որ նոյն չափովը ետ առնեն : Հապա սիրեցէք դուք ձեր թշնամիները , ու բարի ըրէք . և փոխ տուէք առանց փոխարէնի մը սպասելու . և ձեր վարձքը շատ պիտի ըլլայ , ու Բարձրելոյն որդիքը պիտի ըլլաք . ինչու որ անիկայ բարերար է ապերախտներուն ու չարերուն : Աւրեմն գթած եղիք՝ ինչպէս որ ձեր Հայրն ալ գթած է" :

"Գթած եղիք" խօսքին միտքը յայտնի է , այսինքն անանկներուն երջանկութիւնը յառաջացը-

ներ, որ փոխադարձութեան օրէնքով մեղմե տա-
հանջեցու իրաւունք չունին և որոնցմէ հատու-
ցում մը ընդունելու ակնկալութիւն չունինք :
Սեր երկնաւոր շօրը բարեսիրութիւնը օրինակ
առնելու ենք մեր բարեսիրութեանը :

“Վթած եղիք ինչպէս որ ձեր երկնաւոր շօրն
ալ գթած է” : Ըստիկայ կը սորվեցընէ

Ա. ինչպէս որ Ըստուած ինք՝ առանց ամենափոքր
պարտականութեանց , բոլոր իր արարածներուն եր-
ջանկութեան անսպառ աղբիւր է , նմանապէս ալ մե-
զի պատուիրած է որ մեր տաղանդները , մարմնա-
ւոր և մտաւորական ստացուածքները մեր ընկեր-
ներուն երջանկութեանը համար 'ի գործ դնենք :
Ինչ որ մեզի շնորհուած է , չէ թէ բուն մեր
երջանկութեանը համար արուած է ուղղակի և
գլխաւորապէս , հապա անուղղակի , այսինքն .
որ մենք երջանիկ ըլլանք ուրիշներուն երջանկու-
թիւնը յառաջ տանելով :

Բ. Ըստուած իր նախախնամութեան ընդհանուր
պարգևները կ'ընծայէ առանց նայելու ընդունողին
ով կամ ինչ ըլլալուն : “Յր արևը կը ծագեցընէ
չարերուն ու բարիներուն վրայ , և անձրև կը խորկէ
արդարներուն ու մեղաւորներուն վրայ” : Ս'ենք ալ
նոյն օրինակին հետեւելու ենք : Ո՛հէ և մեր անձնա-
կան սէրը և մեր բարոյական յարգութիւնը արժանի
հղողներուն մատուցանելու ենք , բայց մեր ողորմու-
թիւնները բոլոր կարտօմելոց շնորհելու ենք : Աւս-
տի նեղեալները մխիթարելու ենք , առուապեալ-

ները գթալու ենք, աղքատներուն՝ օգնելու ենք, հիւանդներուն տես երթալու ենք, ագէտները կրթելու ենք. հոգ չէ՞ որքան անարժան որ ըլլան, կամ թէ բարբերինն որքան ատելի ըլլայ մեզի:

Գ. Լուսն օրինակէն կը սորվինք թէ մեր բարեսիրութիւնը՝ ընդունողին դէպ'ի մեզի ցուցուցած զդպրուաններուն նայելով պիտի չըլլայ: Լուսուած այնպէս սիրեց զմեզ, որ երբոր մեք մեղաւոր էինք՝ Վրիստոս մեռաւ մեզի համար: Երբոր թշնամի էինք, իր Որդւոյն մահաւամբը Լուսուծոյ հետ հաշտուեցանք: Լուսպէս մեր օրհնեալ փրկիչը իր կեանքը իր ամենազառն թշնամիներուն բարի ընելով անցուց առանց նկատելու անոնց ամենաչար անիրաւութիւնը:

Լուսպէս մեզի պատուիրեալ է մեզ անիծողները օրհնել. մեզ ատողներուն բարի ընել և մեզ չարչարողներուն և հալածողներուն վրայ աղօթք ընել:

Լուսուծոյ օրինակէն զա՛ զանազան պատճառներ կան, որոնք այս պարտականութիւնը մեր վրայ կը դնեն, որոնց ոմանք հետեւեալներն են.

Ա. Լուսուած՝ մեր իրեն դէմ ըրած յանցանքներուն թողութեան պայման ըրաւ. «Սասն զի թէ որ գոք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ»: Կարդա՛ երկու ծառաներուն առակը: Սուրբ. ԺԸ. 23—35: «Լուսոր համար երկնից թագաւորութիւնը կը նմանի թագաւորի մը, որ իր ծառաներէն հաշիւ առնել

դւղեց : Ու երբոր սկսաւ տունել, տասը հազար տաղանդի պարտական մը բերուեցաւ իրեն : Իսպոյց անիկայ վճարելու հարող-ի-ն չունենալով, իր տէրը հրաման ըրաւ որ անիկայ՝ և անոր կնիկը՝ ու որդիքը և անոր բոլոր ունեցածը ծախուի, ու պարտք վճարուի : Իսկ ծառան անոր առջևը իյնալով՝ երկրպագութիւն կ'ընէր ու կ'ըսէր. Տէր՝ համբերէ ինծի, և ամենը քեզի կը վճարեմ : Եւ ան ծառային տէրը վրան խղճալով՝ արձակեց զանիկայ, ու պարտքը շնորհեց անոր : Եւ նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ՝ որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր, ու զանիկայ բռնելով՝ կը խեղդէր, ու կ'ըսէր. Ա՛ճարէ՛ ինծի ունեցած պարտքդ : Ուստի անոր ծառայակիցը անոր ոտքը ինկաւ, կ'աղաչէր անոր՝ ու կ'ըսէր. Համբերէ ինծի, ու քեզի կը վճարեմ : Եւ ինքը չէր ուղեր. հապա գնաց՝ բանտը դրաւ զանիկայ, մինչև որ պարտքը վճարէ : Երբոր իր ծառայակիցները տեսան եղած բաները, խիստ արտմեցան, ու եկան իրենց տիրոջը՝ հասկըցուցին բոլոր եղածը : Ըն առնել անոր տէրը կանչեց զանիկայ՝ ու ըսաւ անոր. Չար ծառայ՝ ան բոլոր պարտքը ես քեզի շնորհեցի՝ ինծի աղաչելուդ համար : Ուրեմն պէտք չէ՞ր քեզի ալ քու ծառայակցիդ ողորմիլ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ : Եւ անոր տէրը բարկանալով՝ դահիճներուն մատնեց զանիկայ, մինչև որ բոլոր պարտքը վճարէ : Ես քեզի ալ իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի,

Թէ որ ձեր սրտերէն չէք ներեր , ամէն մէկը փրկեալ չեղաւ , իրենց յանցանքները” :

Բ. Ըն առաքինութիւնները՝ որոնք մեր ընկեր-ներուն մեզի ըրած չարիքներուն փոխարէն կը գործածենք՝ շատ գերազանց են , և մեզ երկնից Թագաւորութեանը յարմար ընող սրտի սեպհական : Ինչպէս հեղութիւն , համբերութիւն և ներողամտութիւն : Ըյսպէս զգացումունեցողաց է , որ մասնաւոր օրհնութիւններ խոստացուած է :

Ըն առաքինութիւնները՝ որոնց համար մարդոցմէ հատուցումն կ'առնենք , կրնայ ըլլալ որ մարդոց սէրէ և վախէ յառաջ գան : Բայց ան առաքինութիւնները՝ որոնց համար մարդոցմէ հատուցման ակնկալութիւն չենք ըներ , անոնք են մեր առ Ըտուած ունեցած սիրոյ և հնազանդութեան յարմար և ճշմարիտ վկայութիւնը : Ընոր համար է որ այս առաքինութիւնները իբրև ճշմարիտ բարեպաշտութեան ապացոյց յայտնուած են : Տես Տէրոջը վերջին դատաստանին վրայ ծանուցածները : Ը-տի. Բ. 40. “Որովհետև առ իմ եղբայրներուս պինտ պզտիկներէն մէկուն ըրիք՝ ինծի ըրիք” :

Ըյս գիտնալու է թէ բարեսիրութեան օրէնքը մարդոց կը արուի իբրև մարդ . պսիւնքն , առանց նկատելու մարդոց մէջ եղած վաղանցիկ ցարաբերութիւնները : Ըոգ չէ թէ ազգական եղեր և թէ օտարազգի , թէ քաղաքացի և թէ օտարական , թէ քրիստոնեայ և թէ անհաւատ .

բաւական է որ մարդ է , և մարդ ըլլալով Մատուցոյ օրէնքովը իրաւունք ունի բարեսիրութեան կանոնին օգուտները վայելելու : Մանաւանդ՝ զանիկայ մեզի կապող կապերը որքան քիչ ըլլան , բարի գործքը ևս փառաւոր կ'ըլլայ՝ ինչու որ այսպիսի պարագաներու տակ է որ հատուցման յոյս չունենալնիս կը , յայտնուի և անշահախնդիր ըլլալնուս ալ յայտնի փորձ մըն է :

Ըովարդ* մարդասէրը թէ որ միայն Մեզդիոյ բանտերուն տես ելլէր՝ իրեն մեծ ազնուականութիւն պիտի սեպուէր , հապա ո՞րքան գերազոյն ազնուականութիւն մը եղաւ իրեն Վազդիոյ բանտերուն ալ տես ելլելը՝ որ ան ատենը Մեզդիոյ մեծ թշնամին էր : Եւ որ բարեսիրութեան պատճառաւ հայրենեացը մէջ անգամ մեռնիլը մեծ փառք կ'ըլլար իրեն , հապա ո՞րքան առաւել փառք եղաւ հայրենիքէն հեռի երկրի մէջ՝ Թաթարիստանի Վերսոն քաղաքը մեռնիլը . քաղաք մը՝ որուն անունը հիմա կը յիշատակուի միայն անոր համար որ ականատես եղաւ այնպիսի անձի մը բարեսիրական գործոցը և կը պահէ անոր մնացորդը մինչև ցառաւօս յարութեան :

Եթէ այս պատուէրը մարդոյ տրուած է , պատճառ մը չենք տեսնիր թէ ինչո՞ւ ազգերն ալ նոյն պարտականութեանց տակ պիտի չըլլան : Մենք ալ , իբրև անհատներ իրաւու հետ՝ բարեսիրութեան

* Յե՛տ ՚ի Շրիմառն Պիտանի Գիտիւնոյ 1845 թի- 56. Փիտրոսոյ :

սկզբունքով վարուելու պարտական են : Այսինքն իրենք քաղաքականութեան հիմնական և գլխաւոր սկզբունքը ընելու են իրարու աղէկութիւն ընելը այն ամէն միջոցով , որ Աստուած իրենց ձեռքը տուեր է :

Յաջորդ գլխուն մէջ ապերջանկաց , չարերուն և վնասակարաց ըլլալէք բարեսիրութեան վրայ պիտի խօսինք :

Հարցումն :

1. Աթէ ուրիշները վնասելէն ետ կենանք նէ , մեր բոլոր պարտականութիւնները կատարած կ'ըլլա՞նք : ()րինակով մը բացատրէ :

2. Աթէ մինակ վնասելէն ետ կենանք . ի՞նչ պարտականութիւն ըրած կ'ըլլանք , և ի՞նչ պարտք զանց առած կ'ըլլանք :

3. Ի՞նչ համարումն կ'ունենաս անոնց վրայ որ ուրիշներուն համար բան մը չեն ըներ . բայց միայն վնասելէն ետ կը կենան :

4. Ի՞նչ համարումն կ'ունենաս անոնց վրայ , որ ամենուն թէ թշնամի եղեր է թէ բարեկամ կըրցածին չափ բարերարութիւն կ'ընեն :

5. Այս զգացումներէն ի՞նչ կը սորվիս :

6. Մեր օրհնեալ Փրկչին կանոնը ի՞նչ է այս բանին վրայ :

7. Մեր օրհնեալ Փրկչին օրինակը ի՞նչ էր :

8. Աստուծոյ գէպ 'ի մեզի ունեցած օրինակէն ի՞նչ կը սորվիս :

9. Խե որ Աստուած մեզի պարգև չար ու

միայն ինչ բանի որ արժանի ենք՝ այն տար, մեր վիճակը ի՞նչ կ'ըլլար :

10. Լստուծոյ մեզի ըրած շնորհացը որո՞ն իրօք արժանի ենք :

11. Լստուած մեր յանցանքներուն թողութիւն տալը ուրիշներուն յանցանքները թողելնուս հետ ի՞նչպէս կապեց :

12. Ո՞ր տեսակ առաքինութիւնը Լստուծոյ խիստ հաճելի է, ա՞ն որ փոխադարձ կը գործենք, կամ ան՝ որ բարեսիրութեամբ կը գործենք :

13. Բանի՞ պատճառ կրնաս տալ այս բանին :

14. Բարեսիրութեան պարտականութիւննիս որքան կ'ընդարձակի :

15. Ի՞նչ կերպով ազգաց ալ կը վերաբերի բարեսիրութեան օրէնքը :

16. Թէ որ մարդիկ այս սկզբունքով վարուէին իրարու հետ, պատերազմներուն վրայ ի՞նչ ներգործութիւն կ'ըլլար :



Գ Լ Ո Ւ Խ Ի



Յ Օ Գ Ո Ւ Ն Ժ Ն

Կարօտեաց Բարեսիրտիւն :

Մարդ մը կարօտեալ կրնայ ըլլալ կամ աղքատութեան կամ հիւանդութեան կամ ծերութեան կամ ազիտութեան պատճառաւ :

4. Լստապտուիւն : Ինչ հանրապէս մինակ աղքատ

տութիւնը մարդս ողորմութեան արժանի չընէր՝ եւ թէ աշխատելու կարողութիւն ունի : Թէ որ մարդ մը ապրելու միջոցներ չունի , թող աշխատի որ գտնէ : Լ՝յսպիսի պարագայի մը մէջ ընդհանրապէս պարտաւոր ենք միայն անանկ մարդուն գործք տալ , որ իր ապրուստը ճարէ : Վ՛անգի զանիկայ անգործ պահելը ոչ իրեն օգտակար է և ոչ ընկերութեան : Դ՛մանապէս է Լ՛ստուծոյ բարեսիրութեան ընթացքն ալ : Լ՛ստուած մեր ապրուստը կուտայ՝ կերակուր և հունձք և այլն , բայց առ բաները կը շնորհէ իբրև մեր աշխատութեանցը փոխարէն : Դ՛,ակ Պօղոս առաքեալը կը սորվեցընէ թէ «Լ՛ն որ չաշխատիր , թող չուտէ» :

Սակայն բացառութիւններ կան : Կրնայ ըլլալ որ ընտանիք մը Լ՛ստուծոյ նախախնամութիւնով աշխատութեան միջոցներէն զրկուի : Լ՛յսպիսի դիպուածներ , կը պատահին նաւաբեկութենէ , հրկիզութենէ , երբեմն ալ գործքի պակասութենէ և այլն : Ընդհանրապէս թէ որ մարդ մը Լ՛ստուծոյ նախախնամութեամբ ոչ թէ իր ծուլութեամբ կարօտեալ կ'ըլլայ . անոր բարեսիրութիւն ընելու ենք՝ սեպելով որ Լ՛ստուած զանիկայ մեզի ցուցուց : Ուրիշ բացառութիւն մըն ալ այս է՝ որ երբեմն ծնողաց աշխատանքը բաւական չըլլար իրենց տղոցը սնունդին : Ինչպէս երբոր ոմանք քանի մը զակերներով ողբեարի կը մնան . կամ ևս խղճալին , երբոր տղաք առանց հօր և առանց ժոր որբ կը մընան : Լ՛սանկ դիպուածի մէջ եթէ բարեսիրութեամբ

օգնութիւն չունենք, անոնցմէ ոմանք կամ բոլորը կը կորնչին: () օգնութեան առիթներ, կամ պատճառներ են:

2. Հիւանդութիւն: Հիւանդութեան ժամանակ Մատուած մարդու աշխատելու կարողութիւնը իրմէն կը վերցունէ, և ինքը հիմա ուրիշ ժամանակ իր աշխատութեամբ վայելածէն աւելի հաստութեան կարօտ է: Մասնկ ժամանակ հարուստը առանց օգնութեան նեղութիւն կը կրէ, սւրմեաց աղքատը: Մասնկ ժամանակներ երբոր հարկ կ'ըլլայ որ ողորմութիւն ընենք. ոչ միայն ստակով, այլ անձամբ ալ օգնութիւն ընելու ենք:

3. Ծերութիւն: Թէպէտև ծերութիւնը միշտ հիւանդութիւն չբերեր, բայց ընդհանրապէս անկար և անօգնական կ'ըլլան ծերերը: Ինչ որ կրօնանք ընել իրենց ցաւերը մեղմելու և իրենց ծերութեան բեռները թեթեւցունելու համար, յայտնի է թէ բարեսիրութեան պարտք է, և մէկ կերպով ալ որդիական սէր: Մ. հա այս գլխուն մէջ պատմածներս են որ բարեսիրութիւն կամ ողորմութիւն կը պահանջեն մեզմէ: Եւ անոնց կանոններն են ասոնք:

1. Մենք որ կամ հիւանդութեամբ կամ ծերութեամբ աղքատ են և ամենևին չեն կրնան աշխատիլ, ամենայնիւ օգնելու ենք անոնց:

2. Մենք որ կամ հիւանդութեամբ կամ ծերութեամբ և կամ որբութեամբ քստ մնասին կրնան ինքզինքնին հոգալ, անոնք ալ օգնութեան կա-

բօս եւ բայց ըստ մասին :

3. Անոնք որ կարող չեն անմիջապէս գործք գտնելու, պետք է որ առ այժմ՝ օգնուին . բայց մեկու մը ամենէն մեծ բարերարութիւն ընելը, անոր գօրծ գտնելն է՝ որ ինքզինքը հոգայ :

4. Անոնք բարերարութիւն մըն է անանկ միջոցներ պատրաստել ինչպէս գանձարան խնայութեան* և այլն, որոնցմով աղքատները կարող ըլլան իրենց սակաւիկ դրամներն պահելու և բազմապատկելու : Ասանկ միջոցները անկարօս և անկախ կ'ընեն աշխատասէրները . և ասանկով հազարաւորներ հարստութեան ճամբուն մտան :

Հիմա բարեսիրութիւն ընողներուն վրայ խօսինք :

1. Եթէ ամէն մարդ պարտական է բարեսիրութիւն ընելու : Ամէն մարդ կարող չէ ուրիշներուն ստակով օգնութիւն ընելու, բայց որ և իցէ կերպով ներդաշններուն օգնութիւն մը կրնայ ընել, և վնասուածներուն կարեկցութիւն՝ ցուցընել : Ինչպէս որ մարդիկ և կանայք, անանկ ալ տղայքը կարող են բարեօքը ըլլալ : Եթէ խաղաղքի առած ստրկին մէկ մասը հիւանդաց օգնութիւն շնորհէին, կամ իրենց վայելած հանգրստութիւններուն կամ բարիքներուն հաղորդ ընէին խեղճ դրացիներնուն, ինքզինքնին առաքի-

* Յիս. Ի Բազմակց. 150 Երեւ. 1843 :

նութեան մէջ յառաջացընելու շատ ընտիր բան մը կ'ընէին :

2. Միշտ ան կերպ բարեսիրութիւնները լաւագոյն սեպուելու է , որ բարերարը ինքն անձամբ օգնութիւն կ'ընէ , ոչ թէ ուրիշին ձեռքով : Խօսեալեալ անձամբ ողորմութիւն ընելն ուրիշներուն ձեռքովը ընելէն շատ աղէկ է , բայց ուրիշին ձեռօքը ընելը բնաւ ողորմութիւն չընելէն աղէկ է : Մեր նեղեալ ընկերներուն անձամբ կարեկից ըլլալէն աւելի բան մը չկայ՝ որ լաւագոյն ներգործութիւն ունենայ մեր արտերուն վրայ , և մեր առ Մատուած Երախտագիտութիւնը զարթուցանէ :

3. Ի վերջոյ , որովհետեւ ողորմութիւնն ալ իբրև աղօթք կրօնական պաշտօն մըն է , վասն որոյ որքան որ կարելի է առանձին ըլլալու է : Մեր ողորմութիւնը գաղտուկ ըլլալու է և մեր շայրը որ գաղտուկը կը տեսնէ մեզի յայտնապէս հատուցումն պիտի ընէ :

4. Տգիտութիւն : Ըմէն մարդ յայտնի կը տեսնէ թէ որչափ դժբաղդութիւն է մէկուն որ կարդալ գրել և հաշիւ ընել չգիտեր : Ըսանկ տգէտ մարդ մը հազիւ հազ միջոց ունի գիտութիւն սորվելու . և ոչ Մատուծոյ խօսքերը կրնայ կարդալ , ոչ ալ ինչ և իցէ օդատկար բան մը : Ըլրեմն Մատուծոյ ո՞րքան հաճելի գործք պիտի ըլլայ , որ այս բաները գիտցողները տգէտներուն սորվեցունեն : Ըլստի Մատուծոյ առջին ի՞նչպէս ընդունելի գործք է , և գիտցողներուն ի՞նչ

Տե՛ս պարտականութիւն է որ շուրջերնին ժողովեն՝ կարգաւ գրել և ուսմունք չգիտցողները, մանաւանդ Սուրբ Գրոց տեղեկութիւն չունեցողները թէ՛ տղայք և թէ՛ մարդիկ, և անոնց սորվեցունեն : Ըն՝ մարդը որ ասանկով տղաքը կամ մարգիկը սգիտութեան խաւարէն կը հանէ և մոլութենէն կ'ազատէ, իր բարերարութիւնը անպատմելի է :

Ո՞րքան հաճելի և ցանկալի է տեսնել որ՝ պատանիները իրենց ընդունած պարգևներուն համար զանոնք ուրիշներուն շնորհելովն իրախտագիտութիւն կը ցուցնեն :

Հարցման 4 :

1. Բսենք թէ զօրաւոր և առողջ մարդ մը ստակ կ'ուզէ, պարտակա՞ն եմ տալու ստակ չունենալուն համար : Ինչո՞ւ :

2. Ի՞նչ ընելու եմ անոր :

3. Գործք գործել տալը աղէկ է թէ՛ ձրի ըստակ տալը : Ինչո՞ւ :

4. Ի՞նչ օրինակով կրնաս արդարացընել այս ըսածդ :

5. Բսենք թէ իմացանք որ այս մարդուն տունը և բոլոր ունեցածը երէկ գիշեր այրեր է : Ի՞նչ ընելու պարտական եմ :

6. Բսենք թէ որբեւարի կին մը քանի մը որբեր ունի, և օրը տասը դահեկան պէտք է որ զանոնք պահէ, բայց ինքը միայն հինգ դահեկան կրնայ շահիլ, անոր օգնութիւն ընելու եկք. և որքան :

7. Կեղեակներուն և հիւանդներուն ի՞նչ պարտականութիւն ունինք :

8. Բարիստոս ի՞նչ ընել կը սորվեցընէ մեզի . ուր տեղ գրուած է :

9. Իր կանոնը ստակ տալէն ուրիշ բան կը հրամայէ՞ :

10. Աղքատներն ալ պարտակա՞ն են բարեսէր ըլլալու, և ողորմութեան գործքեր գործելու :

11. Առանց ստակի ի՞նչպէս բարեսէր կրնան ըլլալ :

12. Ինչո՞ւ համար նեղեալին անձամբ օգնութիւն ընելը ուրիշին ձեռօքը ընելէն լաւագոյն է :

13. Ողորմութիւնը ինչո՞ւ գաղտուկ ըլլալու է :

14. Ուրիշներու դաստիարակութիւն տալով ալ ողորմութիւն կ'ըլլայ՞ :

ՅՕԳՈՒԱԾ Բ

Ռարեւիդուսիւն դէպ 'ի շարերը :

Ո՛րքան որ խօսեցանք՝ դէպ 'ի ապերջանիկս ունեցած պարտքերնուս վրայ էր . բայց հիմա չարերուն ունեցած պարտականութիւններնուս վրայ պիտի խօսինք :

Տեսանք թէ հիւանդութեամբ, ծերութեամբ կամ աղքատութեամբ ապերջանիկ եղողներուն օգնութիւն հասցընելու ենք . բայց չար մարդը խիստ ապերջանիկ է, քանզի մեղքի չափ թշուառութիւն չկայ, և ուրիշներուն չարութիւն ընելու պատճառ կ'ըլլայ : Տարափոխիկ ախտ ունեցող մար-

էսուն նման է, որ իր շուրջը եղողներուն կը հաղորդէ: Գէշն ան է որ՝ այս կենաց ցաւերը մահուան ժամանակ կը վերջանան, բայց մեղաց ցաւերը մահուան ժամանակը խիստ կը զօրանան, և անկէց ետքը յաւիտեանս անբուժելի կը մնան:

Ըրդ՝ բոլոր այս խորհրդածութիւնները կը սորվեցունեն մեզի թէ չար մարդիկ ամէն ուրիշներէն աւելի խղճալի են: Աւրիմն մեր մասնաւոր պարտաւորութիւնն է զանոնք առաքինի ընելու ջանալ:

Հատերը կ'ըսեն որ, եթէ մէկը չար է՝ զանիկայ ձգելու և փախչելու ենք: Ըփկայ մէկ կերպով ուղիղ է. իրեն ընկեր ըլլալու չենք. և անոր չար սովորութիւնները սորվելու վտանգին մէջ մտնելու չենք. և թէ որ մէկը անառակ է անոր հետ ընկերանալու չենք. ասոնք բոլորը ուղիղ են: Բայց ասոնք պատճառ չեն որ արբեցողք իր արբեցութենէ, և անառակը իր անառակութենէ ետ չդարձունենք: Աւրիշ բան է մարդիկ մեր բարեկամները և ընկերները ընել, և ուրիշ է անոնց աղէկութիւն ընել. ջանալ:

Չարերուն ունեցած պարտականութիւննիս հետեւեալներն են:

Ա. Արբոր նեղութեան և վիշտի մէջ են ինչպէս որ ուրիշները նոյնպէս ալ ասոնք խղճալու ենք: Գուցէ անկարելի է որ անոնց օգնութիւն ըրած ժամանակնիս նոյն հաճութիւնը զգանք, որքան որ առաքինիներուն օգնելու ժամանակնիս զգանք: Բայց աս ալ չցուցըներ թէ ասոնց բա-

րեսիրութիւն ընելու պարտական չենք :

Բ. Խոյր զօրութիւնով ու ամէն կերպով զանոնք մոլութենէ ետ դարձընելու ջանալու ենք : Եւ ասիկայ կ'ըլլայ .

1. ()րինակով. Ընաքինութեամբ գործելով՝ ամենաբարի և շատ անգամ խիստ ազգու յանդիմանութիւն կուտանք մոլիներուն : Ուստի թէ որ անոնց ընկերութեանը մէջ գտնուինք, միշտ անվեհերութեամբ ցուցընելու ենք, թէ առաքինութեան կողմանէ ենք և ատող մոլութեան : Թէ պէտեւ կ'ըլլայ որ մեզ ծաղր ընեն և անարգեն, բայց անոնց ունեցած սերերնիս կը սորվեցունէ՞ որ համբերութեամբ տանինք իրենց լաւութեանը համար :

2. Խրատով. Այսելուչ խօսակցութեամբ ջանալու ենք որ իրենց ընթացքին չարութիւնը իրենց իմացընենք և ստիպենք ու քաջալերենք զանոնք որ առաքինութեան դառնան : Ըստ տեսակ խրատները ընդհանրապէս շատ ներգործութիւն ունին թէ որ առանձին տրուին :

3. Արովհետև մարդիկը առաքինութեան դարձունող ամենէն ազգու միջոցը կրօնից ճշմարտութիւններն են, վասնորոյ՝ զանոնք մարդոց մէջ տարածելուն ամէն յարմար միջոցները բանեցունելու ենք՝ ոչ միայն խօսակցութեամբ հապա կրօնական գիրքեր, և մանաւանդ Սուրբ Գիրքը տարածելով :

4. Եւ որովհետև բոլոր մարդիկ մեր եղբայրներն են, և բոլորն ալ բարոյական օգնութեան

կարօտ են, վասնորոյ յայննապէս պարտքերնս եւ չարերը որքան որ կարելի ե իրենց չարութենէ ետ գարձընել: Եւ որովհետեւ մարդոց մեծ մասը փրկութեան ճամբուն վրայօք բոլորովին ազէա են, վասնորոյ Սուրբ Գիրքը անոնց մէջ տարածելու պարտական ենք:

5. Մարդոց միտքը այնպէս խաւար է և այնպէս յամառութեամբ հակած է չարութիւն գործելու, որ այս տեսակ բարեսիրութեան մէջ յաջողութեան շատ քիչ յոյս կրնանք ունենալ առանց բարձրագոյն զօրութեան մը օգնականութեանը: Եւստուած խոստացաւ այս օգնութիւնը շնորհել թէ որ իրմէն խնդրենք: Ուստի մեր մասնաւոր պարտքն է աղօթել որ Եւստուծոյ Հոգւոյն զօրութիւնը մեր և մարդկային ազգին օգուտը նորդներուն աշխատութեանցը օգնէ:

Հարցումն է:

1. Չար մարդը ինչո՞ւ բարեսիրութեան կարօտ է:

2. Ինչո՞ւ մասնաւորապէս կարօտ է:

3. Թի՞ է որ պարտական ենք չարերէն փախչել, ինչպէս պարտականութիւննս կ'ըլլայ անոնց ետեւէն ըլլալ և զանոնք ուղղել:

4. Ի՞սկնք թէ չար մարդ մը հիւանդ է կամ խեղճ, իր չարութիւնը պատճառ կրնայ ըլլալ որ անոր բարեբարութիւն չընենք:

5. Թի՞ է որ մարդիկ չար են, անոնց օրինակին հետեւելո՞ւ ենք:

6. Իրենց չարութիւնը ի՞նչ պատճառ կուտայ՝ որ անոնց բարի օրինակ ըլլանք :

7. Մարդիկ առաքինի ըլլալու համոզելը բարերարութիւն է : Յուցուր թէ ի՞նչ կերպով բարերարութիւն կ'ըլլայ :

8. Մարդիկ լաւագոյն ընելու ամենէն աղէկ և ազդու միջոցները որո՞նք են :

9. Բոլոր մարդիկ այս տեսակ բարերարութեան կարօտ են :

10. Եղէկութիւն ընելու սահմանը ո՞րքան կ'ըդարձակի :

11. Պատճառ ունի՞նք յուսալու թէ Մատուած մասնաւոր կերպով մը մեր ջանքերուն պիտի օգնէ թէ որ իրմէն խնդրենք :

12. Աւրեմն առ Մատուած կատարելու ի՞նչ պարտականութիւն ունինք :

ՅՕԳՈՒԱԾ Գ

Բարեխիչութեան առ զուսուխարս :

Բսենք թէ մէկը փնտսակար է. այսինքն, չէ թէ միայն չար է, այլ մեզի ալ փնտս կը հասցընէ : Սեր պարտականութիւնը ի՞նչ է անոր :

1. Որովհետև գործքը չար է, վասնորոյ պէտք է բարոյականապէս ատենք այն գործքը և ամէն պարագաներու մէջ մոլութիւնը մերժենք և առաքինութիւնը սիրենք :

2. Թէ որ բուն գործողը նայելու ըլլանք, որովհետեւ ինքը չար է, անշուշտ ապերջանիկ ալ է. վասնորոյ մեր պարտականութիւնն է զանիկայ խըղճալ և թէ որ կարելի է ուղղել:

3. Եւ որովհետեւ վնասը դեպ'ի մեզի է, վասն որոյ պարտական ենք ներել: Ասիկայ մասնաւորապէս մեր օրհնեալ Փրկիչը մեզմէ կը պահանջէ, ըսելով. « Թէ որ գուք մարդոց ըրածները չներէք, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի պիտի չներէ»: Աւստի այս հրամանին չհնազանդողը իր փրկութիւնը կը կորսնցնէ:

4. Որովհետեւ վնասը մեզի է, վասնորոյ մեզ վնասող մարդուն աղէկութիւն ընելու մասնաւոր պատահութիւն մը կու տայ մեզի՝ բարի օրինակ ըլլալով անոր: Աւստի պարտական ենք անոր իր չարութիւնը բարութեամբ յաղթել. այսինքն, մասնաւոր քաղցրութեամբ վարուիլ անոր հետ և իր երջանկութեանը յատուկ նկատում ցուցնելով: Մեր օրհնեալ Փրկիչն ալ այսպէս կ'ըսէ. « ()րհնեցէք ձեզ անիծողները բարի ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն. և աղօթք ըրէք անոնց վրայ, որ ձեզ կը չարչրկեն թէ կը հալածեն»:

Այս կերպով եռօվութիւնը դադրեցնելը վրէժխնդրութիւն ընելէն օրքան աղէկ է և գերազանց: Այս կերպով երկու կողմիները լաւագոյն կ'ըլլան, բայց վրէժխնդրութեամբ, չարագոյն կ'ըլլան: Մէկ կերպովը վնասները յատեանս կը բազմանան. միւս կերպովը՝ վնասները

անմիջապէս կը դադարին՝ միայն բարութիւն գործելով :

Մակայն ասիկայ չարգիլեր մեզ՝ մեղի և ընկերութեան դէմ գործող անձինքները պատժելու յարմար միջոցները գործածելէն : Եւ որ մարդ մը տունս մտնէ բռնութեամբ, ըսածներէս չհետևիր. թէ զանիկայ բռնել պատժել տալու միջոցները պիտի չբանեցընեմ. եթէ ոչ բոլոր իր կեանքը գողութիւն՝ յափշտակութիւն ընելով պիտի անցընէր, ոք իրեն միանգամայն շատ ուրիշներուն մեծ դժբաղդութիւն կ'ըլլար : Իսկ քանի որ ինծի դէմ ըրած յանցանքին կամ փաստին ներեմ, և ամէն միջոց և հնարք բանեցընեմ զանիկայ դարձընելու, անոր և ուրիշներուն ունեցած պարտականութիւններս զիս կը պարտաւորեն որ ամէն ջանք ընեմ որ անիկայ չշարունակէ իր չար ընթացքը :

Իսկ ընդհակառակն՝ թէ որ մարդը պատժուի ալ, ընկերութեան պարտքն է, այն չար անձը բարիի դարձընել. ուստի՝ բանտարգելոց հետ մարդկութեամբ վարուելու է միշտ, և հարկաւոր հանդերձը և կերակուրը տալու է, և զանոնք առաքինի ընելու ամէն միջոցը բանեցընելու է : Ըսանկով բանտերը բարոյական ուղղութեան դպրոցներ պիտի ըլլան, և չարերուն միանգամայն ժողովրդոց ամենամեծ կարելի պարգև սեպուելու են :

Չարագործաց ուղղութեանը համար սահմանուած անդերը ժողովրդոց շատ յարգի պարգև մըն է, և հարիւրաւոր պատանիները կորուստէն կ'ա-

զատեն, թէ որ աղէկ հոգաբարձութիւն ըլլայ :
Բոլոր բանտերը այս ընթացքը և այս նպատակը
ունենալու են :

Հարցումներ :

1. Ա՞նասակար մարդ ըսելով ի՞նչ ըսել կ'ուզես :
2. Ի՞նչ զգացումն ունենալու ենք չար գործքի
մը վրայ՝ որով վնասուեցանք :
3. Ի՞նչ զգացումն ունենալու ենք բուն իսկ
չարութիւն գործող անձին վրայ :
4. Բուն վնասուողը մենք ըլլալնուս համար
ի՞նչ մասնաւոր պարտք ունինք ընելու :
5. Ա՞նասէ մը ի՞նչ աղէկութիւն կրնանք հանել :
6. Կայ՞ անանկ առաքինութիւն որ առաւել
վնասով քան թէ ուրիշ պատճառով կը պարտա-
ւորինք 'ի գործ դնելու :
7. Ա՞րէժինդրութիւն ի՞նչ ըսել է :
8. Ա՞րէժինդրութեան և չարը բարիով յաղ-
թելու օրինակներ տուր :
9. Ո՞րը ամենալաւ ազդեցութիւն ունի վնա-
սակար անձին :
10. Ա՞նասը փոխարինելու լաւագոյն կերպը
որն է :
11. Ըսիկայ կ'արգիլէ՞ մեզ ընկերութեան օ-
րէկները աւրող անձը պատժելէն :
12. Չարագործը պատժելը բուն իր օգուտին
համար է թէ չէ :
13. Բանտերը ի՞նչ նպատակով շինուելու և
կառավարուելու են :

Գ Լ ՈՒ Խ Գ



Պարտականութիւն դէպ ՚ի անասունները :

Անասուններն ալ մեզի պէս զգայուն կենդանիներ են . պսիներն , անոնք ալ հաւանական է որ մեր զգացածին չափ հաճութիւն և ցաւ կ'զգան : Վիշաւորապէս բարոյական կարողութիւնով կը տարբերինք անոնցմէ , վասն զի չարը և բարին չեն կրնար որոշել :

Սակայն մեզի հաւասար չեն , վասնորոյ փոխանակութեան իրաւունք չեն կրնար պահանջել : Ազատութիւն ունինք անոնց երջանկութեան միջոցները պակսեցընելու կամ անոնց կեանքը մեր երջանկութեանը համար վերցընելու՝ թէ որ հարկաւոր ըլլայ , և մեր անմեղ հանգստութեանց համար ըլլայ :

Աստուած զանոնք մեզի տուաւ կերակուրի համար , վասնորոյ անոնց կեանքը մեր իշխանութեանը տակը գրաւ : Իսպց իրաւունք չունինք որ այս իշխանութիւնը Աստուծոյ սահմանածէն ուրիշ գիտաւորութեամբ կամ կերպով գործածենք , ինչպէս .

1. Անոնք կրնանք զրկել իրենց կեանքէն կերակուրի համար թէ որ կարօտինք : Եղ մը կրնանք մորթել կերակուրի համար . բայց զբօ-

սանքի համար մորթելու իրաւունք չունինք . մէջ կը կրնայ եղջերու մը կամ որ և իցե կենդանի մը զարնել թէ որ միսը կերակուր կամ մորթը հանգերձ շինելու կը կարծաի , բայց իրաւունք չունի որ միայն քաջ նշան առնել սորվելու համար զարնէ : Ասանկ ալ թռչուն մը իրաւամբ կրնանք զարնել կերակուրի համար , բայց զբօսանքի համար իրաւունք չունինք :

2. Աշխատցընելու համար կրնանք գործածել , ինչպէս ձին կը գործածենք :

3. Բայց զանոնք գործածելու ժամանակնիս պարտական ենք քաղցրութեամբ վարուիլ անոնց հետ և անպիտան աշխատութեամբ և անհարկ ցաւերու մէջ ձգելու չենք : Թէ որ խիստ հարկաւոր է որ ձի մը սաստիկ վազընենք մարդկային կեանքը պահելու կամ հարկաւոր գործք մը կատարելու համար , ազատութիւն ունինք ընելու : Բայց իրաւունք չունինք որ մեր հաճութեանը կամ զբօսանքի համար կենդանին խիստ կերպով գործածենք :

4. Ուստի բոլոր զբօսանքները որ ձի վազընելէն , ցուլերը մարտնչեցընելէն և ագազաղները կռուեցընելէն կը հանենք , լոկ չարութիւններ են : Աստուած բնաւ այսպէս իրաւունք մը մեր ձեռքը չառաւ : Առաւել անխիղճ և զզուելի տեսարան չեմ կրնար խորհիլ՝ քան զայն՝ որ բանական էակներու բաղմութիւնները կը ժողովին և երկու անբան կենդանեաց իրարու պատճառով

Թշուառութեամբը կ'ըբանուն՝ կը զուարճանան :

Յիրաւի անբան կենդանեաց գազանութեան և հատաղութեան տեսարանը ամէն բանէ աւելի ուղղակի ազդեցութիւն ունի զմարդ ևս արտել չարացունելու :

Հարցումն 4 :

4. Կենդանեաց և մարդոց տարբերութիւնը ի՞նչ է :

2. Ի՞նչ բանով կենդանիները և մարդիկ իրարու նման են :

3. Ի՞նչ իրաւունք ունինք կենդանեաց վրայ :
() ըինակ մը տուր :

4. Ուղեղ նշան առնելդ ստուգելու համար՝ Թռչունի մը զարները իրաւունք է :

5. Ի՞նչ պարագաներու տակ Թռչուն մը զարները անմեղ է :

6. Ըսենք թէ բժիշկ մը կանչուեցաւ որ շուտով հիւանդ մը նայի չէ նէ պիտի մեռնի : Իրաւունք ունի՞ բժիշկը որ իր ձին մեռնելու չափ վազըրնէ, հիւանդը բժշկելու համար :

ՅԵՆԿ

ՄԸՍՆ Ը

ԵՐԵՍ

| | | |
|-------|--|----|
| ԳԼ Ը | Բարոյական Օրենք, Գործք և Գիտ- փաստաբանական | 4 |
| Յօր Ը | Բարոյական Օրենք | " |
| Յօր Բ | Բարոյական Գործք և Գիտաբանական | 6 |
| ԳԼ Բ | Խղճման | 44 |
| Յօր Ը | Ի՞նչ է խղճմանը, և խղճմանը մեզ է՞նչպէս կը խրատէ կամ կ'զգուշացնէ | " |
| Յօր Բ | Խղճմանը ի՞նչ կերպով յառաջ կ'եր- թայ կամ կը զօրանայ . կամ թէ է՞նչպէս կը ճատի կամ կը արհարանայ | 47 |
| Յօր Գ | Բարոյական զարուստ կանոններ | 27 |
| ԳԼ Գ | Մարդ զարան է թէ քարէ քորձեց՝ երբոր խղճմանը շինէր շանդիմաներ | 32 |
| ԳԼ Գ | Երջանկաբան | 36 |
| ԳԼ Ե | Խղճմանի մեծ անխարստաբանը | 44 |
| ԳԼ Զ | Բնական լուսոյ բնութիւնը և պատու- նութիւնները | 46 |
| ԳԼ Է | Սուրբ Գիտք | 51 |

ՄԸՍՆ Բ

Մարդուն՝ աւ Լստուած և աւ ընկեր
ունեցած պարտերը 57

| | | |
|-----|--|-----|
| | Սեր առ Լսարուած , իմ Լսարուած- պաշտոնիւն | 58 |
| ԳԼ | Ը ԳԼսարուած սիրելու պարտոց լրայ | " |
| ԳԼ | Բ Ըջթի | 73 |
| Յօր | Ը Ի՞նչ է Ըջթի | " |
| Յօր | Բ Յազգո պարտոց Ըջթից | 78 |
| Յօր | Գ Ըջթից ժոռոքը | 82 |
| ԳԼ | Գ Յազգո պահպանութեան Շաբաթո- | 86 |
| Յօր | Ը Յազգո դրութեան Շաբաթո | " |
| | Սովորական Շաբաթ | 89 |
| | Յազգո Քրիստոնեական Շաբաթո- իմ Աւերակի | 91 |
| Յօր | Բ Աւերակի այսինքն Տերականի օրը պա- հելու եղանակը | 94 |
| ԳԼ | Ը Սեր առ Սարգ | 99 |
| | Սարգուս առ Լսարուած ունեցած պար- տոցը լրայ խօսելն ետքը հիմա պիտի խօսինք ան պարտոցը լրայ որ ճարգ՝ առ ճարգ ունի : Ըյս պարտերը եր- չուտի ին բաժանի , Ա . Պարտակա- նութիւն զոխադարձութեան : Բ . Պար- տականութիւն թարեւերութեան | " |
| | Պարտականութիւն զոխադարձութեան | " |
| ԳԼ | Բ Ընկնական ազատութիւն և զանիկայ խա- ժանելու եղանակը | 107 |
| Յօր | Ը Ըղծումն իմ խաղանումն անկնական ազատութեան անհատից յետո | 109 |

Յօր Բ. Եղջոսն իմ խոփանումն անյնական
աչարասնեան ընկերասնեան յերօտ . . . 114

ԳԼ Գ. Սրացոսածի շրայ 120

Յօր Ե. Սրացոսածոց իրասունիս սկիզբն ու
քնասնեանը ”

Յօր Բ. Սրացոսածոց իրասունիս եղծանող իմ
աբող իբրպեր 125

Յօր Գ. Սրացոսածոց օրենի՝ երբոր փոխարենը
նեխան է և փոխարսոսնեանը արև-
դական . իմ գնող է ա ծախող է օրենի 128

Յօր Գ. Սրացոսածոց ծամանախաոր փոխարսոս-
նեան իմ փոխարսոսնեան 134
Փոխարսոսնեան , իմ ՚ի շարչոս արալ . 137
Լ. պահովագրոսնեան 139

Յօր Ե. Փոխարսոսնեան , երբոր փոխարենը նե-
խան չէ 143

ԳԼ Գ. Բարոյական արդեսոսնեան 147

ԳԼ Ե. Համբաւ իմ Լնան 152

ԳԼ Զ. Ղշմարտախօսոսնեան 159

Յօր Ե. Օրոյոց 160

Յօր Բ. Խոսարժանի և արալինի 166

ԳԼ Է. Պարտ և իրասունի ծնողաց 172
Ե. Ննողաց պարտը 173
Բ. Ննողաց իրասունի 177

ԳԼ Ը. Պարտականոսնեանի և իրասունի զա-
ւակաց 181
Լննալանդնեանի րե՛ս Լսոսածոց

| | | |
|------|---|-----|
| | Բարխուշի՛ն՝ շ | 184 |
| | Ե. յ՝ էրաննց և պարտոց պահու- նի՛նք | 186 |
| Գ. Լ | Թ Վազախացոց պարտ | 189 |
| Յօդ | Ե Կառաւարո-նի՛նն | „ |
| Յօդ | Թ Կառաւարո-նեան շանազան յետ | 197 |
| Գ. Լ | Ե Բարեօրոհան պարտոց շրայ | 201 |
| | Բարեօրո-նի՛նն | „ |
| Գ. Լ | Թ Յօդ Ե Կարծօրելոց քարեօրո-նի՛նն | 212 |
| Յօդ | Թ Բարեօրո-նի՛նն գեղ՛ի շարերը | 218 |
| Յօդ | Գ Բարեօրո-նեան առ զնաստիարս | 222 |
| Գ. Լ | Գ Պարտախանո-նի՛նն գեղ՛ի անասունները | 226 |



